

Ընթացակարգ


Մարտի 6 1920 թ.

1920 թ.

1920

391.99

Ը - 66



891.542-2

Ե-77

ՅԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՅԿԱՇԷՆ — Ա. ԵԱՐԲ

ՇԻՐՎԱՆՉԱԴԷ

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԳՐԱՐԱՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԹՅՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈՒԽ
ԿԵՆՆԻԿ ԳՐԱՏՈՒՆ
1920

15.07.2013
1105 VON 8-

48340

Ներկայ պիեսի ներկայացնելու իրաւունքը
վերապահուած է Ալէքսանդր Շիրվանզադէին:
Այն անձինք, որոնք, առանց հեղինակից իրա-
ւունք ստանալու, կը ներկայացնեն պիեսը, կեն-
թարկուեն օրինական դատի: Իրաւունք խնդրելու
համար պէտք է դիմել. Tiflis — A. Chirvanzadé.



ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆԴՐԷԱՍ ԷԼԻՉԲԱՐՅԱՆ: Տեղական յայտնի հարուստներից մէկը: 55 տարեկան առոյգ եւ ամրակազմ տղամարդ, կարճ խուզած ալեխառն մազերով, ցանցառ միջուքով եւ կարմիր այտերով:

ԵՐԱՆՈՒՀԻ: Նրա ամուսինը: Ք.սհանայի դուստր, 46 տարեկան, ժամանակից առաջ թառամած, դժգոյն, նիհար կին համակրելի եւ գեղեցիկ:

ԲԱԳՐՍ: Էլիզբարեանների աւագ որդին: Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան, եռանդուն դէմքով: Ձեւերն ու շարժումներն արագ են, ոճը կտրուկ եւ դրական:

ՍՈՒՐԷՆ: Էլիզբարեանների երկրորդ որդին. 23 տարեկան կենսախինդ երիտասարդ, որի դէմքը կրում է շուայտ կենցաղի վաղաժամ հետքերը, բայց համակրելի է: Հազնուում է վերջին տարազով:

ՌՕՉԱԼԻԱ: Էլիզբարեանների մեծ աղջիկը: 24 տարեկան, բաւական գեղեցիկ, բայց չափազանց ինքնագոյն դէմքով օրիորդ: Հազնուում է միշտ շքեղ, առանց գոյների խտրութեան:

ՄԱՐԳԱՐԻՏ: Էլիզբարեանները երկրորդ աղջիկը: 22 տարեկան, մտախոհ դէմքով, արտայայտիչ աչքերով օրիորդ մի քիչ մօրը նման, բայց աւելի գեղեցիկ: Հագնուում է համեստ ճաշակով:

ԱՐՏԱՇԷՍ ՕԹԱՐԵԱՆ: Անդրէասի հանգուցեալ ընկերոջ որդին եւ նախկին որդեգիրը: 26—27 տարեկան, խոհուն դէմքով, նեարդային շարժումներով: Հագնուում է միշտ սեւ:

ՍԱՂԱԹԷԼ: Երանուհու եղբայրը եւ Անդրէասի հաւատարիմ աջակիցը: Մօտ 50 տարեկան, անվրդով, բայց խորամանկ դէմքով: Երեսը սափրուում է, քունքերի մօտ փոքրիկ մօրուսհատներ թողնելով: Հագնուում է միշտ միատեսակ—լայն վարտիկ, սեւ աթլասի արխաուղ, վրէն երկարաւուն, լայն պիջակ: Վզովը զցած է ժամացոյցի ոսկէ շղթայ: Մէջքին կապած է ոսկէ քամար: Միշտ գործ է ածում դեղին սաթի տէրոգորմեա խոշոր հատիկներով: Կօշիկները տակերը մի մատնաչափ հաստ են:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԿԱՐԻՆԵԱՆ: Անդրէասի հաշուապահը: Ժամանակից առաջ ծերացած 42 տարեկան տղամարդ: Սովորական ծառայողի միջին տիպար:

ՎԱՐԴԱՆ: Սպասաւոր էլիզբարեանների զրասենեակում: Երիտասարդ: Խօսում է Շամախու բարբառով:

ԶԱՐՈՒՀԻ: Երիտասարդ աղախին:

Գործողութիւնը կատարուում է էլիզբարեանների սանը: Մեր ժամանակի անցի:

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

Դ Ր Ա Մ Ա Չ Ո Ր Ս, Ա Ր Ա Ր Պ Դ Ա Ս Ո Վ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Անդրէաս եւ Բազրատ էլիզբարեանների պարապելու սենեակը, որ բռնում է սեպհական տան վերին յարկում անկիւնային դիրք՝ բնակարանի եւ գլրասենեակի միջև:

Միջին մեծութեամբ սենեակ: Աջ *) պատի մէջ դէպի փողոց երկու մեծ լուսամուտներ, որոնց մէջտեղում դրած է Անդրէասի դրասեղանը, վրէն, բացի գրելու պարագաներից, համարակալ, հեռախօսի ապարատ եւ էլէքտրական շարժում լամպար: Սեղանի քով, պատի կողմում մի մեծ բազկաթու, միւս կողմում՝ մի հասարակ աթոռ:

Խորքի պատի մէջ երկու դռներ, մէկը բեմի կենտրոնական ուղղութեամբ, դէպի դրասենեակ, միւսը բողոքովին ձախ, գրեթէ անկիւնում, դէպի նախասենեակ:

Ձախ պատի մէջ եւս դռներ, որոնք տանում են դէպի բնակարան: Այս դռների մօտ, դէպի աւանսցեա Բազրատի

*) Մսնօք. Աջ ու ձախը ընդունել հանդիսականների կողմից:

զրասեղանը, վրէն, բացի սովորական պարազաններից, գրե-
լու դործիքներ, գծագրութիւններ և մի քանի մասնազիտա-
կան գրքեր՝ ինժեների համար: Սեղանի ետեւում երկաթէ
զրամարկը: Խորքում, դէպի աջ—վառարան:

Պատերի տակ աստուծներ: Յատակի աջ կողմը ծածկուած է
գորգով: Լուսամուտները վարագուրուած են:

ՏԵՍԻԼ I

ՍԱՂԱԹԷՂ ԵՒ ԿՍՐԻՆԵԱՆ

Վարագոյր բարձրանալիս, Սաղաբէր, Անդրեասի գրա-
սեղանի ֆով կանգնած, հեռախօսով խօսում է: Խորքի դռները
բացում են, ներս է մտնում Կարինեանը եւ սկսում է Անդրեասի
գրասեղանի վրայ շահ դանդաղ ինչ-որ փնտրել: Այս դռները
բացուելիս հեռու երեւում է մի բարձր հաշուեսեղան, որի
ֆով կանգնած պարապում է մի երիտասարդ: Մերք ընդ մերք
երեւում են եւ ուրիշ ծառայողներ, նաեւ այցելուներ, որոնք
այս ու այն կողմ են անցնում զբաղուած դեմքերով: Գործո-
ղութեան ընթացքում, մինչեւ գրասենեակի փակուիլը, այնտե-
ղից լսում են համարակալի չխչխկոց եւ հեռախօսի զանգակի
հնչիւններ:

ՍԱՂԱԹԷՂ. (Հեռախօսով) «Համէէէ՞: Այո՛, շուտով կը-
գայ: Հը՞մ, չեմ լսում: Հա՛: Լաւ, ուղարկիր: Յրտեսու-
թիւն»: (Չանգալը հնչեցնում է եւ գործիքը դնում իւր սեղը):
Օրհնութի տեղեֆօն հնարողը, շատ լաւ բան է վաճառականի
համար: Հա, ինչ էի ասում, Արիստակէս, հէնց որ ձեռքիդ
գործը վերջացնես, կըսկսես Բագրատի հաշիւը կազմել: (Հեղ-
կօրէն) Մեր պարոն ինժեները ուզում է իմանալ, ինչքան է
ձախտուած իւր գործարանի վրայ:

ԿՍՐԻՆԵԱՆ. Բայց դուք ձեր արած ծախսերի հաշիւնե-

րը դեռ չէք ներկայացրել զրասենեակին: Պարոն Բագրատն
ամէն մի ծախսի համար արդարօցուցիչ դօկումենտ է պա-
հանջում:

ՍԱՂԱԹ. Բան է հնարել պարոն Բագրատը—արդարա-
ջուցիչ դօկումենտ: Ես Անդրէաս էլիզբարեանի մօտ մինչև
օրս ասանց արդարացուցիչ դօկումենտի եմ ծառայել, էլի
կը ծառայեմ: Հայրը հաւատում է, թող որդին էլ հաւատայ
(Լոռոթիս): Այդ ի՞նչ ես փնտրում:

ԿՍՐ. Մնացականեանների պայմանագիրը: (Դադարում է
փնտրել):

ՍԱՂ. Հէր օրհնած, այսքան ժամանակ ծառայում ես
այստեղ, էլի չըգիտե՞ս, որ Անդրէաս էլիզբարեանը սեղանի
վրայ երբեք հարկաւոր թղթեր չի թողնում:

ԿՍՐ. Ճշմարիտ, ես մոռանում եմ, որ էլիզբարեանը
բոլոր մարդկանց համարում է գող ի ծննդինէ:

ՍԱՂ. Այո, նրա կարծիքով, մարդիկ գողանում են
ամէն ինչ, որ կողպէքի տակ չէ: Եւ այդ շատ ճիշտ կար-
ծիք է: Աշխարհի երեսին դրուստ մարդ չըկայ, բոլորը գող
են: (Տեղորդեանի ձեռնկերի մեջ տրտում է ևս հոս ֆայլ):

ԿՍՐ. Խղճի դէմ բաներ էք ասում, պարոն Սաղաթէլ:

ՍԱՂ. Է՛հ, դու էլ խօսքի տակին զլլսին—խիղճ: Ինչ-
պէս աննում եմ, ո՞չ կերակուրը շատ ես սիրում: Ափսոս
որ փոք կշտաշնող չէ:

ԿՍՐ. Այո, շատերի համար անմարսելի է:

ՍԱՂ. Ինչպէս, օրինակ, հրամանոցը համար: Տեսնում
եմ, բառաւորն ու երկու տարեկան մարդ ես, մազերդ ճեր-
մակել են, մէջքդ ծուռել է և էլի, խիղճ—խիղճ ասելով,
հալում ես: Երանի գիտենայի, այսօր-էգուց որ ոտներդ
ձգես, կնիկդ գրպանումդ պատանի փող կը զանի՞:

ԿՍՐ. Կարող է չըգանել, բայց ես գոնէ հանգիստ հո-
գով կը մնանմ:

ՍԱՂ. (Կծու հեղեղութեամբ) Ի՞նչպէս չէ, կէս դիւմի
ձընկլըձտեր քաղցած փորով թողնելով փողոցում: Էէ՛հ, պա-

րոն, խիղճը լաւ բան է, միայն ա՛վտոս որ գերի է ընկել փողի ձեռքը և օր օրի վրայ մաշվում է տանջանքից: Հա, ի՞նչ էի ուզում հարցնել. այսօր Օթարեանն եկե՞լ է այստեղ: ԿՍՐ. Ոչ:

ՍՍՂ. Էհ, գոհօթիւն Աստծու: (Տերողորմեան տրուալ է եւ հոս քաշում):

ԿՍՐ. Ասացէ՛ք, խնդրեմ. ի՞նչ է պատահել այդ երիտասարդի և պարոն Սնդրէաւի մէջ:

ՍՍՂ. Սյգ երկար պատմութիւն է: Բայց մեր գործը չէ:

ՏԵՍԻԼ II

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ. (Ներս է մտնում շատրոյ ձախ դռներից վերստիւրով ու գլխաւորով): Պապան այստեղ չէ՞: Աւելի լաւ: (Սաղարհիկ) Քեռի, ի սէր Աստծու, ա՛՛ր ինձ խփոյն երեք հարիւր ուսուցի:

ՍՍՂՍՔԷԼ. (Տերողորմեան գրպանը դնելով) Հէ է հէ՛, էլի վազեց զխիս: (Սուրհիկ) Ի՞նչ է պատահել, էլի բարկացած ես:

ՍՈՒՐ. Հարց ու փորձի ժամանակ չէ: Ինձ ձեռաց երեք հարիւր ուսուցի փող է հարկաւոր:

ԿՍՐ. Երեւի, էլի բակալայում տանուլ էք առել:

ՍՍՂ. Բաս չէ, առուտուրում վեաս է արել: Սրանը կամ բակարան է կամ թխիկ-թխիկ մամզէլները:

ՍՈՒՐ. (Գրգռուելով Կարիկեանի դիմ) Պարոն թանաք լզող, այդ ձեր գործը չէ, խնդրեմ անկող վերահսկողի դեր չըկատարէք: Քեռի, եթէ այս բոպէին երեք հարիւր ուսուցի չունենամ — կը խայտառակուիմ: Պատուի խնդիր կայ մէջտեղ: Եթէ ինձ սիրում ես — մի՛ ուշացիր:

ՍՍՂ. Շատ եմ սիրում, Սուրէն ջան, բայց որ փող

չըկայ, ի՞նչ անեմ: Քեզ յայտնի է, որ այժմ հօրդ գործերը եղբայրդ է կառավարում: (Տերողորմեան գրպանից հանում է):

ՍՈՒՐ. Եղբայրս, եղբայրս, ամէն տեղ նա ինձ խանգարում է: Բայց թող սպասի, մի օր ատամներս ցոյց կըտամ նրան:

ՍՍՂ. Էէ, նա այն պտուղներից չէ, որ քո ատամներին վախենայ:

ՍՈՒՐ. (Անհասկեր) Տալ՞ու ես փող, թէ՞ չէ:

ՍՍՂ. Այ եղբայր, ես ի՞նչ անեմ, ահա նա սնդուկը, սա էլ դու, համեցէ՛ք, վերցրու, ի՞նչ ես ետխիցս կպել:

ՍՈՒՐ. Բանալին սուր:

ՍՍՂ. (Հառաչելով) Չրկայ, Սուրէն ջան, չըկայ. Այժմ արքայութեան դռների պահապանն ես չեմ: Մէկէլ, մեր մէջ ասած, հիմա այդ սնդուկում, բացի պայմանագրերից և վէքսերներից, ոչինչ չըկայ: Եղբայրդ մեր կարգ ու կանոնները փոխել է: Դրանից առաջ այդ սնդուկում տասը-քսան հազարներով փող էր լինում շաբաթներով ընկած: Հիմա եղբայրդ բանկումն է պահում:

ԿՍՐ. Նա ասում է փողն ու խելքը միշտ չարժաման մէջ պէտք է լինին:

ՍՈՒՐ. Որ այդպէս է, սուր քո զրպանից:

ՍՍՂ. Սուրէն ջան, ախար ես փող ս՞րտաղից ունիմ: Ես մի խեղճ գործակատար եմ:

ՍՈՒՐ. Էլի մի՛ սկսիր Ղազարոսի շարականն երգել: Կաշիդ դարախանում կրճանաչեմ: Քո կօշիկների այդ հաստ կարկասանի մէջ էլ փող կայ:

ՍՍՂ. Տէր, անցո՛՛ դրաժակս այս յինէն:

ՍՈՒՐ. Դէ լաւ, հօրդ խօսքերը մի՛ կրկնիր: Ասում են, դու նրան այնքան ես նման, որքան ես Պօղոս Առաքեալին, Հանիր քսակդ, տեսնենք:

ՍՍՂ. (Մեկրախի) Դրա ձեռքից ազատուել չի կարելի: (Տերողորմեան հանդարտ դնում է գրպանը եւ շատ հանդարտ պիջակի գրպանից հանում է մի անագիկ մաշուած, կեղտոտ կաշուե

փողանակ): Կարծեմ հարիւր ուրբուց աւելի չունիմ: (Երևար
դարձնելով, քաղուն նայում է փողանակի մեջ): Փա՛հ, իսկի
հարիւր էլ չկայ. յիսուն է:

ՍՈՒՐ. Այդ հեշտ է ստուգել: Տո՛ւր ինձ այդ սոսորա-
կը, տեսնեմ: (Փողանակը խորում է):

ՍԱՂ. (Վախեցած): Վա՛յ, այդ ի՞նչ ես անում:

ՍՈՒՐ. Ո՛գուժ եմ մի քիչ հետազօտել այս հնագիտա-
կան գրոցը: (Սկում է փողանակը սնտեղ եւ մեկ մեկ դուրս
է քերում սնունամած իրեր): Այստեղ մտիկ արէք, ինչ ասես
կայ: Հին մուրհակներ, ակցիաներ, բանկային կարօններ,
գերբօլայեա մարկաներ, եսօլի գինու շիշից...

ՍԱՂ. Ագա՛, ամօթ է:

ՍՈՒՐ. (Դուրս է քերում մի նամակ): Ա՛յս ինչ բան է:
Վարդագոյն թղթի վրայ նամակ, կնոջ ձեռքով գրուած:
(Հոս է փայլում): Անուշահո՛տ...

ՍԱՂ. (Կարիւնեակից փայլելով): Ագա՛, ամաչիր, մարդ
կայ այստեղ...

ԿԱՐ. (Քաղուն ծիծաղում է):

ՍՈՒՐ. (Հանելով նամակի միջից շորի մի կտոր): Ահա
այս էլ նամակի պատասխանը—գէրիացուի նմուշ, արշինը
վեց շահանոց: Տէր ոգորմած Աստուած, այստեղ մտիկ
արէք, գեղատոմսեր, սիդնատուրա, աչքի ճար, քինաքինա,
ամբողջ գեղատուն: Պա՛լասում է բժիշկը: Հապա, տեսնենք
ուր է ցաւը, որ բժշկենք: Ահա, Օօ՛. այստեղ երեք հարիւր
էլ կայ. հինգ էլ, տասն էլ:

ՍԱՂ. (Անբողջ ժանկեակ անկանգիտ, աշխատում է փո-
ղանակը խել): Այդ իսօմ ափ-աչկարայ կողոպտել է նշանա-
կուժ: Տեսնու՞մ հս, Արիստակէս, օրը չերեկով:

ԿԱՐ. (Մեկրալի): Աւելի լաւ է այդպէս կողոպտել,
քան թագուն թագուն գողանալ, ինչպէս դու:

ՍՈՒՐ. Մի վախենար, աւելի չեմ վերցնիլ: Այն, ցվայ,
դրայ, հերիք է: (Փողերը դնում է գրպանը, փողանակը վե-

րաբարձնում է Սաղաթիլին): Սաացի՛ր թանգարանդ, Քի,
մազութի հոտ է փչում:

ՍԱՂ. (Փողանակը ծոցը դնելով): Կարող եմ ասել, որ
էլի լաւ պրծայ...

ՍՈՒՐ. Շնորհակալութիւն: Այժմ պատիւս փրկուած է:
Անիրաւները չէին ուզում ինձ հետ ապառիկ խաղալ: Առօ-
վիդերգեհէ՛ն: (Ուզում է զնայ):

ՍԱՂ. Ամօթ չըլինի հարցնելը—բաս զէ՞քսելը:

ՍՈՒՐ. Գրիւր քեզ պայմանով, կըստորագրեմ, բայց,
տես, Շէյլօկի սոկոս չըբարդես վրէն: (Քայլերն ուղղում է
դիպի նախասենեակ):

ԿԱՐ. (Գրուխը շարժելով, սնցնում է գրասենեակ):

ՏԵՍԻԼ III

ՍՈՒՐԷՆ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍԱՂԱԹԻԼ:

ԵՐԱՆ. (Գալիս է ձախ դռներից սնայիկ հագուստով, ա-
ռանց գիտարկի: Յուզում է): Կա՛յ, մի՛ գնար:

ՍՈՒՐ. (Կանգ է աւելում): Էէ, մա՛մա, հերիք է ինչ-
քան լաց ու կոծ բարձրացրիր. ես ներվային մարդ եմ:

ԵՐԱՆ. (Սաղաթիլին) Դու նրան փող տուցի՞ր:

ՍՈՒՐ. Այո, մամա, եղբայրդ աւելի բարի գտնուեց
քան դու եւ մեծ որդիդ:

ԵՐԱՆ. Յե՛տ վերցրու, Սաղաթիլ, յե՛տ վերցրու:
Փողը նրան փչացրեց, փողոցները գցեց:

ՍՈՒՐ. Լաւ, մամա, հին երգը երգելու տեղը չէ, գը-
րասենեակից կըլսես: (Դրասենեակի դռները ծածկում է):

ԵՐԱՆ. Էհ, թող լսես: Այժմ ամենքն էլ դիտեն, որ
դու որդի չես ինձ համար, այլ Աստու՛ւ պատիժ:

ՍՈՒՐ. Ինչո՞ւ: Որովհետեւ ապրե՞լ եմ ուզում: Այն-
պէս, ինչպէս ապրում են իմ բոլոր ընկերները:

ՍԱՂ. Այսինքն, բոլոր անառակ զաւակները: (Մի կողմ)
Վա՛յ, ի՛նչ ասացի:

ՍՈՒՐ. Քեռի, իմ գործերին մի՛ խառնուիր: Քոնն այն է, որ հօրս հաշիւներին վերադիր անես և սպանաղ ու զանձիլ ուտես:

ՍԱՂ. (Մեկուսի) Լաւ կծեց, տեղն է քեզ, Սաղաթէլ:

ՍՈՒՐ. Իսկ դու, մամա, հոգս արա միւս որգուդ համար: Կարող եմ հաւատացնել, որ նա ինձանից աւելի վատ ճանապարհի վրայ է: Մեր փողը կեղտ է, նրան փչացնելը մեղք չէ: Հասկացա՞ր, սիրելի մամա: Տըտեսութիւն, ճաշին ինձ չըսպասէք: (Գնում է նախասենեակի դռներով):

ՏԵՍԻԼ IV

ԵՐԱՆՈՒՂԻ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

ԵՐԱՆ. (Թուլացած նստւմ է արտուներից մեկի վրայ): Տանջեցին ինձ, բութ դանակով մորթեցին: Հանել է ուեւօլվերն ու դրել եղբօր կրծքին. «փող տուր, թէ չէ՝ կըսպանեմ»: Ոտներս թուլացան, աչքերս մթնեցին, ասացի՝ երկուսն էլ կորան: Մի կերպ բաժանեցի: Ախ, դեռ աշխարհի երեսին կանայք կան, որ ինձ նախանձում են, հարուստի կնիկ եմ:

ՍԱՂ. Էէ, ոչինչ, եթէ մէկ որդիդ անառակ է, միւսը խելօք է: Մէկի քանդածը, միւսը չիւնում է:

ԵՐԱՆ. Է՛հ, չեմ ուզում ոչ քանդողին, ոչ շինողին: Մէկի համար փողը գերեզման է, միւսի համար հայր ու հաւատամք: Երկուսն էլ Աստծու ճանապարհից դուրս են: Մեր ժամանակում փողը երկնային թագաւորի պատիժն է:

ՍԱՂ. Օրհնուէին նրա կտրողի ձեռները: Փողի պէս էլ քաղցր բան կա՞յ աշխարհում:

ԵՐԱՆ. Հեթանոսնե՛ր, Աստուած չունիք, Բեհեղզեբուղին էք երկրպագութիւն տալիս:

ՍԱՂ. Էէ էէ. էլի կրկնեցիր մեր հօր խօսքերը:

ԵՐԱՆ. Լոյս գայ նրա գերեզմանի վրայ: Նա ասում էր. փողը հնարուած է սասանայի ձեռքով, որ մարդկանց գեհները ամրի:

ՍԱՂ. Ասում էր, որովհետեւ քանանայ էր, իսկ մենք աշխարհականներ ենք, մե՞զ ինչ:

ԵՐԱՆ. Վախեցիր Ահեղ Դատաստանից, Սաղաթէլ: Մի՛ պաշտիր փողը կուռքի պէս:

ՍՈՂ. Քոյր, Աստծու պատիժն էլ, վարձքն էլ այս աշխարհումն է: Ահեղ Դատաստան — մասաստան չըկայ:

ԵՐԱՆ. (Ձարհուրած) Կայ, անհաւատ, կայ:

ԵՍՂ. Դէ հը, կայ, թող լինի: Բայց հարցրու մեծ որդուդ, տես նա ինչ է ասում: Բանից դուրս է գալիս, որ միւս կեանք ասածդ էլ անբաղդ մարդիկ են հնարել՝ իրանց այրուած սիրտը մխիթարելու համար: Որդիդ է ասում, լսո՞ւմ ես, ասում է՝ գիտութեան խօսքն է:

ԵՐԱՆ. Անիծուի ձեր գիտութիւնը:

ՍԱՂ. Ինչու՞: Որ այն հոտած փիլյի մօմի տեղ մեզ պայծառ էլէքտրական լո՞յս է տուել: Ասա, խնդրեմ, երկաթուղի, չողենաւ, տելեգրաֆ, տելեֆօն, պրամաֆօն գիտութիւնն է հնարել, թէ՞ քո տէրաւէրները:

ԵՐԱՆ. Չուր չեն ասում, թէ տէրաւէրի որդին անհաւատ կը լինի:

ՍԱՂ. Ախ, Երանուհի, դու մարդուցդ յիսուն տարով յետ ես մնացել: Խելքի եկ, բաց արա աչքերդ, տես ի՛նչ պէս են ապրում միւս հարուստների կանայք: Ուտում են, խմում, քէֆ անում, ամեն ամառ գնում են արտասահման, իսկ դու վաղուց ես... Ահեղ Դատաստան: (Փոխիլ պատուգա): Մի նոր բան էլ այն փոքր աղջիկդ է հնարել — Մարգարիտը — ճշմարտութիւն: Երէկ սկսեց գլխիս Աւետարան կարդալ:

«քեռի, մարդիկ պարտաւոր են ճշմարտութիւնով զեկա-
վարուելը»:

ԵՐԱՆ. Վատ բան է ասել, հաս°:

ՍԱՂ. Գիտես, սիրելիս, մեր հանգուցեալ հօր նման
ճշմարիտ մարդ հազիւ թէ լինի այս քաղաքում: Բայց ի՞նչ
թողեց մեզ համար: Վերջին կռփէկի կարօտութիւն, սով:
Մեռաւ թէ չէ, սկսեցինք սրան-նրան ձեռք պարզել: Դեռ
փառք Աստծու, որ դու մի քիչ գեղեցիկ էիր, բաղըը քեզ
այս ստունը գցեց: Ի՞նչ պիտի անէինք, եթէ էլիզարարովը
քեզ հետ չամուսնանար: Հանգուցեալը մի արհեստ էլ չէր
սովորեցրել ինձ: Ուզում էր, որ ես էլ ատերէր դառնամ,
այսինքն իւր նման քաղցածի մէկը: Չէ, քոյր, ոչ քեզ եմ
հաւանում, ոչ Մարգարային: Ապրել չըզիտէք: Այ, մեծ աղ-
ջիկդ, քէֆս է գալիս, աշխարհի բերանն է պատուում: Տես-
նում ես սուսն ու տեղը ինչպէս է կարգի գցել, ինչ չիկ է
բանեցնում: Մախլաս, դու խփի նման չես միլիօնատէրի
կնոջ: Է՛հ, թողնենք, կարծեմ, Անգրէասի ձայնն է:

ՏԵՍԻՒՎ V

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆԴՐԵԱՍ

ԱՆԴՐ. (Երեւում է գրասենեակի դռների մեջ գլխարկով
ու վերադառնալով: Մի ուր շեմքի վրայ, խօսում է դիպի գրասենե-
ակի): Ասացէք այդ մարդկանց, որ ես այստեղ չեմ: Գիտեմ
ինչու համար են շնորհ բերել: Ծանապարհ դրէք: Յետոյ
գրասենեակը փակեցէք, դնացէք ձաշիւռ: Դուք հարկաւոր
չէք: Իրիկունը շուտ եկէք: (Ներսէ կ գալիս, դռները ետեւից
ծածկելով):

ՍԱՂ. Էլի ուղքե՞ր էին:

ԱՆԴՐ. Ազգային ազոսաներ: Փա՛հ, կարծես, բարե-
գործական ընկերութիւն եմ բաց արել կամ իրանչից յիմար

եմ, չըզիտեմ ումն է հարկաւոր օգնել, ումր—ոչ: Հաւաք-
ւել են մի դիւժին անգործներ ու դոնէ գուսն ընկել, թէ
ինչ է՞ «Աշխատանքի Տան» համար փող ենք հաւաքում:
(Սաղաթի օգնութեանը հաւուս է վերադառնալու եւ գլխարկի ու
ձեռակաշի հետ սալիս է նստել: Հազած է շայն եւ երկարաւուն
պիպակ, շայն վարդիկ: Ժիլեթի վրայ ժաւացոյցի ոսկի շորայ,
այ ձեռի մասի վրայ անագիւն արտեսնոյեայ մասակի): Աշխա-
տանքի սո՞ւնս որն է: Աշխատող մարդն ինքը գործ էլ կ'ու-
նենայ, սուսն էլ: Հաւաքել են ծոյլերին ու անպիտաններին,
ճրի կերակրում են, թէ աղք են վրէժում:

ՍԱՂ. Իմաստունի խօսքեր են: (Վերադառնալու ու ձեռա-
փայցը սսնում է նախասենեակի եւ խփոյն վերադառնում):

ԱՆԴՐ. (Նստում է իւր գրասենեակի ֆոլ եւ այդ պահին
սեւում է Երանուհուն): Աս, դու այստե՞ղ ես: Էլի ի՞նչ ես
ունքերդ կիտել: (Գրուում է) Մի՛ սեւացնիր օրս, մի՛ սե-
ւացնիր, առանց քեզ էլ սեւացնողներ կան:

ԵՐԱՆ. Ուզողին մերժելը մեղք է:

ԱՆԴՐ. (Կծու հեղնութեամբ): Հաս°, միլլիօնատէրի
աղջիկ, աֆարիմ: Որ այդպէս է, սուր էլի քո օփառից կամ
հօրդ թողած ժառանգութիւնից, այ այն մեծ-մեծ քարվան-
սարաներից:

ԵՐԱՆ. (Վերիկնայով) Դու միշտ իմ հօր աղքատութիւնն
երեստոյս ես տալիս:

ԱՆԴՐ. Ախար, ինչ անեմ, նա էլ միշտ քարոզում էր.
«բարութիւն արէք»: Ինքը չունէր, ուրիշներից էր պահան-
ջում: Բարութիւն: Բարութիւնս որն է: Մարդս անասուն
է, ցեխի մէջ որ տեսնես, պէտք է ոտով խփես, խորը զը-
ցես, ոչ թէ ձեռից բռնես, բարձրացնես: (Սախալ շուրթիւն:
Տակը փոխելով, Սաղաթիլն): Չի՞ եկել այն տղան:

ՍԱՂ. Դեռ ոչ:

ԱՆԴՐ. Ի՞նչ ես ցցուել աչքիս առաջ: Ի՞նչ ես ուզում
ինձանից:

ԵՐԱՆ. (Հստայելով) Ոչինչ:

1001
1015

ԱՆԴՐ. Փառք Ասածու, կարծեցի էլի պիտի սկսես նախատել ինձ:

ԵՐԱՆ. Ես քեզ կ'ըբ եմ նախատել:

ԱՆԴՐ. Դո՛ւ: Դու երեսուն տարի է շարունակ նախատում ես ինձ: Ես քեզ լաւ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես: (Վեր ե կենում եւ ւերում ե անցուդարձ անել):

ԵՐԱՆ. Չեմ իմանում. ինչով եմ քո թշնամին:

ԱՆԴՐ. Ինչո՞վ: Քո մտքերով: Դու երբեք իմ մասին լաւ բան չես մտածել: (Լուռ լինել): Ի՞նչ է խօսել քեզ հետ Օթարեանը:

ԵՐԱՆ. Արտաշէ՛սը: Ոչինչ: Ինչ որ քեզ հետ է խօսում, նոյնն էլ ինձ հետ:

ԱՆԴՐ. Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի՞ տղայ է:

ԵՐԱՆ. Նա օրինաւոր տղայ է, շատ օրինաւոր, համեստ, խելօք...

ԱՆԴՐ. Լաւ լաւ, մի՛ երկարացնիր, գովելը աւելորդ է...

ԵՐԱՆ. (Հառաչում հ):

ԱՆԴՐ. (Գրգռուելով) Լսի՛ր, հազար անգամ ասել եմ, էլի եմ կրկնում, թո՛ղ այդ հառաչանքներդ, ախ ու վախդ: Քո զէմքի վրայ, աչքերիդ մէջ, ամէն մի խօսքիդ տակ ես զգում եմ նախատինք: Քո տխրութիւնն ինձ կատաղեցնում է: Ես շատ լաւ գիտեմ, որ դու ստուերի պէս հետեւում ես ինձ, ծուռ եմ դնում ոտս թէ՞ ուղիղ, ումի՞ն գրկեցի. ումի՞ց աւելորդ վերցրի, ումի՞ն պակաս տուեցի: Թո՛ղ ինձ հանգիտ, դու իմ խիղճն ես ինչ է: Չի հարկաւոր, կարօտութիւն չունիմ: Իմ մէջ խիղճ էլ կայ, հօգի էլ. Աստուած էլ...

ԵՐԱՆ. (Տարակուսակա) Ոչինչ չեմ հասկանում առածներիցդ...

ԱՆԴՐ. Աա, շատ լաւ ես հասկանում: (Անհանգիստ նայելով ժանկոցոյցին): Արզէն երկու ժամն է: Չեկաւ արդ տղան:

ԵՐԱՆ. (Չայելով իրան) Տա՛նն ես ճաշելու:

ԱՆԴՐ. Ի հարկէ, ա՞յդ ինչ հարց է:

ԵՐԱՆ. (Խորհրդաւոր) Ո՞վ գիտէ քո բանը:

ԱՆԴՐ. Այ, տեսնո՛ւմ ես, հէնց այդ «ով գիտէ»-ի տակ աստանայ է նստած: Նախատինք, միշտ նախատինք: Օձի նման է կծում: Հեռացիր: Առաւօտից դէս շան պէս անօթի եմ: Գնա, ճաշ պատրաստիր: Մի աման էլ Արտաշէսի համար դիր: Ես նրան ճաշի եմ պահելու: Լաւ վարուելի նրա հետ, այդ ինձ հարկաւոր է: Եթէ Բագրատը տանն է, ուղարկիր այստեղ: (Երանուհին գնում ե ձախ դռներով):

ՏԵՍԻՒՆ VI.

ԱՆԴՐԷՍՍ ԵՒ ՍՍՂԱԹԷԼ

ԱՆԴՐ. (Լուռ լինել): Քոյրդ ամէն բան գիտէ: Պէտք է աշխատել, որ նա գործը չըփչացնի:

ՍՍՂ. Իսկ դու նրա հետ այնպէս ես վարում, որ ինքդ կարող ես փչացնել:

ԱՆԴՐ. Այդ ճշմարիտ է: Ես հրբեմն չըգիտեմ ինձ զսպել: Բայց ինչ անեմ, այսօր առաւօտից դէս զրգոտւած եմ: Մարդիկ սկսել են խօսել իմ մասին: Աա, ես գիտեմ, որ սե Նախանձը նրանց հանգստութիւն չի տալիս: Անդրէյ Պետրովիչ էլ իրգարովի աստղը շտերի աչքն է ծակում: Տներս ու քարվանսարներս տանջում են մարդկանց: (Լըռու լինել) Ծառայողներս գնացին:

ՍՍՂ. (Գրասենեակի դռներից ներս նայելով) Գնացել են:

ԱՆԴՐ. (Խօսում ե, կարծես, ինքն իւր հետ, անցուդարձ անելով): Փա՛հ, էլ իրգարովի տների ու տափերի կէսն իմն է. ասում է, ոչ աւելի, ոչ պակաս: (Լուռ լինել): Ժամանակ-ժամանակ ինքս էլ մտածում եմ. կարելի է պարտական եմ: Բայց ի՞նչպէս աչքերս բաց վերցնեմ ե ունեցածիս կէսը տամ նրան: Ի՞նչ կ'առեն մարդիկ: «Հօրս հետ միասին ես առել տափերը»: Այո, ճշմարիտ է, բայց կ'ըբ:

ՍԱՂ. Նոյ Նահապետի ժամանակներում:

ԱՆԴՐ. Ծյմարիա է. ընկերներ ենք եղել. բայց չէ՞ որ փոքն ես եմ աշխատել, ես. Անդրէաս էլ լիզարարովս: Դալլաք էլ լիզարարի թոռնը իւր բոլոր կարողութիւնը, դիրքը, անունը. պատիւը ձեռք է բերել իւր խելքով ու աշխատանքով: Տանուհինդ տարի ծառայել եմ Մուսայէլ աղայի մօտ, տարել եմ նախատինք. թուք ու մուր: Ծան կեանք եմ քաշել, վերջը սուտ-դորթով մի քիչ փող եմ ձեռք բերել, դուրս եկել եւ ան ժամանակ ընկերացել Առաքել Օթարեանի հետ:

ՍԱՂ. Հէէ, երազի պէս միաս է. հին բազարում բախկալի դուքան ունէիք: Կանաչեղէն ու թթուեղէն էիք ծախում: Զատիկ-Ջրօրհնէքին էլ գնում էիք Սալիան, ձկնեղէն բերում ու ծախում:

ԱՆԴՐ. Խօսք չունիմ. Առաքելն էլ աչքաբաց էր: Բայց եթէ նրա խելքով վարուէի, այսօր էլ դուքանչու մէկը կը լինէի: Նա հոտաուտթիւն չունէր: Ես էի, որ անդազար աւտում էի. «Առաքել, առնենք այդ էփան տափերից, յետոյ ոսկի են դառնալու»: Սկսեցինք առնել ծովի ափում հոտած ձահիճներ, աղբանոցներ, սածէնը յիսուն կոպէկից սկսած: Առաքելը չէր ուզում, առնողն ես էի, ուրեմն ես եմ աշխատել իմ հարստութիւնը, իմս է այն, միմիայն իմս: Իսկ այդ լակոան կկել է ու ասում է. «Տուր ինձ կէսը»: Փան, գժուել եմ, որ տամ: Եթէ գժուել եմ, ինչո՞ւ չեն ինձ գժատուն տանում: (Գրգուռում է): Համեցէք: այս էլ ձեզ բարեգործութիւն: Որդեգիր եմ վերցրել հօր յիշատակի համար, ուսում տուել, մարդ շինել, տարիներով պահել եմ մօրն ու քոյրերին, ինչ է այսօր վարձս: — Գու ապերախուտութիւն:

ՍԱՂ. Լաւ, քիչ խառնիր արիւնդ: Մի կերպ սեխը կը կապենք, կը գնայ:

ԱՆԴՐ. Ի հարկէ, պէտք է սեխը կապել: Ես խօսմ չեմ կարող նրա հետ դատարան գնալ: Կը գցի ինձ մի թոկից փախած աղվակատի ձեռք, արի ու ազատուիր...

ՎԱՐԴ. (Ներսէսը կ'անկում նախասենեակից: Հագած է սև արխաղուղ, դեղնագոյն պիջակ արխաղուղից կարճ, սկզբին արծաթեայ գօշի: Խօսում է շատ անխոյր, Շաւիառ բարբառով): Ան Արտաչէսը կկալ ա. ուզում ա քեզ տեսի:

ԱՆԴՐ. Խնդրի՛ր: (Վարդաւր յետ է գնում): Սազաթէլ, դու անցկաց զրաննեակ, յետոյ կը գաս:

ՍԱՂ. (Գնում է գրասենեակ, դռները ծածկելով):

ԱՆԴՐ. (Նստում է իւր բազմաբոսի վրայ, ուշիւ ժողովելով եւ դիմֆին սիրալիւր արսայցաչաւրիւն արով):

ՏԵՍԻՒՂ VII.

ԱՆԴՐԷԱՍ, ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ԲԱԳՐԱՏ,
ԱԻԵԼԻ ՈՒՇ՝ ՍԱՂԱԹԷԼ:

ՕԹԱՐ. (Ներսէսը կ'անկում նախասենեակից, հսկոյստ է ֆայաֆայարի գոլիս կ'սպիս):

ԱՆԴՐ. (Սիրալիւր) Բարով, որդի: Այդ ի՞նչ է. դու մեզ մոտացել ես:

ՕԹԱՐ. (Ստղծելով Անդրեասի ձեռք): Երէկ ձեր տանն էի:

ԱՆԴՐ. Հա՞, բաս ինձ չեն ասել, Նսաի՛ր, այսօր մեզ մօտ ես ձաչում: Մի քիչ խօսենք, յետոյ կ'անցնենք այն կողմ: Գործ ձարեցի՞ր:

ՕԹԱՐ. (Նստում է Անդրեասի գրասեղանի ֆոյ, երեսը դիպի հասարակարիւն): Այո մի քանի մասնաւոր դասեր:

ԲԱԳՐ. (Գալիս է ձախ դռներից երկայն կոշիկներով եւ նստի բժեռով ծածկուած պիջակով: Նկատելով Օթարեանին, քեթեցնում է, սատը գրուիս կ'սպիս, նստում է ձախ գրասեղանի ֆոյ եւ անկիսպակ սխտում է գործով զբաղուել— չափում է կարկիկնով, գծագրում, միեւնոյն ժամանակ, ուշալիւր է դիպի խօսակցութիւնը):

ԱՆԴՐ. Դասե՛ր: Այնքան ուսում ստանալուց յետոց վարժապետութի՛ւնն էս անում:

ՕԹԱՐ. Ի՞նչ արած, պարոն Անդրէաս, առ այժմ ստիպւած եմ:

ԱՆԴՐ. Բայց դրանով փոր չի կշտանալ, որդի, արի՛քեզ համար մի սեղ սարքենք մեր գործերում: Հը՞մ. ի՞նչ կ'առնես Բագրատ, Երեւի, քո գործարանում մի պաշտօն կը լինի, ի հարկէ, յարմար պաշտօն...

ԲԱԳՐ. (Կտուկ): Իմ գործարանը դեռ չուս պատրաստ չի լինիլ:

ՕԹԱՐ. Ծնորհակալ եմ, պարոն Անդրէաս, ես ծառայելու միտք չունիմ:

ԱՆԴՐ. Ամօ՞թ ես համարում:

ՕԹԱՐ. Ոչ, կարծում եմ, որ կարիք չեմ ունենալ ծառայելու: Իսկ եթէ ունենամ էլ, յամենայն դէպս, ձեր որդուն չեմ ծառայիլ:

ԱՆԴՐ. Ինչո՞ւ:

ԲԱԳՐ. (Կծու եղանակով, գործը չլնկնաւորով): Իդէալիստի ձերմակ փետուրնիբը կարող են սեւանալ բուրժուայի գործերում:

ՕԹԱՐ. (Զայուած) Միայն այն դէպքում, երբ այդ գործերը մուրոտ են:

ԱՆԴՐ. Ձեմ հասկանում. ինչո՞ւ էք այդպէս զրգուած խօսում երկու ընկեր:

ԲԱԳՐ. (Հեզգօրհն) Ընկեր, հ'ը. ընկեր: Ոչ, հայրիկ մեր մէջ ընկերական ոչինչ չըկայ:

ԱՆԴՐ. (Յանդիսանալուքով) Բագրատ:

ԲԱԳՐ. (Մասին ու կարկիւր ձգելով սեղանին վրայ): Հայրիկ, ես կարծում եմ, որ ժամանակ է մեր հաշիւներն այդ պարոնի հետ պարզելու: Նա ինչ-որ պահանջներ ունի քեզանից:

ԱՆԴՐ. (Խիստ): Այդ քո գործը չէ: Դու քո բանին կաց:

ԲԱԳՐ. (Վերկենալով) Ներիբ, հայրիկ, ես չեմ կարող ստոր վերաբերուել դէպի մի մարդ, որ ուզում է մեր անու-

նը խայտառակիլ: Այն էլ մի այնպիսի մա դ, որ դեռ չի դուրս եկել մեր փողերով գնուած հագստից:

ՕԹԱՐ. (Յուզուելով վեր ե կենոււմ, բայց խմբոյն եւ եր գապոււմ ե իրան): Պարոն Անդրէաս. զսպեցէք ձեր որդուն: Ես չեմ կամենում նրա հետ վէճի բռնուել այստեղ:

ԲԱԳՐ. Իսկ ես թոյլ եմ տալիս ինձ պահանջել ձեզանից բացատրութիւն: Հայրիկը կարող է ձեզ հետ վարուել ինչպէս կամենում է, իսկ մեր մէջ պէտք է ամէն բան պարզուի հէնց այժմ:

ԱՆԴՐ. (Գրգռուած) Ասացի, որ այդ քո գործը չէ, մի խառնուիր:

ԲԱԳՐ. Բայց, հայրիկ, իմ ինքնասիրութիւնը վերաւորուած է: Ուստի թոյլ տուր նրան մի քանի հարցեր առաջարկել: (Դատնոււմ ե Օքստեանիկն): Ես կը կամենայի իմանալ, դուք բարեբարուած էք մեզանից, թէ՞ ոչ:

ՕԹԱՐ. (Զայուած) Այո՛:

ԲԱԳՐ. Ո՞վ է ձեզ խնամել և բարձր ուսում տուել:

ՕԹԱՐ. (Զայուած) Չեր հայրը:

ԲԱԳՐ. Եւ այդ բոլորը խոստովանելուց յետոյ յանդհնում էք լինել երախտամո՞տ: Եւ այդ բոլորից յետոյ, դու, հայրիկ, պահանջում ես, որ ես սա՞ւը վերաբերոււմ այդ մարդուն:

ԱՆԴՐ. Ես ասում եմ, որ այդ քո գործը չէ: Դու ոչինչ չես հասկանում:

ՕԹԱՐ. (Բարասիկն) Լսեցի՛ք, պարոն, ձեզ հետ ես այսօր մտադիր չէի հաշու ի նստելու բայց որովհետեւ ստիպոււմ էք, կը խօսեմ: Այո, ես էլիզբարեանն՝ ըրի ինամքով մեծացած մարդ եմ: Դուք իննր տարի պահել ու պահպանել էք ինձ, մօրս ու քոյրերիս: Բայց ինչպէս — այո միայն ինձ է յայտնի: Այն, ինչ-որ ես եմ զգացել տարիների ընթացքում, չէի ցանկանալ զգալ ոչ մի ինքնասէր մարդու: Դուք ձեր ամէն մի կողմէկի մէջ թոյն էք սրսկիլ և այնպէս տուել ինձ...

ԱՆԴՐ. Պարտական մնամ եթէ արած լաւութիւններս գոնէ մի անգամ էլ երեսովդ տուած լինիմ:

ՕԹԱՐ. Բայց մի թէ պիտի խօսէիք, որ ես զգայի իմ ողորմելի դրութիւնը: Այո, իմ վերարեքմամբ դուք արտաքուստ շաղաքավարի էք եղել: Բայց այն, ինչ-որ խօսքերով չէք արտայայտել, արտայայտել էք ձեւերով, աչքունքով, շարժումներով: Դուք ինձ ստորացրել էք իմ աչքում ամէն անգամ, երբ ես դժբաղդութիւն եմ ունեցել ձեզ ձեռք մեկնելու: Դուք խաթել էք իմ ինքնասիրութիւնը լուս, ինչպէս, ներեցէք ասել, մի կարիճ...

ԲԱԳՐ. (Հեղօր'ն) Չարմանալի է, որ տարիներ շարունակ լսել էք և նոր էք միայն ձայն բարձրացնում:

ՕԹԱՐ. Ախ, լսել եմ, որովհետեւ խնայում էի մօրս ու քոյրերիս: Գիտէի որ եթէ ձայն բարձրացնեմ, պիտի զրկէիք նրանց մի կտոր հացից: Ես մտածում էի այսպէս. «Կը յաչեմ մի կերպ այս վերաւորանքները և մի օր, բոլոր պարտքերս վճարելով էլիզբարեաններին, կը թեթեւանամ հողով»: Մայրս էլ է լսել: Բայց հարցրէք, ի՞նչ լուրս է եղել այդ: (Անորհասի կողմ): Ամսական քսանուհինգ ոտրլի տալով ջրան ու հինգ անգամ նախատել էք նրան: «Շատ ես ծախսում, ապրիր Ներքնայարկերում, կար արա ուրիշների համար, լուռացք արա, թող ազջկերքդ ազախին մանեն...»

ԱՆԴՐ. (Անհասեր) Տէր, մեղայ Գեղ, Աստուած:

ՕԹԱՐ. Իսկ մի օր այնքան անզուրթ էք եղել, որ առաջարկել էք նրան ազրատանոց մանել: Ձեր խօսքերն ասեղների պէս խօթուել են խեղճ կնոջ սիրտը: Քոյրերս այսօր էլ առանց արտասուքի չեն կարողանում յիշել այդ օրը: Եւ ինչո՞ւ, ո՞վ է եղել իմ մայրը: Չէ՞ որ ձեր հաւատար ընկերոջ այրին: Այլ կին, որ նոյնչափ հարուստ է, որչափ դուք: Երբ նա արտասուքը սչքերին պատմում էր իւր կրօնած վշտերը, արիւնս պաղեց երակներիս մէջ: Ես անզօրութիւնից սկսեցի մաղերս փետակել, մասներս կրծոտել, ես

վրիժառութեան միջոցներ էի փնտրում, չէի գտնում: Եւ ասա այդ ժամանակ ինչ մայրս ինքը հասաւ ինձ օգնութեան...

ԱՆԴՐ. Եւ ասաց, որ ես կողոպտել եմ քո հօրը, հա հա հա:

ԲԱԳՐ. Եւ զրպարտեց իւր բարերարին սեւ ապերախտութեամբ:

ՕԹԱՐ. (Ուշ չըդարձնելով Բագրասի կողմ) Այո, պարոն: Նա հաղորդեց ինձ իմ հօր վերջին խօսքերը. «Ես մեռնում եմ աղքատութեան մէջ, ինձ կողոպտեց ընկերս: Ահա քեզ այս թղթերը, կը յանձնես որդուս, երբ ուսումը կ'աւարտի»:

ԱՆԴՐ. (Յնկուելով) Թղթե՛ր, ի՞նչ թղթեր:

ՕԹԱՐ. Մի քանի ընկերական պայմանագրեր, որոնք պիտի ապացուցանեն, թէ ձեր հարստութեան կէսն ինձ է պատկանում: Դուք, օգտուելով իմ հօր ծանր և երկարատեւ հիւանդութիւնից, խաբել էք նրան օր օրի վրայ և ձեր անունով վերածել բոլորը, ինչ-որ եղել է ընկերական:

ԱՆԴՐ. (Վրդովուելով) Այդ սուտ է: Ես ինչ որ ունիմ, օրէնքով և նօտարական զօկու մեռաներով է հաստատուած ինձ վրայ:

ՕԹԱՐ. Այո, բայց առանց մի կոպէկ վճարելու: Դուք կարողացել էք խաբել նոյն իսկ օրէնքները: Ահա հէնց այս քանը պիտի ապացուցանեն իմ հօր թղթերը:

ԲԱԳՐ. (Կասաղի): Դո՛ւրս այստեղից, ստախօս:

ՕԹԱՐ. (Հպարտ եւ կասաղի): Պարո՛ն, ինչպե՞տէք ձեր հօր...

ԱՆԴՐ. (Ձեռն ուժգին զարկելով սեղանին, ոտի կ կանգնում): Լո՛ւր, ասում եմ, դու ինձ կատաղեցնում ես:

ՍԱՂ. (Ներս կ մեկնում):

ԲԱԳՐ. Բայց նա քեզ անպատուեց: Նա քեզ կողոպտիչ անուանեց:

ԱՆԴՐ. (Չպարտ կ իրան), Թող անուանի, ո՞վ է հաւատացողը: Երեխայ է ոչինչ չի հասկանում, տաքանում է: (Դառնում կ Օրարեանին): Որդի, այդ բոլորը, ինչ-որ ասա-

ցիր, դատարկ բաներ են, եւ քեզ ներում եմ հօր պէս: Նօսենք չափահասների նման: Գիտեմ, արիւնդ ես է դալիս, ապրել ես ուզում, բայց չունիս: Է՛հ, մտածել ես մտածել ու այդ բանը հնարել...

ՕթԱՐ. (Վրդու՛նակ եշակ ե սևուռ):

ԱՆԴՐ. Մի՛ տաքանար, որդի, խօսենք հանդարտ: Էհ, ինչ արած, շատ եմ օգնել հօրդ յիշատակի համար, էլի կ'օգնեմ: Արի ստացիր ինձանից մի քանի հազար ոսուրի, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ու քեզ էլ ազատիր գլխաշաւից:

ԲԱԳՐ. (Դրակամուկ): Երբե՛ք: Ես թոյլ չեմ տալ մի կոպէկ անգամ տալ նրան:

ԱՆԴՐ. Մեղայ քեզ, Տէր Աստուած, վերջապէս, ձայնդ կտրելո՞ւ ես, թէ՞ չէ:

ՍԱՂ. (Մի կողմից կանացուկ Բագրասիւն) Թող տայ, դու չես հասկանում:

ԲԱԳՐ. (Չըրտելով Սաղարեղիս) Այդ անկարելի է, Փոք առաջարկել այդ մարդուն... կը նշանակէ վախենալ նրանից: Թող դիմի դատարան, ես ինքս քեզ կը պաշտպանեմ նրա զրպարտութեան դէմ, որովհետեւ համոզուած եմ, որ նա քեզ զրպարտում է:

ՕթԱՐ. Ձգուչացէք. պարոն, այդ խօսքերը կարող են թանգ նստել ձեզ:

ԲԱԳՐ. Աա, թողէք այդ ֆուգները, ես ձեր բարոյական ոյժը լաւ եմ ճանաչում և զուր չեմ միշտ ձեզ արհամարհել: Սակայն ինչու աւելորդ խօսքեր չուայլել. ահա կարճ-կարական իմ խօսքը. արէք, ինչ-որ կարող էք, եւ ձեր հակառակորդն եմ: (Շսպով իւր գրասեղանից վերցնում է մի ֆանի բղրեր): Բեռի, ես չնուս եմ գործարան: Պատուիրիր Ձէյմանին, որ խոդովակները շուտով ուղարկի: Հայրիկ, ինձ ձաշի չըսպասէք: (Արագութեամբ հեռանում է նախատեսակէք դռներով, ձգելով Օրարեակի վրայ մի սահմանափակ հայեացք):

ՍԱՂ. (Մեկըսի) Աֆարիմ տղայ, կրակի կտոր է:

ՏԵՍԻԼ VIII.

ՆՈՅՆԻ, ԱՌԱՆՅ ԲԱԴՐԱՏԻ, ՅԵՏՈՅ ՄԱՐԳԱՐԻՏ:

ԱՆԴՐ. Տեսնում ես, որդի, էյի մենք, չին մարդիկս աւելի բարի ենք, քան դուք, նորերդ: Արի, քարը փէշիցդ, ստացիր երեք հազար ոսուրի, հաշտուենք:

ՕթԱՐ. Էլ ուրիշ ասելիք չունի՞ք:

ԱՆԴՐ. Ուրեմն, համաձայն ես (Տարյո՛ Սաղարեղիս սրնդուկի քանակիս): Սաղարթէլ, աուր ինձ չէքի անտրակը: Իսկ դու նստիր և մի թուղթ գրիր, որ ոչինչ պահանջ չունիս:

ՍԱՂ. (Բանակիս աւելելով, մօտենում է սեղանիս):

ՕթԱՐ. Մնաք բարո՛վ:

ՍԱՂ. (Կանգ է ստնում):

ԱՆԴՐ. Ո՛ւր: Սպասի՛ր, Հաշիւը—հաշիւ, բարեկամու թիւը—բարեկամութիւն: Դու մեղ մօս «իսի ձաշես»:

ՕթԱՐ. Մնացէ՛ք բարով:

ՄԱՐԳ. (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից սեղանի հասակէս հագստով: Օրարեակիս): Մայրիկը ձեզ հրաւիրում է ձաշի:

ՕթԱՐ. (Բայցեւն ուղղել էր դիպի նախատեսակի, կանգ է ստնում):

ԱՆԴՐ. Տեսնո՞ւմ ես, քեզ ինչպէս են սիրում այս տանը: Իսկ դու ուզում ես երես դարձնել մեզանից:

ՄԱՐԳ. (Չարեացած կայում է Օրարեակիս) Երես դարձնել մեզանից, ինչո՞ւ:

ԱՆԴՐ. Ով դիտէ, ինչ-որ հակառակ քամի է փչել: Բայց դու նրան խելքի կը բերես: Սաղարթէլ, մենք գնանք, Մարգարիտը, երեւի, նրան կ'ամաչեցնի: (Օրարեակիս) Դէ որդի, շատ սպասեցնել չրտաս մեզ: (Գնում է Սաղարեղի հետ ձախ դռներով):

ՏԵՍԻԼ IX.

ՄԱՐԳՅՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ:

ՄԱՐԳ. Այդ ի՞նչ է նշանակում, (Բռնում է նրա ձեռքը քեռակիս): Ինչո՞ւ այդպէս այլայլուած ես:

ՕթԱՐ. Աշինչ, գատարի բան է:

ՄԱՐԳ. Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ճաշի չես մնում Ի՞նչ են նշանակում հայրիկի խօսքերը. «Դու ուղում ես մեզանից երես դարձնել»: Սոս', ես համբերութիւն չունիմ:

ՕթԱՐ. Եթէ կարելի է, Մարգարիտ, այսօր ինձանից ոչինչ մի հարչնիր:

ՄԱՐԳ. (Վշտացած, բաց և քողկում նրա ձեռքը) Շատ գեղեցիկ, չեմ հարցնիլ: Եթէ կամենաս, ես քեզ չեմ էլ պահիլ, քանի որ քեզ համար ձանձրանալի է մնալ:

ՕթԱՐ. Ախ, Մարգարիտ թո՛ղ այդ երեխայական ձեւերը, դու նման չես ուրիշ կանանց:

ՄԱՐԳ. Բայց դու ինձ հետ վարում ես ինչպէս մի երեխայի հետ. ո՞ւր են քո խօսքերը, թէ միմիանց սիրող անձանց մէջ չըպիտի լինի ոչ մի գաղանիք: Այդպէս ես կատարում երգումդ:

ՕթԱՐ. (Շփոթուած) Բայց կան գործեր, որոնց հետ դու չըպիտի ծանօթանաս: Քո սիրտը դեռ շատ մանուկ է: (Նուրից բռնում է նրա ձեռքը և ցերեկ սեղանում):

ՄԱՐԳ. Իսկ ես կարծում էի. թէ չըկայ գործ, որ քեզ վերաբերուի և ինձ ոչ: (Ձեռք խցելով) Թո՛ղ ինձ, դու ինձ վերաւորում ես: (Երեսը դարձնում է): Դա անգթութիւն է սիրող կնոջ վերաբերմամբ:

ՕթԱՐ. Ի՞նչ արած, վիրաւորուած ինքնասիրութիւնն երբեմն անգութ է լինում:

ՄԱՐԳ. Վիրաւորուած ինքնասիրութիւնը: Ո՞ւմ ինքնասիրութիւնն է վիրաւորել: Քո՞նք: Ո՞վ է վիրաւորել: Հա՞յրս, թէ՞ եղբայրս: (Դադար): Բայց դու լսո՞ւմ ես: Դու ինձանից դարձնում ես երեսդ: Բաւական է, մի՛ փորձիր համբերութիւնս: Ես ասում եմ կեղծիքը, հասկանում եմ: Սոս պարզ և աներկիւզ, Ի՞նչ է պատահել, Աս, հասկանում եմ: Դու խօսել ես հօրս հետ իմ մասին, խնդրել ես նա համաձայնութիւնը: Մերժել է... Բայց ոչ, Ի՞նչ եմ ասում: Հայրիկը սիրալիր էր դէպի քեզ: Վերջապէս, նրա մերժու-

մը չի կարող քեզ վիրաւորել. քանի որ ես սիրում եմ քեզ և իմ զլխի աէրը միմիայն ես եմ: (Դադար): Սպասի՛ր, իմ մէջ ծագեց ուրիշ կասկած: Դու նրա հետ խօսել ես իմ... Բայց ոչ. դու ընդունակ չես այդ տեսակ անվայել սակարկութեան, վերջապէս. ասելո՞ւ ես, թէ ոչ:

ՕթԱՐ. Դու բռնութիւն ես գործ դնում իմ կամքի վերայ, Մարգարիտ: Կրկնում եմ, կան բաներ, որոնց հետ դու չըպիտի ծանօթանաս:

ՄԱՐԳ. (Եռանդով): Ոչ, ասում եմ: Մաղի չափ գաղանիք չըպիտի ունենաս ինձանից: Կամենում ես, այս պայմանով սիրիր ինձ, ոչ կարող ես հեռանալ: Ուրիշ տեսակի փոխադարձ սէր ես չեմ ընդունում:

ՕթԱՐ. (Մի վճռական շարժումով անկողնի), Ահ. թող լինի, ինչ-որ լինելու է: Միեւնոյնն է, անհնարին է քեզանից թագցնել:

ՄԱՐԳ. (Գրեթէ շնչաւարտ) Հապա՞, հապա՞:

ՕթԱՐ. Ասա՛ ինձ, Մարգարիտ, սիրո՞ւմ ես հօրդ:

ՄԱՐԳ. Ե՛ս. իմ հօ՞րը: (Դրական և ցերեկացի) Այո՛:

ՕթԱՐ. Ոչ միայն իբրև զաւակ, ոչ միայն արիւնակցի՛ սիրով, այլ և գիտակցօրէն:

ՄԱՐԳ. Ձեմ հասկանում միաքո՞:

ՕթԱՐ. Ուղում եմ ասել, յարդո՞ւմ ես նրան ինչպէս մարդու:

ՄԱՐԳ. Անտարակոյս, Ձէ՞ որ իմ հայրն էլ մի մարդ է:

ՕթԱՐ. Եւ ազնիւ մարդ, այնպէս չէ՞:

ՄԱՐԳ. Անկասկած: Իմ հայրն անազնիւ չէ:

ՕթԱՐ. Համոզմունքով ես ասում այդ:

ՄԱՐԳ. Խորին համոզմունքով: Գոնէ ինձ մինչև օրս յայտնի չէ նրա որևէ անազնիւ արարքը: Յարգում եմ ինչպէս մի աշխատասէր և խելօք մարդու, որ երկար տարիների տառապանքով ապահովել է իւր զաւակների գրութիւնը: Նա ինքը ազէտ լինելով, իւր զաւակների կրթութեան համար ոչինչ չի խնայել: (Դադար): Բայց ինչո՞ւ ես

կանկածանքով նայում ինձ, միթէ չե՞ս հաւատում իմ անկեղծութեանը:

ՕթԱՐ. Եւ ո՞չ մի թերութիւն չես գտնում հօրդ մէջ:
ՄԱՐԳ. Ինչո՞ւ չէ: Նա փողատէր է, իւր հաշիւներէ մէջ խիստ է, մտածում է միմիայն իւր գործերի մասին: Բայց չէ՞ որ նրա շրջանի մարդիկ բոլորն էլ այդպէս են: Համարեյ նրան անազնիւ, ոչ, անկարելի է:

ՕթԱՐ. (Դարար:): Ի՞նչ կ'անէիր, Մարգարիտ, եթէ մի օր համոզուէիր, որ նա անազնիւ է:

ՄԱՐԳ. (Դատնագիւ եւ զայրացած) Արտաշէ՛ս...

ՕթԱՐ. (Տախմարտ): Այո, այո, անազնիւ է գոնէ իւր անցեալում:

ՄԱՐԳ. (Նոյն եղանակով): Արտաշէ՛ս, մտածի՛ր, ինչ ես ասում:

ՕթԱՐ. Ասում եմ այն, ինչ-որ զլտեմ: Քո հօր անցեալում կայ մի սոսկալի յանցանք:

ՄԱՐԳ. Եւ ի՞նչ է այդ յանցանքը:

ՕթԱՐ. (Ձեռն շնչոյով): Մի անողորմ զրկողութիւն:

ՄԱՐԳ. (Ցեցուերով) Ո՞ւմ է զրկել նա:

ՕթԱՐ. Մի անտէր և անօգնական մնացած ընտանիք: Իւր հաւատարիմ ընկերոջ որբ զաւակներին:

ՄԱՐԳ. Քե՞զ:

ՕթԱՐ. Ինձ, մօրս և քոյրերիս...

ՄԱՐԳ. Ա՛հ... (Թուշացած ընկնում է արոտի վրայ, ձեռներով երեսը ծածկելով):

Երկարուէւ լուրջիւն:

ՕթԱՐ. Դու ինքդ կամեցար իմանալ ճշմարտութիւնը:

ՄԱՐԳ. (Ուշիւ ժողովելով, ոտի է կանգնում): Ապացուցի՛ր ասածդ: Լսե՞մ ես, ապա թէ ոչ, կ'ատեմ քեզ ինչպէս մի զրպարաողի: Բայց ոչ ոչ, դու չես կարող զրպարաել քո բարեբարին: Դու նրան սիրում էիր և յարգում: Անշուշտ այստեղ մի թիւրիմացութիւն կայ: Դու պէտք է բացատրես բոլորը: Միևնույնն է, թող նա լինի իմ պաշտելի ծնողը:

Իսկ դու իմ երջանկութիւնը — երկուսիցդ աւելի ինձ համար թանկ է ճշմարտութիւնը:

ՉԱՐ. (Երանում է ձայն դուրսի մեջ): Չեզ ճաշի են ապաստում:

ՄԱՐԳ. Իսկոյն:

ՉԱՐ. (Գնում է յետ):


ՕթԱՐ. Համաձայնուիր, որ այլևս իրաւունք չունիմ այս սուննն այցելելու:

ՄԱՐԳ. Ոչ, Ընդհակառակը, պէտք է այցելես: Դու իմ աէրը թունաւորեցիր, դու էլ պարտաւոր ես բժշկել այն: Այժմ կարող ես հեռանալ, բայց վաղը դու կըտաս ինձ բացատրութիւն:

ՕթԱՐ. (Գրոխ է սալիս եւ արագ ֆայլերով գնում է Լուսասենեակ):

ՄԱՐԳ. (Թող ֆայլերով գնում է դեպի ձայն եւ, կանգ առնելով, յենում է դուրսին):

Վարագոյրն իջնում է հանդարտ.



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԳ



Ելիզբարեանները մեծ հիւրասենեակը, կահաւորուած շատ հարուստ, բայց առանց որոշ ճաշակի: Այլ պատի մէջ երկու դռներ, որոնցից խորքինը տանում է գէպի նախասենեակ, ավանսցենայի կողմինը գէպի Անդրէասի սենեակը: Երկու դռների միջև գահաւորակ, շուրջը բազկաթոռներ, առջևը կլոր սեղան մետաքսեայ սփռոցով, ծածկուած, վրէն ձիւղաւոր էլէքտրական լամպար:

Սորքում ևս երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատուն, ձախ կողմինը — օրիորդների սենեակները: Չախ պատի մէջ միայն մի դռն, որ տանում է Բագրատի և Սուրէնի սենեակները: Այս պատի առջև, գէպի բեմի խորքը գահաւորակ, առջևը նոյնպէս կլոր սեղան, շուրջը կիսաբազկաթոռներ: Սեղանի վրայ ալբոմ և գեղեցիկ իրեր: Գահաւորակի ետևում, պատի վրայ հայելի ապակեայ շրջանակով: Նոյն պատի առջև գէպի ավանսցենա — դաշնամուր: Ոսկեզօծ ավտոներ, թանկագին թաւշեայ նստարաններ, բազմոցներ, վազաներ, կիսարձաններ, տրոպիական բոյսեր և այլն:

Յառակը ծայրէնծար ծածկուած է դորդերով: Դռները վարագուրուած են ուրախ գունի վարագոյրներով: Առաստաղից քաշ է արած մի մեծ էլէքտրական ջահ շատ ձիւղերով: Կէսօր է: Սեղանատան դռները բաց են: Այնտեղ երևում է Զարուհին, որ սփռոց է գցում ճաշի սեղանի վրայ և ապա սկսում է նախաճաշ պատրաստել:

Վարագոյրը բարձրանալուց մի քանի վայրկեան անցած՝ սեղանատնից լուռ է պատի ժամացոյցի տասներկու զարկը: Նախասենեակի դռներից մտնում է Վարդանը կարմիր չերքէզիով, գլխին մեծ սպիտակ մորթէ գդակ: Նա բեռնաւորուած է զանազան թղթէ կապոյցներով և ձեռքին զգուշութեամբ բռնած է մի թղթարկղ, մէջը կանացի գլխարկ:

ՏԵՍԻԼ I.

Վ Ա Ր Դ Ա Ն Ե Ի Զ Ա Ր Ո Ւ Հ Ի :

Վ Ա Ր Դ. Ո՛ւՖ, Աստուած վկայ, հոգիս բողազս եկաւ: Ի՛լիգս կոտորուեց: (Սխառ և մեկ մեկ կապոյցները ձգեղ յասակի վրայ: Թոյրարկղը ձեռքից բաց չի բողկնու: Երեսի ֆրիկեր սրբառ և չեթեկոյա փեշով եւ այդ միջոցին գրավը գցուած է յասակի վրայ):

Զ Ա Ր. (Ներս և մեկուս սեղանասանից, սուրճի գաւարն անձեռոցիկով արեղով): Հըմ, եկա՞ր: Բա բա բա, այդ ի՛նչ շատ բաներ ես բերել:

Վ Ա Ր. Ա՛յի, աս անտէր չեարքեաղին ուսերիս ա՛ քաշիլ տուալ, աս լեազգիի փափաղն ալ զլխիս տիրալ, նստացուրալ ա կողլի վերայ դազախի պէս, քչի հա քչի: Ալ մաղաղին չը մնաց չըմտնանք, ալ պեան չըմնաց — չառնի: Իստեղ միտիկ արա ա, կ՛ասես քի հարմուկա եանք սարքիլու:

Զ Ա Ր. (Հեւսրիբրուած գաւարն ու անձեռոցիկը դրեղ և ուկեգօծ արոտներից մեկի վրայ եւ կապոյցները սկսողով ե): Դէ՛րիացու, էլի գէրիացու, կուռօփներ, էլի կուռօփներ, զօնթիկ, վէյեր, շալ, պերչաթիկաներ, մի դիւփին: Հապատենեմ ինչպիսի գլխարկ է:

Վ Ա Ր Դ. (Թոյրարկղը հետոս պահելով): Հէ հէ, հեռի կաննիւր, ասալ ա իսկի մարդի ցոյց չըասա: Բերանիդ ջիւրը քի քինեայ: Հեարեաս ինքն ա՛լ կեամ ա:

ՏԵՍԻՒ ԻԻ.

Ն Ո Յ Ն Բ Ե Ի Ռ Օ Ջ Ա Լ Ի Ա :

ՌՕՁ. (Ներսէս Կեստանայի Կաթողիկոսի խոսքերով եւ վերաբերելով) : օ, mon Dieu, յողմեցի : Ման եկայ, ման եկայ, հագիւ կարողացայ իմ ճաշակով մի քանի բաներ գտնել : Այն օրից, որ Պարիզը տեսել եմ, էլ այստեղ ոչ մի բան չեմ հաւանում : (Վարդանիս) Յիմա՛ր, ինչո՞ւ ես յատակի վրայ գցել : (Զարուհուն) Վերցրու, տար իմ սենեակը : Գլխարկը թող այս տեղ : (Առնում եւ Վարդանից բոլորովը եւ դնում սեղանի վրայ) :

ՉԱՐ. (Վարդանի օգնութեամբ կապոցները սանում եւ խորհի մասի դռներով եւ խնայել վերադառնում եմ) :

ՌՕՁ. (Մօտենում եւ հայտնում եւ հրճումսկով կայում իրան : Յետոյ վերցնում եւ իւր գլխի գլխարկը եւ դնում սեղանի վրայ) :

ՉԱՐ. } Սպասում եմ հրահանների :
ՎԱՐԴ. }

ՌՕՁ. (Բաց եւ սնում բոլորովը, դուրս եւ բերում անագիւ կարմիր փետուրով մի սպիտակ գլխարկ եւ հիսցած կայում) : Հապա, մէկէլ տեսնեմ լաւ է սաղում : (Դնում եւ գլխիկ եւ կայում հայտնում) : Հըմ, օրիորդ իլգարեանն ուզում էր ինձ հաւատացնել, որ մօզէլը միայն իւր համար է բերում : Կարծեմ, վատ չէ, աա, Զարուհի :

ՉԱՐ. Ույ, օրիորդ, ի՛նչպէս է սաղում, ինչպէ՛ս :

ՎԱՐԴ. Կ՛ատես, նուրնի ծաղիկ իլի, եա լալաղար :

ՉԱՐ. Ով գիտէ, քսան մանէթ էք տուել...
ՌՕՁ. (Արհաստարակով) Ֆիդօ՛ն, հիմա ամէն մի մակըրի աղջիկ էլ քսան մանէթանոց գլխարկ է հագնում : Պարիզից է բերել տուած, արժէ իննըսուն ուրբի :

ՎԱՐԴ. Իննըսուն մանէթ... Վայ սատանայ փռնողանց

Վարդան, իննըսուն մանէթով Շամախիում մին տուն կաթիլի ա շինիլ... հալա կտուրն ալ դռա՛ծ...
ՌՕՁ. (Առանց կրակ կայելու) : Դու դեռ այստե՛ղ ես : ՎԱՐԴ. Հրամանիդ ամ սպասըմ : Ա՛լ պեան չե՛ս ասիլու :
ՌՕՁ. (Երեսը դարձնելով կրակ կողմը) : «Չեա» ասիլու : «Չե՛ս»-ը որն է, ես քո՛յրդ եմ, թէ ընկերդ :
ՎԱՐԴ. Ա բալամ, դէ մենք չօբան մարդ անք, հինչ իմանանք :

ՌՕՁ. Հիմա էլ «մենք» : Այդ ինչ տեսակի մարդիկ են, արքայական եղանակով են խօսում. ուրիշներին «դու», իսկ իրանց մասին — «մենք» : Գնա՛ : Իվանին ասա, որ կառքն ինձ հարկաւոր չէ : (Վարդանը շփոթուած հեռանում եւ կախաւենեակ, գրակը մոռանալով յասակի վրայ : Զարուհուն) : Ո՞վ կայ տանը : (Նոր գլխարկը դնում բոլորովի մեջ) :

ՉԱՐ. Տիրուհին և օրիորդը :
ՌՕՁ. Կանչիր այստեղ Րիտային : Տար այս գլխարկը սենեակս :

ՉԱՐ. (Վերցնում եւ բոլորովը եւ գնում օրիորդների սենեակները) :

ՌՕՁ. (Հսկում եւ վերադառնում, ձգում բազմաթիւներից մեկի վրայ, նորից մօտենում եւ հայտնում եւ մագերէ ուղղում) :

ՎԱՐԴ. (Յեւ կայում կախաւենեակից եւ յասակի վրայ որոնում եւ գրակը) : Աչի, հինչ տեղ կորաւ անտէրը :
ՌՕՁ. Այդ ի՛նչ ես փնտռում :

ՉԱՐ. (Վերադառնում եւ, վերցնում եւ Ռօզալիայի հիւստիստիկա ու վերադառնում եւ սանում կախաւենեակ) :

ՎԱՐԴ. Շուլլահիս : Չամ իմանրմ հինչ տեղ թողի : (Գնում եւ) : Հա, հեարեաս : (Վերցնում եւ) : Այ, քո տիրոջ վիզը կտորուի հաա : (Չեռով զարկում եւ գրակիկ) :

ՌՕՁ. (Կաստարած) Ի՛նչ ես անում, վայրենի : Դո՛ւրս եկ, անկիրթ Հայ :

ՎԱՐԴ. (Մեկուսի) Ա՛չի, դրանց դուլուղ անիլը թամամ խաթաբալա եա քի... (Գնում եւ կախաւենակ) :

ՁԱՐ. Վերադարձնում ե նախաստեղծակից:

ՌՕԶ. Արի ու այդ տեսակ արջերից մարդ պատրաստիր: Իսկ ես դեռ ուզում եմ կարբիօլետիս համար նրան ցիլինդր ու ֆոակ հագնել: Լաւ գոում կըլինի, ինչ ասել կ'ուզի: Ձէ, պէտք է այլազգի վարձել:

ՁԱՐ.— (Վերցնում է արձի գաւաթն ու անձեռոցիկը եւ անցնում է սեղանսուն):

ՏԵՍԻԼ III.

Ռ Օ Չ Ա Լ Ի Ա Ե Ի Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ:

ՄԱՐԳ. (Ներս է մեկնում հագնուած հսակես, բայց աւելի շաւ, քան առաջին արարուածում: Ձեռին պահած է մի անկազկ գիրք: Չի կարդում):

ՌՕԶ. (Ծիծաղելով) Իսկ և իսկ Մարգարիտա-Պաուստօպերայից. գրքայիլը ձեռքումդ, համեստ, ամօթխած, պահասում է ձախարակը: Երանի գիտենայի, ինչ ես գտնում ընթերցանութեան մէջ: (Ձգում է զանաւորակի վրայ):

ՄԱՐԳ. Ո՞ր տեղ էիր: (Գիրքը դնում է ձախ կողմի սեղանին վրայ եւ նստում):

ՌՕԶ. Օհ, էլ մի հարցնիր, յոգնեցի: Գլխարկս, վերջապէս, ստացայ: Յետոյ կը տեսնես, ինչ հիանալի բան է: Այսօր ծախսեցի մօտ 300 ուրբլի: Հայրիկը բարկանալու է, բայց, ինչ արած, բոլորը հարկաւոր բաներ են:

ՄԱՐԳ. Ռօզալիա, մինչեւ ե՞րբ պիտի այդպէս անհաշիւ շտայլես:

ՌՕԶ. Օհ, դու ինձ յանդիմանում ես:

ՄԱՐԳ. Եթէ կամենաս— այո, քո շտայլութիւնն արժանի է յանդիմանութեան:

ՌՕԶ. (Հեզկարար) Մի՛թէ, այ այ այ: Եթէ նախան-

ձում ես ինձ, ինքդ էլ կարող ես շտայլել: Ի՞նչն է քեզ խանդարում:

ՄԱՐԳ. Երեւի, կայ մի բան, որ խանդարում է:

ՌՕԶ. Օհ, բայց դու բաւական հետաքրքրական ես. Ապա, բարեհաճիր ասել, տեսնե՞ք, էլի ի՞նչ է պատահել: Դէմքդ շատ խորհրդաւոր է:

ՄԱՐԳ. Ռօզալիա, հասկացիր, վերջապէս, ինչ է կատարում այս տանը: Չի կարելի հանդիստ հոգով շտայլել այն փողերը, որոնց վրայ ծանրանում է մի մեծ մեղադրանք: (Վեր է կենում):

ՌՕԶ. (Վեր է կենում արագութեամբ) Բայց ո՞վ է այդ մեղադրանքը դնողը: Ո՞վ: Քո Արտաչէս Օթարեանը: Մի կեզտոտ և անամօթ զրպարտի՞չ:

ՄԱՐԳ. (Մեղմ յանդիմանութեամբ բայց վրդովուած) Ռօզալիա՛...:

ՌՕԶ. Բաւական է, մի համարձակուիր պաշտպանել նրան իմ մօտ: Քեզանից առաջ եւ եմ ճանաչել նրան: Ես ատում եմ այդ մարդուն: Ատում եմ հոգոյս բոլոր ուժով: Նա ապերախտ է, ինչպէս օձ, որին մեր հայրը տաքացրել է իւր ծոցում: Եւ ես զարմանում եմ, որ հայրիկը մինչեւ օրս նրան ցոյց չի տուել մեր տան դռները:

ՄԱՐԳ. (Հաւաստելով) Ով գիտէ, գուցէ այդ այնքան էլ հեշտ չէ:

ՌՕԶ. (Կակուստեղով եւ խիստ) Բիտա, դու չափից անցնում ես: Դու պէտք է շատ անպիտան աղջիկ լինիս, որ հաւատաս հարազատ ծնողիդ զրպարտողին:

ՄԱՐԳ. (Նշոյն եղանակով) Ախ, դուցէ, շատ եմ փափազում փափազում չըհաւատալ, բայց...:

ՌՕԶ. (Լեղանաստեղով) Բայց վախենում ես զրկուել նրա բարեհաճ ուշադրութիւնից, այնպէս չէ՞:

ՄԱՐԳ. Ի՞նչ ես ուզում ասել: Որ ես սիրո՞ւմ եմ Օթարեանին: Այո, սիրում եմ և շատ եմ սիրում, թող այս յայտնի լինի քեզ և ամէնքին: (Անց ու դարձ է անում):

ՌՕԶ. (Ժպտաւար ասեղանութեամբ ու նախանձով) Ինչ քա՞ջն ես, իսկ և իսկ հերոսուհի: Ասենք, ես վաղուց գիտէի այդ: Բայց չէի երեւակայում. թէ սէրդ այնքան թունդ է, որ

պատրաստ ես հօրդ պատիւն անգամ զոհել նրան:

ՄԱՐԳ. Միայն այն դէպքում եթէ այդ պատիւը մաքուր չէ օՊՁ. Ի՞նչ ես ուզում ասել:

ՄԱՐԳ. Այն, որ ես մի րոպէ անգամ չէի տատանուիլ էրես դարձնել Օթարեանից, եթէ համոզուէի, որ նրա դատըն արդար չէ: Այն, որ ես կըսկսէի Աստծու պէս պաշտել հայրիկին, եթէ համոզուէի, որ նա անպարտ է իւր ընկերոջ գերեզմանի առաջ: (Ընկնուելոյ, դասն ու մուսյ ճայնոյ): Հայրիկը մինչեւ օրս դեռ չի կարողացել հերքել Արտաշէսի պահանջը փաստերով: Մեր գերդաստանի գլխին կանգնած է մի սոսկալի յանցանք: Նա ճնշում է իմ հոգին արձիճի պէս: Ես չըզիտեմ գլուխս ամօթից ուր թագցնեմ: (Նստում ե բազկաբոսներից մեկի վրայ եւ գրուխը դնում սեղանի վրայ):

ՌՕՁ. (Տակախի ճարտար) Ի հարկէ, բացի քեզանից ք՛վ ունի պատուի մասին հասկացողութիւն կամ գերդաստանական հպարտութիւն: Մենք ամէնքս թեթեամիտներ ենք: (Լուրջ) Երկուսից մէկը, կամ դու խելագարուել ես, կամ այդ մարդը մի հասարակ ինտրիգան չէ, այլ խարդախ դեռ: Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել քո այժմեան տրամադրութիւնը: (Թեթե յուրթիւնից յետ, մտնում է): Լսի՛ր, Րիտա, ես իմ հօր հարազատ զաւակն եմ, պարտաւոր եմ սիրել ու պաշտպանել նրան, թէկուզ նա վերջին տեսակի աւազակ լինի: Եւ անա իմ ասելիքը.— Թող քո Օթարեանը ինչ ուզում է հնարի իմ հօր մասին, իսկ ես կ'աշխատեմ խայտառակութեամբ դուրս վճնդել նրան մեր տնից: Հասկացա՞ր: Դու կարող ես կատաղել իմ դէմ, թշնամանալ ինձ, բայց այդ ոչինչ նշանակութիւն չի ունենալ ինձ համար: (Հեռանում է):

ՄԱՐԳ. Ախ, թող ով ինչ ուզում է անի, ինձ համար միևնոյնն է: Ես կը լսեմ միայն իմ խղճի ձայնին: Ես կարծում եմ, որ չի կարող լինել ոչ որդիական և ոչ մի ուրիշ սէր՝ ստի և խաբէութեան մէջ:

ՁԱՐ. (Սեղանասան դռներից) Նախաճաշը պատրաստ է: ՌՕՁ. Գնանք: Հայրիկն իսկոյն կըգայ: Դու պարտա-

ւոր ես քո յիմարութիւնները թագցնել նրանից:

ՄԱՐԳ. Ես ախորժակ չունիմ:
ՌՕՁ. (Աստուրեանը շի մի հայեացք ձգելով Մարգարի վրայ, ակնուր եւ սեղանասան):
ՄԱՐԳ. (Մնում է բեռի ձախ կողմում մտածունակների մեջ):

ՏԵՍԻՒԼ IV.

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԷԱՍ, ԲԱԳՐԱՏ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

Վերջին երեքը ներս եւ մնում նախասենեակից:

ԱՆԴՐ. Մի հակառակիւր ինձ: Ինչպէս ասում եմ, այնպէս էլ պէտք է լինի: Կրակը իւզով չեն հանգցնիլ:

ԲԱԳՐ. Եթէ միայն կրակ է: Դատր մենք կը տանենք, քանի որ նա փաստեր չունի: Թող պահանջի օրէնքով: Երբ քաղաքացիական դատը կը վերջացնենք, մեր կողմից կը կըսենք նրա դէմ քրէական դատ: Այս անհրաժեշտ է քո, իմ և մեր ամբողջ գերդաստանի պատուի համար:

ԱՆԴՐ. Որ վզովս թոկ գցես, նրա հետ դատի չեմ գուրս դալ:

ԲԱԳՐ. Հայր, մանուկ հասակիցս քեզանից անգաղար լսել եմ, որ քո հարստութիւնը վաստակել ես արդար քրքրտինքով:

ԱՆԴՐ. (Գրգռուելով): Ասել եմ, ասել եմ, էլի եմ ասում, բայց դու քիչ կրկնիր: Այդ տղան ինձ զրպարտում է, բայց ես էլի ուզում եմ նրա հետ հաշտուել:

ԲԱԳՐ. Չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում: ԱՆԴ. Սաղաթէլ, դնա, գրասենեակից մի մարդ դարկիր, որ շուտով նրան կանչեն այստեղ: ՍԱՂ. Գնում է նախասենեակի դռներով:

ԱՆԴՐ. (Նոր միացն ևկասում և Մարգարիկն, որ անբողջ ժամանակ, կանգնած ձախ պատի սակ, ուշադիր դիտում հորը): Աա, դու անկա՞նջ էիր դնում: Տէր Աստուած, Տէր Աստուած, մի բոպէ հանդստութիւն չունիմ: Կարծես, ամէնքն երդուել են ինձ խելքից հանել:

ՄԱՐԳ. Ներիր, հայրիկ, ես հեռանում եմ:

ԱՆԴՐ. Լաւ, դու էլ մի նեղանար: Ես մեղաւոր չեմ, եղբայրդ է ինձ կատաղեցնում: Բայց ոչ, դու էլ պակաս չես, դու էլ մօրդ պէս ինձ չես սիրում, դու ատում ես ինձ:

ՄԱՐԳ. (Անցաւի վշտացած) Հայրի՛կ...

ԵՐԱՆ. } Երեւում են սեղանսան դուների մեջ:
ՌՕԶ. }

ՏԵՍԻԼ V.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՅ ՍԱՂԱԹԷԼԻ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ:

ԱՆԴՐ. Կորի՛ր, ես քո հայրը չեմ, դու խորթ ես ինձ համար: Ես այս տանն օտար եմ, օտար, իմ մասին մտաւ ծող չըկայ: Ես ձեր աչքում մի համբալ եմ, ուրիշ ոչինչ...

ՌՕԶ. Գոնէ իմ մասին, հայրիկ, իրաւունք չունիա այդ ասելու: (Առաջ և գալիս):

ԱՆԴՐ. Աա, եկան, հաւաքուեցին: Գնա՛, քեզ էլ եմ ձանաչում: Դու այն ժամանակ ես մտածում իմ մասին, երբ հարկաւոր է պարտքերդ վճարել մաղազիններին: Դուք ինձ կերաք, քանդեցիք: (Հեզգնեհ անելի ու անելի զրգոռելով): Ես ոչ ոքի համար մարդ չեմ, ոչ ուրիշների, ոչ իմ տնացիների: Ամէնքն ինձ համարում են ոսկու տոպրակ, ուրիշ ոչինչ: Յարգում են երեսանց, իսկ ետեւիցս չարախօսում են: Երբ կարիք ունին, վազում են զլխիս, երբ չունին— ես չըկամ նրանց համար:

ԲԱԳՐ. Պէտք է խոստովանել, որ այդ մասամբ ճիշտ է:

ԱՆԴՐ. Ճիշտ է, բաս չէ: Հէ, ես յիմար չեմ, ձանաչում եմ մարդկանց հոգին: Ամէնքն իրանց գլխի մասին են մտածում: Հէնց մէկը դու ինքդ: Սուտ է, դու էլ ինձ չես սիրում, դու էլ ինձ փողի համար ես պատում: Այո, այո, ես մարդ չեմ քեզ համար, այլ փողի սնդուկ: Բայց երկար խաբել չես կարող: Էլ ոչ մի կոպէկ չեմ տալու:

ԲԱԳՐ. Հայրիկ, հանդստացի՛ր:

ԱՆԴՐ. Այո, չեմ տալու, թող գործարանդ կիսատ մնայ: Ի՞նձ ինչ: Ես իմ հօրից փող ստացել եմ, որ դու ինձ պուկում ես, աա՞: Թուք ու մուքով, զրկանքներով, քաղցած փորով եմ ես մարդ դարձել: Գնա, ինքդ էլ արիւն քրտինք թափիր. այն ժամանակ կ'ասեմ խելօք ես: Ամէնքդ գնացէք, ձեր աշխատանքով ապրեցէք: Այստեղ մտիկ արէք. տեսէք ինչ տուն ու տեղ են սարքել: Ինչի՞նչ է հարկաւոր այս ոսկէզօծ կահ-կարասին: Ո՞վ եմ ես, ո՞ր խանի կամ իշխանի տղան: Հէ՛, մի նախկին գեաղայ, պանիր ու հացով ապրած լակոտ: Ինչո՞ւ էք ինձ քանդում: Դուք էք մեղաւոր, որ Օթարեանը կպել է ետեւիցս: Այո այո, դո՛ւք: Նա տեսնում է, որ դուք տակն ու վրայ էք անում իմ հարստութիւնը, ուզում է ինքն էլ ձեզ պէս շտայլել: Դուք ինձ համար թըշնամիներ էք ստեղծում...

ՄԱՐԳ. Հանդարտ ըստիս է:

ԱՆԴՐ. Լա՛ց, էլի արտասո՛ւք: Հողիս բերանս բերիք, խեղդեցիք, սպանեցիք: Հերի՛ք է, հեռացիր. ես ատելով ատում եմ արտասու քը: Անդրէաս էլիզբարովի մօտ ոչ լաց եղէք, ոչ ծիծաղեցէք:

ՄԱՐԳ. Բարձր ձայնով հեկեկալով, անցնում և իւր սեկեակը: ԵՐԱՆ. Ինչպէս սիրտ արիր նրան վիրաւորելու: Նա

Աստու գառն է:

ԱՆԴՐ. Աստու գա՛ռը, հօրդ պէս: Ես ատելով ատում եմ Աստու գառներին: Տուէք ինձ Սաղայէլին, ես նրա հետ աւելի հեշտութեամբ կընաչաուրիմ, քան Աստու գառ-

Ներքի հետ: Գնացէ՛ք, ի՞նչ էք ազուաների պէս գլխիս հա-
ւաքուել, ինձ խօսմ չեն թաղում, ինձ ուզում եմ միայն կո-
ղորպուել, տկլորել, փողոցները դցել: Գոնէ դուք խնայեցէ՛ք
ինձ: Դէ՛հ, կորէ՛ք, հա՛յրա: (Նստում է աջ կողմի բազկաքոռ-
ներից մեկի վրայ):

ԵՐԱՆ. } Անցնում են սեղանասուն:
ԲԱԴՐ. }

ՌՕԶ. Մնում է բեռի վրայ:

ՏԵՍԻԼ VI.

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ

ԱՆԴՐ. Նսած է խորիկ մսածողութեան մեջ եւ սանջում է:
ՌՕԶ. Ուզում է մօտենալ ու խօսել, բայց չի վստահանում:

ԱՆԴՐ. (Հառաչում է, ձեռք զարկելով սեղանին): Ա՛հ...

ՌՕԶ. Հայրիկ, ի՞նչն է քեզ այդպէս տանջում:

ԱՆԴՐ. (Գլուխը բարձրացնելով, անտարբեր) Գո բանը չէ:

ՌՕԶ. Ներիք, հայրիկ, քո հոգսերը վերաբերում են

և՛ քո զաւակներին:

ԱՆԴՐ. (Դարձեալ անտարբեր): Ես հոգս չունիմ: (Ներ-
վայիկն արագութեամբ ոտքի կանգնելով): Բան ունի՞ս ասելու:

ՌՕԶ. Այո՛, հայրիկ, ունիմ, բայց չեմ համարձակում:

ԱՆԴՐ. Դէ՛հ, կարճ կապիր, ես գնում եմ:

ՌՕԶ. Գիտես ինչ, հայրիկ, այն մարդը, որ մոռացել
է քո բարերարութիւնը և ուզում է քեզ կողոպտել, այս-
տեղ, մեր տանը զինակից ունի:

ԱՆԴՐ. (Հետափրոնում) Ա՜տ՛, ի՞նչ, պարզ ասա:

ՌՕԶ. Մարգարիտը սիրահարուած է Օթարեանի վրայ:

ԱՆԴՐ. Ի՞նչ, սիրահարուած: Ո՞վ ասաց քեզ:

ՌՕԶ. Հէնց ինքը Մարգարիտը, սրանից մի կէս ժամ
առաջ:

ԱՆԴՐ. Յետո՛յ: Նա էլ սիրո՞ւմ է Մարգարտին:

ՌՕԶ. Պէտք է կարծել, թէ և այն տեսակ մարդու
հաւատալ չի կարելի:

ԱՆԴՐ. (Մի ֆակի վայրկեան մտածում է, յսկիսած դեմքը
պայծառանում է ուռախուրթիկից): Ասում ես, ինքը, Մար-
գարի՞տը խոստովանեց:

ՌՕԶ. Այո, հայրիկ: Ես գիտեմ, որ նրանք ամէն օր
տեսակցութիւն ունին դրսերում: Հայրիկ, ես պարտք հա-
մարեցի քեզ զգուշացնել այս մասին: Կարծում եմ, մեր
գերդաստանի պատիւը պահանջում է այդ սէրը խախտել
հէնց այժմեանից: Ճշմարիտ է, Մարգարիտը մի առանձին
արժանաւորութիւն չունի, բայց ինչ էլ լինի, քո աղջիկն
է: Օթարեանը արժանի չէ քո փեսան դառնալու:

ԱՆԴՐ. (Շարունակ մտածելով) Ի հարկէ, ի հարկէ: Եր-
նորհակալ եմ, որ ինձ զգուշացրիր: Գնա, իսկոյն Մարգար-
տին կանչիր այստեղ:

ՌՕԶ. Բայց, հայրիկ, շատ էլ չըբարկանաս նրա վրայ:
Յիմար է, չի հասկանում:

ԱՆԴՐ. (Անհասկեր) Գնա՛, նրան կանչիր այստեղ:

ՌՕԶ. (Մեկուսի) Տեսնենք, ինչպէս պիտի պաշտպանեմ
սիրեկանիդ: (Գնում է խորիկ ձախ դռներով):

ՏԵՍԻԼ VII.

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ:

ԱՆԴՐ. Միևեւ Մարգարի գալը, մտաբար սնցուրարձ է
սնում, զսնուզակ շարժուակներով իւր միտքն արտայայտելով:

ՄԱՐԳ. Դուրս է գալիս խորիկ ձախ դռներից հանդարտ
ֆայլերով:

ՌՕԶ. Դուրս է գալիս սննդիցապէս ֆրոջ ետելից, ֆակի մի

շխարհեան կակց ստեղծու, նայում է եւ սնկնում՝ սեղանասուն, քրևերը ճածկեցով:

ԱՆԴՐ. Առաջ եկ, լալկան աղջիկ: Հայրը որդու վրայ չի՞ կարող բարկանալ, ինչ է: Հէ. բաս ի՞նչ կ'անէիք դուք, երես առածներ, եթէ մեր ծնողների պէս ծնողներ ունենայիք: Հայրս վզակովիս որ տալիս էր — աչքերիցս պէծեր էին թռչում: Դէ լաւ, բա՛ց արա աչքունքդ, ծնողի զէմ՝ օխ չեն պահիլ:

ՄԱՐԳ. Հայրիկ, ես քո դէմ օխ չունիմ:

ԱՆԴՐ. Այ, օրհնեալ լինիս, աղջիկս: Ես գիտեմ, որ դու բարի սիրտ ունիս, դէ՛հ, արի հաշտուենք: (Մօտենում է եւ նստի սը հասկանալով): Բայց ես էլի քեզ վրայ բարկացած եմ: Գիտես ինչ, աղջիկս, դու հօրդ հետ անկեղծ չես:

ՄԱՐԳ. (Զարմացած նայում է հօրը): Անկե՛ղծ...

ԱՆԴՐ. Ինչո՞ւ ես զարմանում:

ՄԱՐԳ. Հայր, առաջին անգամն եմ ես քեզանից այդպիսի բան լսում: Դու երբեք ինձ արժանի չես համարել այդ տեսակ խօսակցութեան:

ԱՆԴՐ. Որովհետեւ դու ինքդ քեզ հետու ես պահում ինձանից: Դու, երեւի, մտածում ես, էհ, իմ հայրը մի տղէտ է խորամանկ վաճառական է, չարժէ, որ սիրտս բաց անեմ նրա առաջ:

ՄԱՐԳ. Ոչ, հայրիկ, սխալում ես, հաւատացնում եմ քեզ: Ես միշտ պատրաստ եմ եղել քեզ յայտնել իմ բոլոր մտածմունքները, ամենայն անկեղծութեամբ, միայն թէ արժանի համարէիր ինձ լսելու: Բայց դու... դու միշտ սանձահարել ես իմ լեզուն քո մտայլ բնաւորութեամբ:

ԱՆԴՐ. (Ուրախ ձեւակարգով): Այո՞, Ապրիս զաւակս: Դէ, որ այդպէս է, ասա ինձ, ինչո՞ւ այս քանի օրերս տխուր ես:

ՄԱՐԳ. (Շփոթուելով) Զրգիտեմ... ես... տխուր չեմ:

ԱՆԴՐ. Այ, տեսա՞ր: Դու կեղծել չես սիրում, բայց հիմա կեղծեցիր: Ուզո՞ւմ ես, որ քո տեղ ես պատասխա-

նեմ: Դու տխուր ես, որովհետեւ վերջերս քեզ հաւատացրել են, թէ քո հայրն ազնիւ մարդ չէ:

ՄԱՐԳ. Հայրի՛կ...

ԱՆԴՐ. Այո, սիրելիս, դու ինձանից թագցնել չես կարող: Ես մարդու մի շարժումից կարող եմ իմանալ, թէ նա ինչ է մտածում իմ մասին: Հապա, պատմիր, տեսնեմ, ինչեր է ասել քեզ իմ մասին քո սիրած երիտասարդը...

ՄԱՐԳ. Բոդրոյիլն շփոթում է ու կարեւում:

ԱՆԴՐ. Լա՛ւ, մի՛ ամաչիր: Բոլորը յայտնի է ինձ: Մի՛ վախենար, չեմ բարկանում: Ես Արտաշէսին վատ տղայ չեմ համարում: Եթէ վատ համարէի, վաղուց նրա ոտը կտրած կըլինէի իմ տնից: Միայն, աղջիկս, նա դեռ երեխայ է, չէ հասկանում իւր արածը: Նա իմ բարեբարութիւնները մոռանում է: Է՛հ, Տէրը նրա հետ, երեւի, մի օր խելքի կըզայ, կըտեսնի, որ սխալուած է:

ՄԱՐԳ. (Ուրախակարգով եւ, միտելոյն ժամանակ, դեռ կարկածեղով): Այո՞, սխալուած է քո մասին:

ԱՆԴՐ. Ի հարկէ, բաս ի՞նչ էիր կարծում:

ՄԱՐԳ. Հայրիկ, ինչու թագցնեմ, ես երբեք չեմ կասկածել ոչ քո անցեալի և ոչ ներկայի ազնուութեան մասին: Բայց նա ինձ համոզում է, որ...

ԱՆԴՐ. Որ ես կողոպտել եմ նրա հօրը, այնպէս չէ՞: Բայց ինչո՞վ է համոզում, խօսքերով, թէ՞ փաստերով:

ՄԱՐԳ. Հայրիկ, ես ոչ քեզանից կարող եմ փաստ պահանջել, ոչ նրանից:

ԱՆԴՐ. Բայց առանց փաստերի կարող ես ծնողիդ դատապարտել, հաս՞: (Կեղծ վշտակարգով) Ամօ՛թ քեզ, Մարգարիտ, ամօթ: Դու ինձ ապտակ ես տալիս...

ՄԱՐԳ. (Վշտակար եւ ստորակար): Հա՛յր...

ԱՆԴՐ. (Տակալի վշտացած ձեւակարգով) Ահ, թո՛ղ ինձ, ես ի՛նչ հայր եմ, երբ հարադատ աղջիկս, ուրիշ դատարկ խօսքերով, ինձ համարում է գող, աւազակ: Թո՛ղ ինձ,

գնա՛ նրա ետեւից : Նա է քեզ համար թանգ , իսկ ես ո՞վ եմ , ի՞նչ եմ : Ոչինչ , ցեխի կտոր :

ՄԱՐԳ. Դու ունիս իրաւունք ինձ նախատելու , հայր , ես չտապել եմ եզրակացութիւն անելու : Ների՛ր ինձ , աղաչում եմ :

ԱՆԴՐ. Ներումն խնդրելուց ի՞նչ օգուտ , դու պէտք է աշխատես մեզքդ քաւել , սխալդ ուղղել :

ՄԱՐԳ. Բայց ի՞նչպէս , հայրիկ , ի՞նչ միջոցով , սովորեցրո՞ւ , ես կըքաւեմ իմ մեղքերը :

ԱՆԴՐ. Այ ինչպէս : Լսի՛ր : Նա ասում է , թէ իւր ձեռքում ունի ինչ-որ գրաւոր ապացոյցներ իմ դէմ : Դու... (Նայելով շուրջը) : Բայց այստեղ անյարժար է ասել : Կարծեմ , գալիս են : Գնանք իմ սենեակը , այնտեղ կըբացատրեմ ինչ-որ հարկաւոր է : Գնանք : (Գնում են աջ կողմի առաջին դռններով) :

ՏԵՍԻԼ VIII.

Ս Ո Ւ Ր Է Ն Ե Ի Ս Ա Ղ Ա Թ Է Լ :

Ներս են մեկուս ճախասենեակի դռներից

ՍՈՒՐ. Այո , քեռի , երեւակայել չես կարող , թէ ինչքան ծիծաղելի էր : Աբուլովը , քաղաքի առաջին քէֆ անողն է ամենից շատ ծախսողը , յանկարծ մնում է թատրոնի դռների մօտ քիթը քաշ : Իսկ քո քրոջ որդին բռնում է գեղեցիկուհի Առլովայի թեւից և կառք նստեցնում :

ՍԱՂ. Ամօթ չըլինի հարցնելը— այդ ի՞նչ պարծենալու բան է :

ՍՈՒՐ. (Ոգեւորուած շարունակելով) Ամէնքի ուշադրութիւնը մեզ վրայ է , բոլորը նայում են նախանձով : Աբուլովի աչքերից կրակ է թափուում : Կրակոտ Ալի-Բաբան կառքը

թռցնում է և մեզ կայծակի արագութեամբ բերում է Գըրանդ հօթէլ : Ծառաները ձեռքի ոտքի են ընկել : Սեղանը պատրաստ է : Հիւրերը սպասում են... :

ՍԱՂ. Ամօթ չըլինի հարցնելը— Ի՞նչ հիւրեր :

ՍՈՒՐ. Ինձ նման դարդիմանդներ : Մեզ ծափահարում են : Կառքից ծառաները բերում են թատրոնում ստացուած փունջերը— կէսն իմ նուիրածն է : Առլովան հիացած է նըւէրներից : Երբեք այդպիսի բնեֆիս չի ունեցել : Յետոյ ի՞նչ քէֆ , ի՞նչ քէֆ : Ծամպանիան ջրի պէս է հոսում : Խըմուս էն Առլովայի կենացը , յետոյ իմը : Մէկ , երկու , երեք , յանկարծ ես սեղանի տակ եմ : Կծում եմ Առլովայի ոտը : Նա , ծիծաղելով ու ծվվալով , նայում է ներքեւ : Ոտքի եմ կանգնում գեղեցիկուհու կօշիկը ձեռքիս , լեցնում եմ շամպանիայով և խմում եմ նրա կենացը : Ոգեւորութիւնն ա՛նասելի է : Առլովան սքանչացած է , ասում է առաջին անգամն եմ տեսնում ձեզ նման երկրպագու գեղարուեստի : Ահ , շարսակսիս , մերիկոյ... Կին չէ , այլ դիցուհի... (Չեղք զարկելով Սաղաթէի ուսիկ) Այժմ , քեռի , նրա սիրտն իմն է ամբողջովին : (Չեղք զարկելով Սաղաթէի փորիկ) : Կըկամնա՞ս , ծանօթացնեմ , աա՞ , առաքինի Բաղդասար... :

ՍԱՂ. Գնա բանիդ է : Դու ինձ այն ասա , ի՞նչ նստեց այդ քէֆը :

ՍՈՒՐ. Համեմատաբար , ոչինչ , դատարկ բան—վեց հարիւր ուուրի :

ՍԱՂ. (Չարեւոցումից յեւ քոջելով) Փա՛հ , քո տունը չըքանդուի , օղո՛ւլ... :

ՍՈՒՐ. Կծեց , հաա՞ :

ՍԱՂ. Վեց հարիւր մանէ՛թ , մի գիշերո՞ւմ : Դէ լաւ , ամօթ չըլինի հարցնելը— ե՞րբ ես վէքսէյներս այն անելու :

ՍՈՒՐ. Երբոր պայմանաւորուած ժամանակը կըզայ , այնա կանեմ :

ՍԱՂ. Ես պէտք է սպասեմ քո հօր մահուա՞ն :

ՍՈՒՐ. Այո , ի՞նչ արած :

ՍԱՂ. Բայց նա ինձանից առողջ է, կարող է ինձ նման տասին թաղել:

ՍՈՒՐ. Ես ինչ անեմ, դու ինքդ ես ինձ սովորեցրել: Տալիս ես 300, ստանում ես 2 հազարի վէքսել, որ հօրս մահից յետոյ վճարեմ: (Լորտիսի): Ախ, քեռի, գլուխս սկըսեց ցաւել: Տրամադրութիւնս փչացաւ: Ամէն անգամ այդ տեսակ մեծ քէֆից յետոյ կեանքն ինձ թւում է յիմար, ձանձրալի բան: (Նկատելով Երանուհուն, Ռօզալիային եւ Բագրասին) Ահա գալիս է ընտանեկան իդիլիան:

ՏԵՍԻԼ IX.

ՆՈՅՆՔ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՌՕԶԱԼԻԱ ԵՒ ԲԱԳՐԱՏ:

Դուրս եւ կալիս սեղանասանից

ԵՐԱՆ. Սաղաթէլ, Չարուհուն հրամայիր, որ քեզ նախաճաշ տայ:

ՍԱՂ. Անմիջապէս ակցեում ե սեղանասուն:

ԵՐԱՆ. (Սուրհկին): Իսկ քեզ ասելն աւելորդ է. դու, երեւի, կուշտ ես:

ՍՈՒՐ. Մախոյս լինէր, ուրախութեամբ մի աման կ'ուտէի:

ԵՐԱՆ. Ո՛րտեղ էիր ամբողջ գիշեր:

ՍՈՒՐ. Աստղագիտութեամբ էի զբաղուած, մամա: Այժմ աստղերն երկնքից իջել են օպերետային թատրոն:

ԲԱԳՐ. Ամաչեյո՞ւ ես մի օր, թէ՞ չէ: Ի՞նչ իրաւունքով ես Դիլբարեաններից ստացել բնակարանի վարձը և ծախսել:

ՍՈՒՐ. Յարգելի ինժեներ — տեխնօլօգ, կարծեմ, ես նոյնպէս իմ հօր հարազատ որդին եմ, ինչպէս դու:

ԲԱԳՐ. Դու ապականեցիր մեր ընտանիքի անունը:

ՍՈՒՐ. Դեռ հարց է. կ'ս, թէ՞ դու, պարոն Կեչեֆտմախեր: Ես կեղար փչացնում եմ, իսկ դու պաշտում ես: Էհ, բերանս բաց մի անէք, թէ չէ — լեզուս չար է:

ՌՕԶ. Գիտեմ. ինչ է քո չար լեզուն: Մայրիկ, երէկ նա ինձ անուանեց աղուէսի պօչ:

ՍՈՒՐ. Իսկ այսօր կ'անուանեմ Մարքիզուհի Դալլաքեան, ի՞նչ էիր այսօր ուռել ու փքուել կարեթում: Ուղղակի ծիծաղելի էր: Այն կարտօֆելի տոպրակ, Վարդանին էլ կարմիր չերքէզի է հազցրել ու առաջքը նստեցրել: Հերիք չէ. որ անուշեղ Գիւլում է, փոխել ես Ռօզալայի, հիմա էլ իշխանուհու շիկ ես բանեցնում: Հէէ, դալլաք էլիզբարի թոռն: Թողէք, Աստուած սիրէք, ամէնքդ ինձ համար ծիծաղելի էք. բացի խղճալի մայրիկից:

ՄԱՐԳ. Դուրս ե կալիս հօր սեկետակից:

ՍՈՒՐ. Եթէ ձեր մէջ կայ մէկը, որ կարող է ինձ նախատել, ահա, սա է: (Յոյց ե սալիս Մարգարին):

ՏԵՍԻԼ X.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ:

ՌՕԶ. Ինչ ասել կ'ուզի, երեւելի սեկօմենդասիօն է:

ՍՈՒՐ. (Կծու) Յամենայն դէպս, արժէ Ռթարեանի համակրանքից զրկուելուն:

ՌՕԶ. Մայրիկ, զօպի՛ր նրան: Նա ինձ վիրաւորում է: (Սուրհկին): Սուտ է, նա ինքն է զրկուել իմ համակրանքից:

ՍՈՒՐ. Այո, այն օրից, երբ զգացել ես, որ դու չես նրա հաւանելին: Իսկ առաջ, երբ ուսանող է՞ր. Բիչ էր մնում նրա անուշով մոմ վառէիր: Այս այնքան ճիշտ է, որքան այն, որ այս բոպէիս իմ գրպաններում մեծ օղափոխութիւն կայ: (Դադար): Ո՛րտեղ է հայրեկը:

ԲԱԳՐ. Քո բանը չէ:

ՍՈՒՐ. Հէ. թաղցրէք ինձանից, բայց ես ամէն բան

զիտեմ. գայլը թակարդ է ընկել, իւր թաթերն է կրծոտում:

ԲԱԳՐ. Կարծեմ, դու սկսում ես չարից անցնել:

ՌՕԶ. Նա հարբած է, չարժէ հետը խօսել:

ԵՐԱՆ. Գժուել է:

ՍՈՒՐ. Է՛հ, ի՞նչ էք ամէն կողմից ապշած մտիկ անում:

Ամբողջ քաղաքն է խօսում: Պէտք է բաժբասանքներին

վերջ տալ: Երկուսից մէկը--կամ Օթարեանը ճշմարիտն է

ասում կամ զրպարտում է: Եթէ զրպարտում է, պէտք է

պատժել: (Բագրասին) Աա՛, վախենո՞ւմ ես, դողո՞ւմ ես,

դատարանո՞վ ես սպառնում:

ԲԱԳՐ. (Վիրաւորում եւ վրդովում) Վախկտար նա է,

որ մի կնոջ պատճառով ապտակ է ստանում և կուլ տալիս:

ՍՈՒՐ. Չայնդ կարիր, շուն: (Յարձակում փրկել):

ԵՐԱՆ. (Ընկնում է որդիների մեջ): Աժան, Տէր Աստուած:

ՄԱՐԳ. Աստուած ի՞մ, և սա ընտանիք է...

ԱՆԴՐ. (Երեւում է, իւր սենեակի դռների մեջ՝ առանց

պիջակի, ժիլետի): Այդ ի՞նչ աղձուկ է: (Նկատելով Սուրհենին):

Աա, այդ դո՞ւ ես, անառակ զաւակ: Ես քեզ կը խեղդեմ

չան պէս: (Յարձակում է փրկել):

ՍԱՂ. (Որ դուրս է փազել Անդրեասի ձայնին սեղանսնից,

անձեռոցիկը կրծքին փաքաքած): Հանգստացի՛ր, Անդրէաս...

(Բռնում է նրա քեից, յետ ֆաշում):

ԱՆԴՐ. Կորիր... Ես քեզ ասել եմ, որ աչքիս չերևաս...

ՄԱՐԳ. (Բռնելով Սուրհենի քեից): Աժօթ է, խեղճի եկ:

(Տանում է նրան ձախ կողմի դռներով եւ խալոյն մեկակ վերա-

դառնում):

ԱՆԴՐ. Ահա ի՞մ կեանքը. պառկեցի մի քիչ հանգստա-

նալու, չըթողին: (Թոյլ է արթն, որ Սարաքին իրան սակի

իւր սենեակը): Անիծուիք դուք...

ՌՕԶ. (Մարգարսին): Օ՛ձ, այդ դու ես նրան սովորեցրել:

ՄԱՐԳ. Ամաչիր ասածիցդ, Ռօզալիա:

ԵՐԱՆ. Հի՞մա էլ դուք: Այս ի՞նչ տուն է, Տէր Աստուած:

ՌՕԶ. Սպասիր, մի օր ես քեզ հետ հաշուի կընտան:

(Ուզում է գնալ իւր սենեակը, բայց, Օրսեանին տեսնելով, կակզ է

առնում):

ՏԵՍԻՒՆ XI.

ԵՐԱՆՈՒՀԻ, ՄԱՐԳԱՐՏԻՏ, ՕԹԱՐԵԱՆ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ:

ՕԹԱՐ. (Ներս է մտնում նախասենեակի դռներից ուրախ դիմելով): Բարով ձեզ, մայրիկ: (Ձեռք հանքուրում է) Օրիորդ Ռօզալիա, բարով: (Ուզում է ձեռն արթնացնել):

ՌՕԶ. (Արհեստարմատով, բայց վրդովում): Մենք ծանօթ չենք, պարոն:

ՕԹԱՐ. (Ցնցունելով): Օրիորդ, այդ ի՞նչ է նշանակում:

ՌՕԶ. (Կծու ծիծաղով) Մերահարներ: (Անցնում է իւր սենեակը):

ՏԵՍԻՒՆ XII.

ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՅ ՌՕԶԱԼԻԱՅԻ:

ՕԹԱՐ. (Ապշած նայելով Ռօզալիայի ետեից, մտնում է եւ մեկնւարար սեղանում Մարգարտի ձեռք): Չեմ իմանում, ինչո՞վ եմ ես արժանացել նրա ատելութեանը:

ԵՐԱՆ. (Որ նստել է աջ կողմի բազկաթոռներից մեկի վրայ): Ոչինչ, որդի, մի՛ նեղանար: Այստեղ մի փոքրիկ ընտանեկան խոտովութիւն պատահեց: Ռօզալիան վշտացած է:

ՕԹԱՐ. Եթէ ես որևէ բանով մեղաւոր եմ նրա առջև, պատրաստ եմ ներումն ինդրել:

ԵՐԱՆ. Է՛հ, ուշադրութիւն մի՛ դարձրու, երեխայ է, չի հասկանում: Նստի՛ր, ի՞նչպէս է մայրդ:

ՕԹԱՐ. (Զայեղով իրան) Շնորհակալ եմ, մայրիկ, դուք շատ բարի էք դէպի մեզ:

ԵՐԱՆ. Ես քեզ սիրում եմ հարազատ որդուս պէս: Ուրախ եմ, որ մեծացել ես և օրինաւոր մարդ դարձել: Լըսել եմ, որ քո և իմ մարդու մէջ ինչ-որ վէճ է բացուել: Այդ ինձ շատ է ցաւեցնում, որդի, շա՛տ...

ՕԹԱՐ. Մայրիկ, ինչ էլ որ պատահի, իմ սէրն ու յարգանքը դէպի ձեզ չի պակասիլ: Դուք բարձր էք բոլոր վէճերից:

ԵՐԱՆ. Է՛հ, օրհնեալ լինիս: Իմ ցանկութիւնն էլ այն է, որ բարեկամ մարդիկ հաշտ ապրին, փողի համար չըմտանան Աստուծոն:

ԶԱՐ. (Գալիս է օրհորդների սենեակից՝ սեղանիստն անցնելով): Տիրուհի, օրհորդը ձեզ խնդրում է: (Անցնում է սեղանիստն և խխիլի բնակի վերադառնում է օրհորդների սենեակը ձեռքին մի գրածիկ ջուր եւ դասարկ բաժակ):

ԵՐԱՆ. Է՛հ, էլի, երեւի, հիստերիկան սկսուեց: (Շատ պով գնում է օրհորդների սենեակը):

ՏԵՍԻԼ XIII.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ

ՕԹԱՐ. (Անկաւրբեր մօտեցրով Մարգարիտին) Ի՞նչ է պատահել այստեղ, ասա՛:

ՄԱՐԳ. Սովորական խռովութիւն: Սուրէնն ընդհարուեց Ռօզալիայի և Բագրատի հետ ու միմիանց վիրաւորեցին:

ՕԹԱՐ. Բայց ե՞ս ինչով եմ մեղաւոր, որ քոյրդ ինձ անպատուեց:

ՄԱՐԳ. Ներողամիտ եղիր, Ռօզալիան չըզիտէ իրան զսպել: Ես համոզուած եմ, որ յետոյ ինքը կըղղջայ: (Զա-

ռուհուհ, որ այդ միջոցին, օրհորդների սենեակից դուրս գալով գրածիկն ու բաժակը ձեռքին, անցնում է սեղանիստն): Ի՞նչպէս է:

ԶԱՐ. Ոչինչ, մի քիչ լաց եղաւ, հանդարտուեց: (Գլուհում է սեղանիստն):

ՄԱՐԳ. Թողնենք այդ: Աւելի կարեւոր գործ կայ: Հայրս ուղարկել է քեզ կանչելով:

ՕԹԱՐ. Այո: Ո՞ւր է նա:

ՄԱՐԳ. Իւր սենեակումն է, հանդատանում է: Նստի՛ր: Եթէ կամենաս, իսկապէս ինձ ես հարկաւոր: Նստի՛ր: (Նըստում եւ աջ կողմի բազկաբառների վրայ): Դու ինձ երկու կրակի մէջ ես գցել: Ես հաւատում եմ քեզ, բայց ուզում եմ հօրս էլ հաւատալ, Դուրս բեր ինձ այս անտանելի գրութիւնից: Երկուսից մէկը — կամ դու մոլորուած ես կամ հայրս իսկապէս մի յանցաւոր է:

ՕԹԱՐ. Լսի՛ր, Մարգարիտ: Ես քանիցս քեզ ասել եմ, որ այդ դասն ինձ համար բարոյական մեծ նշանակութիւն ունի: Հաւատա՛. փողն արժէք չունի իմ աչքում:

ՄԱՐԳ. Ախ, մի՞թէ ես քեզ նոր եմ ձանաչում: Բայց, հասկացի՛ր, քո և իմ հօր փոխադարձ թշնամութիւնը կաքոզ է ինձ կործանել, ահա ինչիցն եմ վախենում:

ՕԹԱՐ. Սիրելի, անգին Մարգարիտ, մի՛ պտորիք հոգիդ մտայլ մտքերով: Ես գիտեմ, որ դու պաշտում ես հօրդ, բայց ես այնքան նրա դէմ չեմ զինուած, որքան եղբօրդ դէմ:

ՄԱՐԳ. Բագրատը բարեսիրտ չէ, ես գիտեմ այդ:

ՕԹԱՐ. Նա ինձ արհամարհել է ընկերական շրջաններում: Նա ինձ ստորացրել է տեղի և անտեղի: Նա ինձ քանի քանի անգամ անուանել է ձրիակիր: Ես ուզում եմ ազատուել մուրաքեղանի վիրաւորական գրութիւնից: Ուզում եմ արժանանալ քո սիրո՞յն: Մի՞թէ չես հասկանում իմ պահանջի իսկական նպատակը:

ՄԱՐԳ. Հասկանում եմ, շատ լաւ եմ հասկանում: Բայց ե՞ս ինչ անեմ, ե՞ս: Դու գիտես, որ ես քեզ սիրում

եմ անսահման, բայց չէ՞ որ սիրում եմ և հօրս: Այսօր նա
ինձ այնպիսի խօսքեր ասաց, որ ամօթից պատրաստ էի
գետինը մտնել: Չեմ կարծում, որ նա այդ խօսքերն ասէր,
եթէ իսկապէս իրան մեղաւոր զգար: Նա փաստեր է պա-
հանջում և կամենում է, որ ես ստուգեմ այդ փաստերը:

ՕԹԱՐ. Եւ դու ուզում ես ստուգել: Հասկանում եմ:
Ի՞նչ մէջ կուում են երկու հաւասար զգացումներ — հաւատը
զէպի հայրդ և հաւատը զէպի ինձ:

ՄԱՐԴ. Ահա հէնց այդ է ճիշտը, ի՞նչ լաւ զգացել ես
իմ դրութիւնը:

ՕԹԱՐ. Շատ լաւ, ես քեզ դուրս կըբերեմ այդ երկ-
զիմի դրութիւնից:

ՄԱՐԳ. Այո, այո, դուրս բեր:

ՕԹԱՐ. Կըներկայացնեմ քեզ իմ բոլոր ապացոյցները:

ՄԱՐԳ. Ես հէնց այդ մասին էի ուզում քեզ խնդրել:

ՕԹԱՐ. Թող այդպէս լինի: Ինձ համար քեզանից ա-
ւելի մեծ դատաւոր չի կարող լինել: Բաւա՛լան է, որ դու,
միայն դու, ասես եղբորդ, թէ ես ճրիակեր չեմ եղել, և ես
պատրաստ եմ հրաժարուել իմ ժառանգութիւնից: Ես կարող
էի դատարանի զիմել, բայց այդ չեմ անում միայն քո պատ-
ճառով: Ուրեմն դու եղիր մեր դատաւորը:

ՄԱՐԳ. Շնորհակալ եմ, անչափ չնորհակալ: Եւ հա-
ւատա, որ ես կըլինիմ արդար դատաւոր:

ՕԹԱՐ. (Թերեւ զեցումով): Ահ, հէնց այդ է, որ ինձ
սարսափեցնում է:

ՄԱՐԳ. Ինչո՞ւ...

ՕԹԱՐ. Մարդարիտ, տո՛ւր ինձ խօսք, որ երբ ճըշ-
մարտութիւնը կըպարզուի քեզ համար — չես ընկճուիլ նրա
դառնութիւնից:

ՄԱՐԳ. Մի՛ առաջարկիր ինձ ոչ մի պայման: Դու
ինքդ ես ինձ սովորեցրել ճշմարտութիւնն ամէն բանից
գերադասել: Բե՛ր այդ թղթերը, ես ուզում եմ վերջին
կասկածը հեռացնել իմ սրտից: Եւ չեմ թագցնում, որ ում

կողմ ես լինի արդարութիւնը — ինձ է կործանելու, որով-
հետեւ անդունդը ուր որ բացուի — իմ և հօրս մէջ թէ՛ իմ
և քո մէջ — ես եմ դիրուելու այնտեղ: Բե՛ր այդ թղթ-
թերը, ես պահանջում եմ սիրող կնոջ իրաւունքով:

ՕԹԱՐ. (Միևէ Մարգարիտի արսասանում և իւր խօսքերը,
Օրսրեակը սակցում և եւ կուում իւր հետ: Երբ Մարգարիտը
վերջացնում է, լուրջով): Շատ լաւ, ես կը բերեմ: (Վեր է
կենում):

ՄԱՐԳ. Հէնց այսօր:

ՕԹԱՐ. Մի քանի բոպէից յետոյ ես այստեղ կըլինիմ:
(Գնում է նախասենեակի դռներով):

ՄԱՐԳ. (Ուղեկցում է նրան միևէն դռները, ապա գալիս է
քեանի կենտրոնը):

ՏԵՍԻԼ XIV.

Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ե Ի Ս Ո Ւ Ր Է Ն:

ՍՈՒՐ. (Ներս է մտնում ձախի դռներից): Չկարողացայ
քնել: Հանգիստ չեմ: Մարդու հոգեկան տրամադրութիւնը
զարմանալի կապ ունի գրպանի դրութեան հետ: Երբ այս
անիծուածը դատարկ է, ինչ ուզում էք ասէք՝ քնել չեմ կա-
րողանում: Այո, սիրելի Մարգարիտ, այս մի նոր հողեբա-
նական գիւտ է: Հետեւաբար, չե՞ս կարող, արդեօք, ինձ
հաշտեցնել այն բթամիտ Մորփէոսի հետ:

ՄԱՐԳ. Ես փող չունիմ:

ՍՈՒՐ. Դու, կարծեմ, հայրիկից ամսական 300 ուրբլի
ես ստանում:

ՄԱՐԳ. Ես վաղուց եմ դադարել հայրիկից փող վերցնել:

ՍՈՒՐ. Ահա թէ ինչ: Ատո՛ւմ ես փողը, փիլիսոփայ ես:

ՄԱՐԳ. Ինչի՛ս է հարկաւոր փողը, երբ տանն ամէն
բան պատրաստ կայ:

ՍՈՒՐ. Այդ էլ ճիշտ է: Բայց ինձ հարկաւոր է, ախ, շատ հարկաւոր: Առանց փողի, ես համարեա առանց ոտների եմ: Ես էլ եմ ատուժ փողը և միշտ աշխատում եմ նրանից բաժանուել: Երբ զրպանս մի քանի-զրօշներ են մանում, մէկէլ տեսար մոծակների պէս կծոտեցին ինձ: Է՛հ, ես էլ շտապում եմ նրանց բաց թողնել: Բայց, այնու ամենայնիւ, առանց փողի տխուր է: Ախ, Մարգարիտ, կեանքը շատ տխմար բան է: (Քիչ լուռ է): Տխուր է, շատ տխուր: Ես ուղղակի ձանձրացել եմ կեանքից:

ՄԱՐԳ. (Շրջելով, քաղծաղի յանդիսնսնուքեանք): Քսան ու երեք տարեկան հասակում:

ՍՈՒՐ. Քի՛չ է: Մեր ժամանակում մարդիկ շատ են տեսնում, շատ են զգում և շուտ ձանձրանում: Ազնիւ խօսք, հիմա ես հրբեմն ինքս ինձանից վախենում եմ: (Հանում է գրպանից ռեկորդները): Այ, տե՛ս, մի հարուած, և Ռուբրիկօնն անցայ:

ՄԱՐԳ. Թո՛ղ, յիմարութիւններ մի՛ արա, կա՛ող է տրաքել:

ՍՈՒՐ. Ոչ, այս հեշտ տրաքողներից չէ: (Յոյց է արխ): Այ, այսպէս է տրաքում. պէտք է այս յետ քաշել, մատով սեղմել, և պատրաստ է:

ՄԱՐԳ. Տո՛ւր ինձ, մի՛ պահիր մօտդ, վտանգաւոր է:

ՍՈՒՐ. Ես հէնց ինքս ուզում էի դէն ձգել: (Տալիս է) **Վերցրու,** հրաժարի՛մք ի սատանայէ: (Լուռ իւն) Ուրեմն, չունի՛ս:

ՄԱՐԳ. Չունի՛մ: (Ռեկորդները նայում է քիչ եւ դնում սեղանի վրայ):

ՍՈՒՐ. (Լուռ իւն) Եւ ոչ գոնէ յիտուն ոտըլի՞:

ՄԱՐԳ. (Գլխով քաշում և նայում է):

ՍՈՒՐ. Յաւալի է, շատ ցաւալի: Կրնչանակէ՛ այսօր Առլովային չըպիտի տեսնեմ: Այդ անկարելի է, ամօթ է, կ'աթի՛ շայն տղան ծախսից փախաւ և էլի կըմօտենայ Արուլովին: (Նստում է ձախ կողմի քաղկարտներից մեկի վրայ, մը-

սածում: Լուռ իւն: Յանկարձ անը զարկում է ձախսիլ): **Է՛վ-**
րէկա, էղիստօն եմ, էղիստօն: Ո՞րտեղ է Ռօզալիան:

ՄԱՐԳ. Իւր սենեակում:

ՍՈՒՐ. Նա փող կ'ունենայ (Գլխում է դիպի խորի ձախ դուները):

ՄԱՐԳ. Այդքան վիրաւորելուց յետոյ ուզում ես դիմել նրա՞ն:

ՍՈՒՐ. (Կանկ է ստնում): Աա, այդ դատարկ բան է: Նա գիտէ, որ իմ սիրտը բարի է, լեզուս է միայն չար: Կըհաշտուենք, դժուար չէ, Մի քիչ կըչոյեմ, կըզովեմ գեղեցկութիւնը, իսկոյն կըկակդի:

(Շրջելով անցնում է օրխորդների սենեակը):

ՏԵՍԻԼ XV.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ԱՆԴՐԷԱՍ:

ՕԹԱՐ. (Ներս է մտնում նախասենեակից, այս անգամ վերարկուով): Ահա, սիրելիս, բողբոլ: (Տալիս է մի ծրար): Այստեղ է իմ պատիւը, ինքնասիրութիւնն և ամբողջ կարողութիւնը:

ՄԱՐԳ. Շնորհակալ եմ, դու մեծ հաւատ ես բնծայում ինձ:

ՕԹԱՐ. Այս տեսակ հաւատը քո գործնական եղբայրն անշուշտ կըհամարի յիմարութիւն: Սակայն այդ ինձ համար նշանակութիւն չունի: Ես սիրում եմ քեզ, ուրեմն և՛ պէտք է հաւատամ:

ՄԱՐԳ. Որքա՞ն բարի ես դու և վեհանձն. Արտաշէս:

ՕԹԱՐ. Միայն քո սիրոյ համար: (Հանքում է):

ՄԱՐԳ. Վաղը կամ միւս օրը դու բողբոլ յետ կըստանաս, թող իմ խօսքը քեզ համար զրաւական լինի:

ՕԹԱՐ. Բաւական է այդքանը: Յրտեսութիւն:

ՄԱՐԳ. Յրտեսութիւն: (Ուղեկցում է նրան միևնույն կա-
խանակաւի դուները):

ԱՆԴՐ. (Երեւում է իւր սենեակի դուների մեջ):

ՄԱՐԳ. (Վերադառնում է բեռի կեկերունը եւ ուզում է
զնայ իւր սենեակը):

ԱՆԴՐ. (Իբր թէ Օթարեակի չի նկատել) Այն ո՞վ էր:

ՄԱՐԳ. Ահա, հայրիկ, ամէն ինչ այստեղ է: Այժմ ես
կ'իմանամ ով է ձեզանից արդարը և մեղաւորը:

ԱՆԴՐ. Ապրի՛ս դաւակո: Քննի՛ր և տես: (Հանրաւորում
է նախաջ):

Գնում եմ իւրաքանչիւրի իւր սենեակը:

Վարագոյր:

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԳ

Նոյն տեսարանը: Երեկոյ է: Վարագոյրը բարձրանալիս
բեմում տիրում է կիսախաւար: Բոլոր դռները ծածկուած
են, միայն նախասենեակի դռների մի թեւը բաց է: Այն-
տեղ լուսոյ մի շերտ, թեք գծով անցնելով բեմով, ընկել է
դաշնամուրի վրայ, որի քով Մարգարիտը նստած նուազում
է ինչ որ թաղծալի եղանակ: Նրա ամբողջ մարմինը մթնումն
է, միայն գլուխն է երեւում լուսոյ շերտի մէջ:

Մի առ ժամանակ բեմի վրոյ, բացի Մարգարտից, ոչ
ուք չըկայ: Հետո լսում է էլէքտրական զանգակի հնչիւն:
Սեղանատան դռներից դուրս է գալիս Զարուհին և անցնում
է օրիորդների սենեակները:

ՏԵՍԻԼ I.

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ԲԱԳՐԱՏ:

ԲԱԳՐ. (Դուրս է գալիս ձախ կողմի դուներից ֆրակով եւ
կրծքին տեխնոլոգիական սեւաւրանի նշան, փողկապը կապելով):

Միշտ միևնոյն տխուր եղանակը օրուայ միևնոյն միջոցին:
ՄԱՐԳ. (Նուազելով) Ասում են, ժամերն իրանց արա-
մադրութիւնն ունին: Երեկոներն ես տիրում եմ ու յուզ-
ւում և միշտ այս եղանակը յիշում:

ԲԱԳՐ. Եւ նուազում ես պօէտիքական մթութեան մէջ,
որպէս իդէալական սիրահար: Բայց ինձ ներիք, ես ատում
եմ խաւարը: (Շուռ է ասլիս ստղմեսանի դուների մօտ կիւ-
տակաւի թելի կոճակը):

Առաստաղից քաշ առած ջանք սարսուռով է պայծառ լոյս:

ՄԱՐԳ. Բաւակա՛ն է: (Դարարուով է նուագել եւ դաշնու-
շնուրի կախարհը ցած գցում: Նկատում է Բագրուսի պատրաստ-
քիւնը): Այդո՛ւր ես պատրաստուում:

ԲԱԳՐ. (Կանգնելով հայելու սոջեւ, որ փողկապեւ ուղղի):
Տեխնօլօգներբի երեկոյթը: Գնա, հաղնուիր, քեզ էլ տա-
նեմ: Ռօզալիան պատրաստուում է: Դու այնտեղ կրտս-
նես տեղական ինտելլիգենցիայի ընտիր մասը:

ՄԱՐԳ. Ինչո՞ւ ընտիր:

ԲԱԳՐ. Երեկոյթում միայն ինժեներներն են լինելու:
Դու այնտեղ չես տեսիլ ոչ պօրաֆէյզի և ոչ սուբլու հե-
րոսներին, այսինքն՝ ոչ իրաւաբաններին և ոչ բժիշկներին:

ՄԱՐԳ. Ինչպէս երեւում է, շատ մեծ կարծիք ունիս
քո մասնագիտութեան մասին:

ԲԱԳՐ. Եռանդի, խելքի և ժամանակիս իսկական ներ-
կայացուցիչներն ինժեներներն են: Կրգա՞ս թէ չէ:

ՄԱՐԳ. Ես տրամադրութիւն չունիմ երեկոյթ գնալու:

ԲԱԳՐ. Չըսիրեցի սկզբից եւեթ այդ խօսքը— տրա-
մադրութիւն: Մարդուս իրանիցն է կախուած այսպէս կամ
այնպէս տրամադրել իրան: Ահ, այս անիծուածը չի կապուում:

ՄԱՐԳ. (Մօտենում է, օգնում փողկապը կապելու): Քեզ
համար հեշտ է այդ ասել: Դու հաշուում ես կեանքի բոլոր
հանգամանքների հետ:

ԲԱԳՐ. Եթէ, ի հարկէ, հանգամանքներն արժանի չեն
գիմադրութեան: Հակառակ դէպքում գիտեմ առողջ գատո-
ղութեամբ կուտել նրանց պէմ: (Մարգարիսն ուղղել է Բագ-
րուսի փողկապը): Շնորհակալ եմ: (Նայելով եղունգներին) Գի-
տես, սիրելիս, մեր ժամանակի միակ գերիշխանը բանակա-
նութիւնն է: Այս տեսակէտից ես չեմ կարող արդարացնել
վերջին ժամանակուայ քո արբութիւնը, որ արդէն սկսել
է բողոքի ձեւ սասանալ:

ՄԱՐԳ. Կրկամենայի ես էլ ուրախ լինել քրոջս պէս,
թոչկոտել, ինչպէս անհոգ թոչուն: Կրկամենայի ոչնչի մա-

սին չըմտածել, բացի իմ անձնական զուարճութիւններից:
Բայց, ի՛նչ արած, չեմ կարող: (Հառայելով, արևուզկեալ յե-
նում է դաշնաւնուրիկ):

ԲԱԳՐ. (Հեղնաբար): Սիրահարուած ես, տանջուում ես
մի անզուգական երիտասարդի, մի աննման իղէալիստի հա-
մար: (Լուրջ): Բաւակա՛ն է, Մարգարիտ: Ես չունիմ իրա-
ւունք քեզ յանդիմանելու, բայց այլեւս լսել չեմ կարող:
Բաւակա՛ն է: Թող երեխայութիւնդ: Դու չափահաս օրիորդ
ես, պէտք է հասկանաս, որ չունիս իրաւունք սիրելու քո
հարազատ ծնողի զրպարտչին:

ՄԱՐԳ. (Դրուխը բարձրացնելով) Իսկ եթէ նա զրպարտիչ
չէ, այն ժամանակ:

ԲԱԳՐ. Դու համոզուած ես:

ՄԱՐԳ. (Դրսիսնայեւ եւ ետանդով): Աւելի քան հա-
մոզուած եմ:

ԲԱԳՐ. Քայր, ինձ թւում է, որ քո ուղեղը սկսում է
խանդարուել: Տխմար սիրոյ զգացումը հարբեցրել է քեզ:
Եթէ այդպէս շարունակես ես քեզ էլ կ'ատեմ, ինչպէս ա-
սում եմ նրան:

ՄԱՐԳ. Ինձ համար այսուհետեւ միեւնոյնն է: Ես ունիմ
իմ ձեռքում փաստեր. որոնք քարերին անգամ կարող են
համոզել, թէ մեր հայրը կողոպտել է մի որբ ընտանիք, և
կողոպտել է ամենայն անգթութեամբ:

ԲԱԳՐ. (Շփոթուած եւ, միեւնոյն ժամանակ վրդովուած)
Մարգարիտ:

ՄԱՐԳ. Հայրիկի ցանկութեամբ ես Օթարեանից պա-
հանջեցի նրա դօկումենտները: Նա տօւեց: Բագրատ, բոլորը,
ինչ-որ ասում է նա, զուտ ձշմարտութիւն է: Ահ, այս միտքը
կարող է ինձ խելքից հանել: (Ընկնում անցորդսն է ա-
նում: Լուրսիւն):

ԲԱԳՐ. (Շփոթուած, չըգիտէ ինչ ասի): Դու ինձ բոլորո-
բովին շփոթեցրիր: Ո՞րտեղ են այժմ այդ գրաւոր ապա-
ցոյցները:

ՄԱՐԳ. Այնտեղ, իմ սենեակում, գրասեղանիս մէջ:

ԲԱԳՐ. Խօսե՛լ ես հայրիկի հետ:

ՄԱՐԳ. Այո:

ԲԱԳՐ. Ի՞նչ է ասում նա այդ փաստերի դէմ:

ՄԱՐԳ, Ի՞նչ կարող է ասել մի յանցաւոր, որին ներկայացնում են իւր յանցանքի լուսանկարը: Նա շփոթուեց, կարմրեց, կապուեց, բայց հերքել, ի հարկէ, չըկարողացաւ: Գնա պարահանդէս, առաւօտը, եթէ կամենաս, կարող ես բոլորը կարդալ:

ԲԱԳՐ. Այ, ի՞նչ պարահանդէս: Ես ամէն ինչ մոռացայ: Ուրեմն ճիշտ է, որ մեզ սպառնում է սնանկութիւն:

ՄԱՐԳ. Ախ, քեզ սնանկութիւնն է անհանգստացնում, իսկ ինձ տանջում է անպատուութիւնը: Այժմ ամէն ինչ կախուած է Օթարեանի կամքից:

ԲԱԳՐ. Նա կը կամենայ թէ՛ անպատուել և թէ՛ սնանկացնել մեզ: Նա սոսկալի ռխ ունի իմ դէմ: Յոյց տուր ինձ: Ես ուզում եմ իմ աչքով տեսնել այդ թղթերը և անձամբ հաւատարմանալ:

ՄԱՐԳ. (Սորերդաւոր եւ եռանդով): Բայց զգո՛յ՛, նրանց ապահովութիւնը պատուովս եմ երաշխաւորել:

ԲԱԳՐ. (Վիրաւորուած): Ես աւազակ չեմ, Մարգարիտ:

ՄԱՐԳ. Գնանք: Տես և համոզուէր, թէ ումի փողերով ես ուզում մեծ-մեծ ձեռնարկութիւններ սկսել:

Գնում եմ խորքի ձախ դռներով, այն է օրխորների սենեակները:

ՏԵՍԻՒԼ II.

ԱՆԴՐԷՍԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

Գոյիս եւ երախտակներից:

ԱՆԴՐ. Նա աղջիկ չէ ինձ համար, դատաւոր է: Ամբողջ գիշեր աչքերս չեմ փակել, ամբողջ օրը տանջուել եմ: Ես կարծում էի, որ այդ թղթերը կորած են: Էհ, ասում

էի, կնիկ է խելքը բան չի կտրիլ: Քիչ է պատահել, որ կանայք իրանց մարդուց մնացած հարկաւոր թղթերն այրել են: Բայց այդ մէկը յիմարներից չի եղել: պահել է որ այսօր որդին զլխիս փորձանք բերի: Նա չի ինդրում, Սաղաթէլ, այլ, հողեհանի պէս պահանջում է, որ վիզս ծուխ այդ լակոտի առջեւ, մեղայ դամ և տամ նրա կարողութեանս կէսը:

ՍԱՂ. Դու ինքդ աչքովդ տեսա՞ր այդ թղթերը:

ԱՆԴՐ. Տեսայ, բաս չէ՞: Նա ցոյց տուեց մօր մօտ: Կանգնեց հեռուում, մէկ-մէկ կարդաց, յիշեցրեց բոլորը և յետոյ իսկոյն փակեց իւր գրասեղանի մէջ:

ՍԱՂ. Ի հարկէ, մայրն էլ պակասը լրացրեց, պատմելով աղջկան իւր գիտեցածը:

ԱՆԴՐ. Օօ, քոյրդ Աստծու պատիժն է իմ գլխին: Ինձ պաշտպանելու տեղ, աւելի խայտառակեց աղջկայ մօտ: Ես կատաղեցի, յարձակուեցի վրէն, որ տեղն ու տեղը խեղդեմ նրան: Բարեբախտաբար, Մարգարիտը ժամանակին մէջ ընկաւ, չըթողեց: Նա փաթաթուեց մօր վզին: Պէտք է տեսնէիր, ինչպէս էր լաց լինում: Դիակիս վրայ էլ նա այնքան արտասուք չի թափիլ: Եւ յետոյ, երբ ուշքի եկաւ, ի՞նչ խօսքեր, Տէ՛ր Աստուած, ի՞նչ լեզու: Հայրիկ, ասում է, մոլորուել կարելի է, բայց պէտք է զղջալ, չըզղջալն աւելի մեծ անազնութիւն է: Ումի՞ց է սովորել այդ բաները:

ՍԱՂ. Ումի՞ց: Ի հարկէ, հէնց այդ լակոտից: Դեռ Աստուած գիտէ էլի ինչեր սովորեցրած կըլինին:

ԱՆԴՐ. Փորձեցի ինձ արդարացնել: Ասացի, ընկերս մեռնելիս տափերը գին չունէին, եկամուտ չէին բերում, ի՞նչ կարող էի տալ որբերին: Ասացի, յետոյ են թանգացել, ի հարկէ, իմ բախտից, որովհետեւ եթէ մեռելը բախտ ունենար—չէր մեռնիլ: Բայց ես խօսմ իմ ընկերով որբերին չեմ մոռացել: Ես օգնել եմ, հիմա էլ ուզում եմ օգնել, միշտ կ'օգնեմ, ձե՛ռք վերցրու: Ոչ, ասում է, դու պարտաւոր ես տալ նրանց բոլորը, ինչ-որ հասնում է օրէնքով: Լսո՞ւմ ես, Սաղաթէլ, բոլորը տալ: Կարծում է, այդ կարելի բան է,

կարծում է, որ դա փող չէ, թէկուզ զողացած փող: Բայց փողը դեռ մի կողմ: Իսկ պատիճ: Ինչ կըմտածեն մարդիկ: (Անց ու դարձ հ սևում):

ՍԱՂ. Ինչ պիտի մտածեն: Կ'ասեն, որ էլիզբարովը գող էր և այժմ, դասաստանից վախենալով, զողացածը յետ է տալիս: Արի ու այն ժամանակ երեւացիր հասարակութեան մէջ: Աչքերդ թքով կը հանեն: Իսկ ե՞ս... ես քեզ կըհամարեմ յիմարի մէկը...

ԱՆԴՐ. Մտում էր մի բան, այն էլ փորձեցի: Ասացի. աղջի, սիրում ես այդ երիտասարդին, նա էլ քեզ է սիրում: Էլ դրանից լաւ բան: Եկ ձեզ պսակեմ: Լաւ օժիտ կըտամ, տուն ու տեղ կըսարքեմ: Տո՛ւր ինձ թղթերը:

ՍԱՂ. Հըը՞, դբան ինչ ասաց:

ԱՆԴՐ. Ոչ, հայրիկ, ասում է, ես քեզանից փողի օժիտ չեմ ուզում, այլ պատիւի օժիտ: Քանի որ դու ընկերոջդ գերեզմանի առջեւ մեզաւոր ես, ես չեմ կարող նրա որդու հետ բախտաւորուել: Նա ամէն բոպէ իրաւունք կ'ունենայ երեսիս ասելու. «Հայրդ կողոպտել է հօրս»: Այդ նախապինքն ես օտանել չեմ կարող իմ ամուսնուց:

ՍԱՂ. Լեզուին նայիր, լեզուին: Փիլիսոփայի պէս է խօսում:

ԱՆԴՐ. Ախ, Մարգարիտն իւր պապի ժառանգն է, քո հօր կտորը: Երէկ, երբ նա խօսում էր, ինձ թւում էր, որ նրա ետեւում, պատի տակ, կանգնած է Տէր-Սիմօնը՝ Աւետարանի խօսքերը բերանում:

ՍԱՂ. Բայց, ախար, հայրս հողեւորական էր, պարտաւոր էր ճշմարտութիւն քարոզել, իսկ մենք աշխարհականներ ենք մեր բանն ուրիշ է: Ինչո՞ւ չեն հասկանում այդ կանայք:

ԱՆԴՐ. Հիմա ճանապարհ ցոյց տուր ինձ, Սաղաթէլ, ինչ անեմ, ինչպէս ազատուեմ այդ լակոտից:

ՍԱՂ. Ինչ պիտի անես: Ինքդ վաղուց ես գտել ճանապարհը: Արա այն, ինչոր վճռել ես անելու:

ԱՆԴՐ. Այո, պէտք է անպատճառ անել, ուրիշ ելք չրկայ: Ես հէնց դրա համար աշխատեցի, որ այդ թղթերը Մարգարտի ձեռքն անցնին:

ՍԱՂ. Բայց պէտք է անել շուտով, հէնց այս գիշեր, վաղն ուշ կըլինի:

ԱՆԴՐ. Սո՛ւս, ոտների ձայն եմ լսում: Գալիս են: Գնանք իմ սենեակը, այնտեղ կը մտածենք ինչպէս գլուխ բերենք այդ բանը:

Գնում են այ կողմի սուաջիկ դուներով:

ՏԵՍԻԼ III.

ՄԱՐԳԱՐԻՏ, ԲԱԳՐՍՏ ԵՒ ՌՕԶԱԼԻԱ.

Դուրս են գալիս միսածանուակ օրիորդների սենեակից:

ԲԱԳՐ. (Յուզուել է): Բուրբ կասկածներս վարատուեցին, վտանգն անխուսափելի է:

ՌՕԶ. (Հագնուել է պարսպանդիսի հասար: Ձեռնոցներն է հագնում): Ես էլ ասում եմ, քոյրս երէկ ինչ թղթեր էր քրքրում և ինձ տեսնելիս թողցնում. Ինչ ասել կ'ուզի, երեւելի սիրահարական նամակներ են — պայմանագրեր, առեւտրական թղթեր, ֆի': (Մտնում է հայեղուն եւ դիտում իրակ):

ԲԱԳՐ. (Մսազբայ, ձեռները մեջքիս դրած, սնցել է բեկի այ կողմը): Ասա՛ ինձ, Մարգարիտ, կարո՞ղ ես այդ թղթերը մի քանի օր պահել մօտդ:

ՄԱՐԳ. Ոչ:

ԲԱԳՐ. Ինչո՞ւ:

ՄԱՐԳ. Ես խօսք եմ տուել վաղը վերադարձնել նրան:

ԲԱԳՐ. Ես կարծում եմ, նախ քան վերադարձնելը հարկաւոր է մի լաւ մտածել:

ՄԱՐԳ. Ի՞նչ ես ուզում ինձանից. պարզ ասա :

ԲԱԳՐ. (Տասնուներով) Ինձ թւում է, որ խելացի բան չէ մի այդպիսի գէնք վերադարձնել մեր հակառակորդին :

ՄԱՐԳ. Ի՞նչ, ուրեմն, դու պահանջում ես, որ ես...

ԲԱԳՐ. (Սառն) Որ դու այդ թղթերը չըտաս Օթարեանին :

ՄԱՐԳ. (Վրդովուերով) Ուրեմն դո՞ւ... Ամաչիր կրճքիդ նշանից, Բագրատ :

ԲԱԳՐ. (Գրգռուերով) Է՛հ, թո՛ղ այդ դատարկ ֆոագները, ի սէր Աստուծու : Ես գիտեմ, որ այդ պարոնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվերոյ մտքեր : Բայց մենք ասպետների դարում չենք ապրում :

ՄԱՐԳ. (Դառն հեզուերեանք) Կարծես, մեծ ասպետութիւն է տարրական ազնուութիւն, հասարակ մարդկային խիղճ ունենալը :

ԲԱԳՐ. Խղճի և ազնուութեան մասին ամէն մարդ իւր գաղափարն ունի : Էականն այն է, որ եթէ այդ թղթերն անցնին Օթարեանի ձեռքը, ես կը զրկուիմ իմ գործարանից : Իսկ այդ կը նշանակէ՝ ծովը նետել իմ բոլոր ծրագիրները : Դու շատ լաւ գիտես, որ ես այդ գործարանով հիմք եմ դնում իմ ապագայ ոյժին, աղբեցութեանը և բախտաւորութեանը : Ես ուզում եմ լինել հզօր ֆինանսական սիւն, մէկն այն հսկաներից, որոնց ձեռքումն է մեր ժամանակի ամենամեծ ոյժը—կապիտալը :

ՌՕԶ. Մի մարդ, որ կարող է հազարաւոր անգործների համար աշխատանքի դուռ բաց անել և խեղճ ընտանիքներ կերակրել : Ես քեզ հասկանում եմ, Բագրատ :

ՄԱՐԳ. Եւ այդ բոլորը ուրիշի փողերո՞վ :

ԲԱԳՐ. Զուաւհները պատասխանատու չեն իրանց հայրերի փոխարէն : Մեր ծնողների անցեալը մեզ համար մեռած պատմութիւն է :

ՄԱՐԳ. Որը սակայն այսօր յարութիւն է առել և արատաւորում է մեր ամբողջ գերդաստանը :

ԲԱԳՐ. Պէտք է, ուրեմն, խեղդել այն և նորից յանձնել գերեզմանին :

ՄԱՐԳ. (Խորին դառնութեանք) Բագրատ :

ԲԱԳՐ. Ահ, ո՞ւմ հայրը չի զրկել մէկին կամ միւսին, այս կամ այն կերպ : Վերջապէս, հէնց նորերից ո՞ր մէկը չի զրկում կամ հարստահարում : Տարբերութիւնն այն է, որ հները զրկում էին հին ձեռով, նորերը զրկում են նոր ձեռով, Մարգարիտ, ներկայ դէպքում պէտք է լինել աւելի խելացի, քան զգայուն :

ՄԱՐԳ. (Խորին ursinsութեանք) : Այսինքն աւելի շահամոլ, քան ազնի՞ւ : Թոյլ տալ ծնողին կողոպտել մի որբ ընտանիք և փողոցները գցել, Մասնակից լինել նրա ծանր յանցանքի՞ն, շարունակել նրա սկսածը՝ եւ ինչո՞ւ : Որպէսզի ապրենք այս փառայեղ պալատո՞ւմ, ոսկէզօծ կահ կարասու մէջ, զուգուինք-զարդարուինք, բալեր ու պարահանդէսներ՞ը այցելենք : Ոչ ոչ, ես չեմ կարող և չեմ ուզում անել այդ : (Անցնում է դէպի ձախ) :

ՌՕԶ. (Անցնութեանք եւ գրգռուած) : Տա՛ տա, տա տա, ի՞նչ քաջն ես եղել : Ես չըգիտէի : Դու կատարեալ հերոսուհի ես :

ԲԱԳՐ. (Զգալով, որ շատ յափշտակուեց) : Մարգարիտ, ես յարգում եմ քո գաղափարները, բայց մի՛ յափշտակուիր : Մտածի՛ր, ինչ մթնոլորտումն ենք ապրում : Մեր հասարակութեան մէջ քո արածը ոչ ոքին չի հիացնիլ, ընդհակառակը, շատերը քեզ կը համարեն յիմար :

ՄԱՐԳ. Ես հասարակութեան համար չեմ անում, այլ իմ խղճի համար :

ՌՕԶ. (Կասալի) : Զգուում եմ այդ տեսակ ֆոագեօրներից : (Բագրատին) Զուր ես աշխատում նրան բան հասկացընել : Նրա վրայ միայն ոյժը կարող է ազդել : Խլի՛ր նրա ձեռքից յայդ թղթերը, պրծաւ գնաց :

ԵՐԱՆ. Երեւում է սեղանսսանի դուրերի մեջ :

ԲԱԳՐ. (Նոյն մեղմ տոնով) : Դո՞նէ վաղը մի՛ յանձնիր : Սպասիր մի քանի օր, միասին կըխորհրդակցենք : Դու խելօք ես, չես կամենալ մեզ մեր թշնամու ձեռքը գցել :

ՄԱՐԳ. Ահա մեր մայրը, թողէք, տեսնենք, ևս ինչ է ասում :

ՏԵՍԻԼ IV.

ՆՈՅՆԻ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՅԵՏՈՅ ԶԱՐՈՒՀԻ:

ԵՐԱՆ. (Առայ և գալիս, ձեռները ձոցը դրած, շխուր): Այս-
քան տարի այդ մարդու արարքները թագցրի երեխանե-
րիցս, Աստուծոն է յայտնի ինչ տանջանքներով: Գիշեր-ցե-
րեկ մտածել եմ այդ բանի մասին: Փամանակ-ժամանակ բե-
րան եմ բաց արել խօսելու, խօսքս կարել է գոռոջով: Լուել
եմ ու կրակս ներսումս պահել:

ՄԱՐԳ. Լսո՞ւմ էք:

ԲԱԳՐ. Մայրիկ, դու շատ ես լարուած հայրիկի դէմ:

ԵՐԱՆ. (Սրտնուրեւեք): Սուս, դու ոչինչ չըզիտես:
Հայրդ իւր հոգին ծախել է Սագայէլին: Երէկ գիշեր երա-
զումս տեսայ հանգուցեալին: Կանգնած էր մեր դռների մօտ,
վիզը ծուռ, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշուած: Նա
ասում էր. «Երանուհի, դու խօս գիտես, որ մենք ընկերներ
ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստութիւնը,
ինչո՞ւ ես թողնում, որ նա երեխաներիս զրկի մի կտոր հա-
ցից:» Ախ, շատ եմ ուզեցել չըթողնել, բայց ո՞վ է ինձ
լսել: Բագրատ, Բագրատ, իննը տարի է այդ մարդը գե-
րեզմանից անիծում է մեզ:

ԲԱԳՐ. (Գրգռուած): Մեռելների անէծքի վրայ երկու-
արշին հող է ծանրանում:

ԵՐԱՆ. Ախ, մի՛ խօսիր եղբօրս պէս, մեզք է: Մենք
ամէնքս պարտական ենք Ահեղ Դատաստանի առաջ: Ես էլ
եմ պատասխանատու, որ չեմ կարողացել հօրդ հեռացնել
չար ճանապարհից: Ես գողում եմ սարսափից:

ՄԱՐԳ. (Հագիւ կարողանալով յուզուելիք գալել): Ոչինչ,
մայրիկ, հանգստացիր: Հայրիկը բարի է, խելօք է, նա
իւր սխալը կ'ուղղի:

ԵՐԱՆ. (Չեռով յուսահաստիակ շարժումն է ական): Էէ՛հ,
այր մէկը...
ԶԱՐ. (Ներս է մտնում սեղանակից): Կլուբից ձեզ տե-
լեֆօնով խնդրում են:

ԲԱԳՐ. Ահ, այդ երեկոյթն էլ: Ես մոռացայ որ կար-
գադրիչ եմ:
ՌՕՁ. Դէ, գնանք, շատ ուշացանք:
ԲԱԳՐ. (Մտեկում է Մարգարիտի): Յոյս ունիմ, որ մին-
չեւ առաւօտ միտքդ կըլիտխես:

ՄԱՐԳ. (Չախազակց ազդուել է մօր խօսքից, շարժում
փախարում է նրա պատուհանի): Մայրիկ, ինչ լաւ սիրտ
ունիս:
ԵՐԱՆ. (Շոյեշով նրա գրուխը): Արի, աղջիկս, դու ես
իմ միակ միտքարութիւնը: Դրանք սրիչ հոգի ունին, օտար
են ինձ համար (Հակարում է):

ԲԱԳՐ. Ատելով ասում եմ այդ տեսակ սանտիմենտայլ
տեսարանները: (Դուրս է գալիս նախասենեակի դուրսով):
ՌՕՁ. Պսիխոպատիկ (Հետեւում է եղբօր):
ԶԱՐ. Ռոզալիայիև ուղեկցում է նախասենեակ:

ՏԵՍԻԼ V.

ՄԱՐԳԱՐԻՏ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍՈՒՐԷՆ:

ՍՈՒՐ. (Դուրս է գալիս ձախ կողմի դուրսից): Գնա՞ց,
վերջապէս, եսանդուն կօմեկրսանաւ, ճարպիկ սպեկուլ-
եանաը աստառը չուս տուած ամերիկացին: Կեցցե՛ս,
Մարգարիտ: Ես այնտեղից բոլորը լսում էի: Մտած, այս
անգամ անառակ օրդիդ քեւ հետ համաձայն է: Տուր ձեռք
համբուրեմ: Այսօր ես տեսնուեցի Օթարեանի հետ: (Մար-
գարիտիև) Թ ու ի կըտա՞ս խօսել մայրիկի ներկայութեամբ:

ՄԱՐԳ. Ես մայրիկից դադանիք չունիմ:

ՍՈՒՐ. Պէտք է խոստովանած, որ ջենտլմեն տղայ է: Ես լաւ չէի ճանաչում նրան: Այսօր շատ հաւանեցի: Նա ասում է. «Ես աղքատ եմ, աղքատ էլ կը մնամ, միայն թէ Մարգարիտը չըզադարի ինձ սիրել»: Լսում ես. պէտք է մեծ սիրտ ունենալ, որպէս զի սիրոյ համար հրաժարուել անազին ժառանգութիւնից: (Ջարուհուն, որ վերադարձեց եւ սենեակից եւ ականջ ե ղնում): Կորի՛ր, ի՞նչ ես ականջ դնում:

ՋԱՐ. Գնում եւ սեղանսուն:

ՄԱՐԳ. Իսկ դո՞ւ ինչ ասացիր նրան:

ՍՈՒՐ. Ե՛ս: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էր ասել ինձ նման մի գիժ: Ես նրան ասացի. «Արտաշէս, իմ քոյրը հպարտ աղջիկ է: Նա քեզանից զոնաբերութիւն չի ընդունիլ: Դու վեհանձնութեամբ նրանից գերազանցել չես կարող»:

ՄԱՐԳ. Ծնորհակալ եմ:

ՍՈՒՐ. Սրանով էլ վերջացաւ մեր բանակցութիւնը: Այժմ լսեցէք իմ կարծիքը, ախար, ես էլ ընտանիքի անդամ եմ: Եթէ ապացուցուած է, որ մեր հայրը զրկել է Օթարեանին, ամէնքս պարտաւոր ենք պահանջել, որ նա զրկուածներին բաւարարութիւն տայ:

ՄԱՐԳ. Մայրիկ, լսում ես ինչ է ասում:

ՍՈՒՐ. Է՛ն, ի՞նչ ես մայրիկին խօսեցնում իմ մասին: Նա ինձ վրայ խաչ է դրել: Ես շողատան եմ, փչացած: Բայց թող յայտնի լինի ձեզ, որ շուտով կընրաժարուիմ իմ բաժին ժառանգութիւնից, քան կը համաձայնուիմ, որ մարգրիկ երեսիս ասեն. «Դու կտրուպտիլի որդի ես»: Այս մէկն արդէն վճռուած է եւ ստորագրուած: (Սիգար ե փառում):

ԵՐԱՆ. Խելքս քեզանից բան չի կտրում: Համ այդ ես ասում, համ էլ ինքդ կողուպտում ես հօրդ:

ՍՈՒՐ. Աա, դու մուրհակների մասին ես ակնարկում: Մամա, Աստուած վկայ, ես չեմ հնարել այդ բանը. այլ քեռիս, քո պատուարժան եղբայր: Նա, օօ, նա Շէյլօկի խընամին է: Նա ինձ պարտք է տալիս միայն այն պայմանով,

որ մէկին հինգ—տասը ստանայ հօրս մահից յետոյ: Բայց ազանութիւնը երբեմն մարդուն յիմարացնում է: Այժմ իմ պատուարժան քեռին վախենում է, որ հայրիկից շուտ կը ճանապարհուի ի վերին Երուսաղէմ: Մամա, մի նեղանար, եղբայրդ մարդ չէ. այլ գայլի ախորժակից եւ ազուէսի խրամանկութիւնից կազմած վիճիգրետ: Իսկ ես թէեւ անառակ եմ, բայց ջենտլմեն եմ: Երէկ Բազրատն ինձ վախկոտ անուանեց, իբր թէ ապտակ եմ կուլ տուել: Ուզո՞ւմ ես իմանալ, ինչու եմ կուլ տուել:

ԵՐԱՆ. Ես չեմ ուզում լսել այդ բաները, չեմ ուզում:

ՍՈՒՐ. Ոչ, այս մէկը լսի՛ր: Ես ապտակը ստացել եմ մի շատ պատուական կնոջ պատճառով: Եթէ կուլ չըտայի, պիտի կուռէի, եթէ կուռէի, այդ կինը պիտի խայտառակուէր: Լսիր, ինչպէս պատահեց:

ԵՐԱՆ. (Ականջները փակելով): Չեմ ուզում լսել, չեմ ուզում:

ՍՈՒՐ. Դէ լաւ, թող մնայ: Լսեցի՛ր: Մարգարիտ, հայրիկը պարտաւոր է իւր անունն ազատել խայտառակութիւնից: (Ժամացոյցիկն նայելով): Օ, տաս ե կէսն է, ես չողիացայ...

ԵՐԱՆ. Էլի ո՞ւր ես գնում կէս զիչերին, անառակ...

ՍՈՒՐ. Ասողերն ուսումնասիրելու: Աւելովան ինձ սպասում է: Արեւիդե՛ր չի: (Գնում եւ նախասենեակի դռներով կրկնելով):

ՄԱՐԳ. Տեսա՞ր, մայրիկ, շողատան որդիդ աւելի ազնիւ է դատում, քան խելօքը:

ՋԱՐ. (Սեղանսունսն դռներից): Խոհարարը հարցնում է, ընթրելո՞ւ էք:

ԵՐԱՆ. Ես չեմ ուզում: Ա՛ն, էլի գլխացաւս բռնում է:

ՄԱՐԳ. Ես էլ չեմ ընթրելու: (Ջարուհին գրնում է): Մայրիկ, գնա, պառկիր. քո ներկերը բոլորովին քայքայուել են: Ես էլ ամբողջ զիչեր չեմ քնել, գլուխս պտտում

է անքնութիւնից: (Հարկաւորուալ եւ մօր հետ եւ սնկնուալ իւր սնկնակը):

ԵՐԱՆ. (Նայելով նրա ետեւից քաղձայի): Երանի, դու ինձանից բախտաւոր լինիս: Ահ... (Անկնում է սեղանսուն):

ՏԵՍԻԼ VI.

ԱՆԴՐ Է ԱՍ Ե Ի ՍԱՂԱԹ Է Լ:

Դուրս եկ գալիս այ կողմի առաջին դուռերից, երբ Երանու-
նին արդէն բոլորովին հետացել է:

ԱՆԴՐ. Փառք Ասածու, վերջապէս, ցրուեցին: Այո՛,
գիշերն աւելի լաւ է, քան ճերեկը: Մթութիւնը մեղքի
ընկերն է:

ՍԱՂ. (Տերոպորմեայի հասիկները մեկ-մեկ գցելով). Խեր,
չառ, Աստուած: Խեր, չառ, Աստուած: Խեր, չառ, Աստ-
ուած: Խեր: Ինչքան գցում եմ, խեր է գալիս:

ԱՆԴՐ. Բայց սիրասս ասում է, որ լաւ բան չենք մտա-
ծել անելու:

ՍԱՂ. Աւելի վատ կըլինի եթէ չանես: Բացադրել ես,
խնդրել ես, աղաչել ես, չի ելել, ճա՛րդ ինչ: Խօս չես կա-
րող պատիւը թողնել թշնամուդ ձեռքում:

ԱՆԴՐ. Չանդակ տուր, տեսնենք ինչ են անում:

ԱՍՂ. Չայն-ձիւն չի լուում. (Մասը սեղանի կ ելեֆրա-
կան գանգալի կոճակին՝ որ գտնուում է այ պատի առաջին դուռերի
մօտ: Բեռի ետեւից շուրմ է գանգալի քոյղ հնչիւն):

ԱՆԴՐ. Քեզ համար ինչ, դու քո բանը զբաւեցիր: Լաւ
կուրտատ է իմ մեղքն ինձ ծախելու համար—հինգ հարիւր
սածեն տալի:

ՍԱՂ. Ես քեզ խնդրեցի՞, աղաչեցի՞, որ ինձ այս գոր-
ծին խառնես:

ԱՆԴՐ. Դէ լա՛ւ: (Չարմնում նր կերս է մեկ սեղանսու-
նից) Ո՞վ կայ սեղանատանը:

ՉԱՐ. Ոչ ոք:

ԱՆԴՐ. (Կեղծ բարկանկարով): Բաս ինչո՞ւ ես ճրագները
վառել: (Չարմնին ուզում է գնալ): Խանութից ի՞նչ է անում:

ՉԱՐ. Հէնց հիմա պառկեց: Էլի գլխաքաւը բռնել է:

ԱՆԴՐ. Պրծանք, այդ էր պակաս: Կանչի՛ր այստեղ

Մարգարային:

ՉԱՐ. Նա քնած է:

ԱՆԴՐ. Բնած: Ելապէս չո՞ւտ: Լա՛ւ, գնա՛: Մենք
կըուր ենք գնում, ասա՛ խանութից: Դու էլ կարող
ես հանգստանալ: Ես ինքս դռները կը փակեմ: Հարկաւոր
չես: Հանդցրո՛ւ սեղանատան ճրագները, դուք անտեսու-
թիւն ասած բա՛ր չը դիտէք: Կարծես, ես փող եմ կտրում
կամ մարդ կողոպտում, որ ամէն ինչ չոայլում էք: Գնա՛:

ՉԱՐ. Կնում է սեղանսուն: Փոփր սնկած, այնտեղ սիրում
է նբուրիւն:

ՍԱՂ. Մէկը հիւանդ է, միւսը քնած, Աստուած ինչն
է օգնում քեզ:

ԱՆԴՐ. Ահ մի՛ յիշիր այս բոլորին Աստուած անունը:
Նա աւելի կըբարկանայ մեզ վրայ: Հըմ, լաւ էր, չէ՞, որ
ատացի, թէ կըուր ենք գնում, Տես: ով կայ նախասենեա-
կում: (Սարսափով նայում է դիպի նախասենեակ): Դռները
կողպեր: (Յուշիկ փայտով մօտենում է Մարգարայի սնկնակի
դուռերին եւ ակնայ դնում: Նայում է իւր գրպանի ժաւացոյցին
եւ վերադառնում բեռի կնիւրները):

ՍԱՂ. (Նախասենեակ նայելուց յետոյ դուռերը ծածկել է):
Այնտեղ ոչ ոք չըլկայ: Աւելի յարմար ժամանակ չէիր կա-
րող ընտրել: (Տերոպորմեան դնում է կ) գրպանը): Ինչի՞ մասին
ես մտածում:

ԱՆԴՐ. Երբ սատանան ժարդու գլխի մէջ մի չար միտք
է մտցնում, սրտի մէջ էլ մի ա՛ն է գցում: Ծածկի՛ր սեղա-
նատան դռները: (Սարսափով ծածկում է) Կարծես, այնտե-

դից աչքեր են նայում մեզ: Մօտս կաց: (Նստում է բազիս-
քոնկերից մեկի վրայ):

ՍԱՂ. (Գայով բեկի առայ է՛ն. շատ բաներ ես արել,
արա այդ մէկն էլ):

ԱՆԴԻՐ. (Կիսամայն) Արե՛լ: Ես մենակ չեմ արել, դու էլ
միշտ հետս ես եղել: Է՛ն. էլի հօրդ կերպարանքն եկաւ, կանգ-
նեց աչքիս առջեւ: Նա ասում էր. «Չարը չարութեան ձանա-
պարհում կրկորչի»:

ՍԱՂ. է՛ն, դու էլ ժամանակ գտար հօրս յիշելու:

ԱՆԴԻՐ. Յիսու՛ն ու վեց տարեկան մարդ եմ, Սաղաթէլ,
գլխովս հազար ու մի փորձանք է անցել: Երբում եմ կոտ-
րել, միամիտներ եմ խաբել, խեղճեր եմ կսփել ու կողոպ-
տել, երեք անգամ կաշառքով ազատուել եմ դատաստանից,
բայց երբեք այս դրութեան մէջ չեմ եղել: Ինչից՞ն է այս,
Սաղաթէլ: Այ, աե՛ս, սառը քրախնքը պատեց մարմինս:

ՍԱՂ. Վաղն այս ժամանակ կը հաշուես ու կը տեսնես,
որ մօտ եօթ հարիւր հազար ուռբլու կալուածք է մնացել
ձեռքումդ:

ԱՆԴԻՐ. Ազահութիւն, աչքածակութիւն, ուրիշ ոչինչ:

ՍԱՂ. Էէ՛նէ՛, դու սկսում ես դատողութիւններ անել:
Շտապի՛ր, գիշերն անցնում է:

ԱՆԴԻՐ. Չըկարծես, թէ միայն փողի համար եմ անում
Սաղաթէլ: Ոչ, այլ այդ լակոտին խրատելու համար: (Վեր
է կենում):

ՍԱՂ. Ի հարկէ: Այստեղ պատուի խնդիր կայ, փողն ինչ...

ԱՆԴԻՐ. (Աստևներ կրճեղով) Գոռո՛ղ, անպարտաւա՛ն:
Ուզում է ինձ խեղդել, ինձ, որ կարող եմ հարիւրին խեղդել
այս ճանկերովս: Աա, եթէ ձեռքս կընկնին այդ թղթերը,
ցոյց կըտամ քեզ. թէ ով եմ ես... Սուս, այդ ի՞նչ ձայն է:

ՍԱՂ. Ես ոչինչ ձայն չեմ լսում:

ԱՆԴԻՐ. Դէ՛ն, Անդրէաս, մի թուլանար, ամօթ է: Արա
այս մէկն էլ: Ինչ որ լինելու է. այն պիտի լինի: (Չգոյշ
ֆայտերով անցնում է Մարգարի սենեակը):

ՍԱՂ. Դայլը մտաւ գառների փարախը—կ'ասէր հայրս:

(Մօտնում է ստրակասան դուներին եւ յայտ հանգցնում:
Բեռնում տրում է խաւար): Այսպէս լաւ է, ինձ չեն տեսնիլ:
(Լուռփակ: Ստրակասանից լաւում է ժամացոյցի ասան ու մեկ
գարկը): Հիմա ես էլ եմ վախենում:

Երկարատեղ յուռփակ:

ԱՆԴԻՐ. (Երեւում է դուների մեջ. չախազանց այրայրում է,
դողում է, բայց ուրախ է: Չեռում անուր բռնած է քրքերի մի
ծրար: Լուռփակ: Յետոյ շնչխնով): Սաղաթէ՛լ:

ՍԱՂ. Այստեղ եմ: (Սենեակը նորից յուսաւորում է):

ԱՆԴԻՐ. (Առայ է գալիս): Ահա նրա հոգին: Ահա ինձ
քնից ու հանգստութիւնից զրկողը: Հարստութիւնս, անունս,
պատիւս, եօթ հարիւր հազարի փրկութիւնը:

ՍԱՂ. Դէ, գնանք, հեռանանք այստեղից:

ԱՆԴԻՐ. Թող դեռ տեսնեմ, նրանք են թէ չէ: (Ծրարը
զննում է): Իսկ և իսկ: Ինչպէս լաւ յաջողուեց: Նա քնած
էր երեխայի պէս, գիրքը կրծքի վրայ բռնած: Բանալիները
բարձի տակ էին: Վերցրի ու... ձայն չե՞ս լսում: (Ծրարը
շտապով դնում է գրքակը):

ՍԱՂ. (Անհանգիստ): Լսում եմ: Հեռանանք:

Փողոցից լաւում է ուսիլակակակակ շուռցի ձայն:

ԱՆԴԻՐ. Աա, ոստիկանները գող են բռնում: Երեւի,
խեղճերից մէկը, քաղցածութիւնից ստիպուած, գողացել է
մի փալասի կտոր: Սուս, հեռանանք: —

ՍԱՂ. (Մօտնում է աչ կողմի առայի դուներին, մի վայր-
կեան կակց ստնում էր սնկեսսնում):

ԱՆԴԻՐ. Հեռում է նրան:

ՄԱՐԳ. (Դուռս է գալիս գիշերային սպիտակ հագստով: Նա-
յում է աչ ու ձախ այրայրում, նկատում է հօրը, որ այդ պահին
արդիւն դուների մօտ է: Ուժգին ցնցում է ու ձգում քոյ): Հայ-
րի՛կ: (Մի ֆակի ֆայլ առայ է վազում եւ բարձր ձգում): Հայրի՛կ:

ԱՆԴԻՐ. Դուների միջից սարսափաւար յիս է նայում եւ սն-
հեսսնում:

ՄԱՐԳ. Հեկեկարով ընկնում է յաստի վրայ:

Վարագոյրն իջնում է հանդարտ

ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին Արարուածի բեմը: Վաղ երեկոյ է: Գրասեղանների վրայ վառուած են էլէքտրական ճրագներ: Գրասենեակի դռները բաց են: Այնտեղ ոչ ոք չըկայ:

Վարագոյրը բարձրանալիս՝ ձախ կողմի գրասեղանի քով նստած է Բագրատն և գիտում է իւր գործարանի հաշիւները: Սեղանի մօտ կանգնած է Կարինեանը և բացաղբութիւններ է տալիս:

Դէպի աջ, Անդրէասի գրասեղանի քով, նստած է Սաղաթէլը, ոտը ոտի վրայ դրած և հանդարտ տէրողորմեա է գցում:

ՏԵՍԻԼ I.

ԲԱԳՐԱՏ . ԱՍՂԱԹԷԼ ԵՒ ԿՍՐԻՆԵԱՆ:

ԲԱԳՐ. Խոզովակների համար պարա եմ մօտ ութ հազար ուրբլի. մեքենաների համար վճարուած է քսան և եօթ հազար երկու հարիւր: Ընդհանուր գումարն է ծախքերի՝ երեք հարիւր տասներկու հազար... (Մեկրուսի): Եւ այս բոլորը կարող է ձեռքիցս դուրս գալ: Ա՛հ: (Վեր կ կենում): Թագցըրո՛ւ այս հաշիւը առ այժմ հայրիկից: Հին վաճառականները սարսափում են համարձակ ձեռնարկութիւններից: Նրանց համար այսօրուայ կոպէկը վաղուայ ուրբուց թանկ է:

ԱՍՂ. Ինձ համար էլ այդպէս է. քիչ լինի, նաղը լինի: (Տերտրակեսի տրորում և ձեռների մեջ եւ հոտ փայլում):

ԲԱԳՐ. Խանութպանի սկզբունք: (Կարինեանին) Դուք ազատ էք. կարող էք գնալ:

ԿԱՐ. (Սեղանի վրայից վերցրեղ և հաշուեկետր): Ես ուզում էի ձեզ յիշեցնել...

ԲԱԳՐ. Ձեր սոճկի մասին: Գիտեմ: Լաւ, լաւ, կըմտածեմ:

ԿԱՐ. Վեց ամրս է միեւնոյնն էք ասում: Հարիւր ուրբլի ամսականը իմ տաժանակիր աշխատանքի համար շատ չնչին վարձ է:

ԲԱԳՐ. Բաւական մեծ վարձ է. եթէ համեմատենք ձեր չնչին կրթութեան հետ: Մեր ժամանակում գնահատուած է միայն տաղանդը և գիտութիւնը:

ԿԱՐ. Իսկ երկար տարիների բարեխիղճ և ազնիւ ծառայութիւնը ոչի՞նչ:

ԲԱԳՐ. Լաւ, հեռացէ՛ք: Ես չեմ սիրում. երբ մարդիկ աշխատում են ինձ բան սո լորեցնել: Յրատեսութիւն:

ԿԱՐ. Գնում ե գրասեղանի դիվանակ դեմքով: Մի փոքր անցած՝ այնտեղ սիրում ե մրուրիւն:

ՏԵՍԻԼ II.

ԲԱԳՐԱՏ ԵՒ ԱՍՂԱԹԷԼ

ԲԱԳՐ. (Անկապեր) Բեռի այժմ ասա տեսնեմ, ի՞նչ նորութիւն կայ:

ԱՍՂ. Գոհութիւն Աստուծու, ամէն բան կարգին է: (Հանդիս ոսփի և կանգնում, ուղղելով աշխարհի փեշերը):

ԲԱԳՐ. Օթարեանն եկե՛ւ է այստեղ:

ԱՍՂ. (Ուսերը վեր փայլելով): Ես ինչ գիտեմ, խօս պահապան չեմ: (Սկսում և ծանր փայլելով անց ու դարձ անել):

ԲԱԳՐ. Անհրաժեշտ է իմանալ, տեսնուե՞լ է նա Մարգարտի հետ:

ՍԱՂ. Կարող է տեսնուած լինել, կարող է չըլինել, Աստծու բանն է:

ԲԱԳՐ. Ես չեմ կարողանում ամբողջ օրը Մարգարտին հանդիպել: Չըզիտեմ ինչու, նա փակուել է իւր սենեակում և ոչ օքի չի ընդունում:

ՍԱՂ. Աստծու բանն է:

ԲԱԳՐ. Առ հասակակ այսօր մեր տանը տարօրինակ արամադրութիւն է տրոււմ: Նկատեցի՞ր, հայրիկը որքան փոխուած էր ճաշի ժամանակ: Ես երբեք նրան այդպէս անկապ խօսելիս չեմ տեսել: Նա սովորականից աւելի էր գինի խմում: Այդ արթուն մարդը, կարծես, ուզում էր գիտմամբ հարբել:

ՍԱՂ. Աստծու բանն է:

ԲԱԳՐ. Քե՞զ ինչ է պատահել, չեմ հասկանում: Այսօր շատ շուտ-շուտ ես յիշում Աստծու անունը:

ՍԱՂ. Ես Աստծուն միշտ յիշում եմ: Դու էիր, որ ուզում էիր ինձ չեղել նրա ճանապարհից քո ուսումնական բացադրութիւններով:

ԲԱԳՐ. (Կանգ ե տւեալ եւ նայւալ նրան խոր խոր): Դու ինձ յանդիմանե՞ւմ ես: Այդ վատ չէ, վատ չէ: Ես ինքս պատրաստուել էի քեզ մի թեթեւ նախատինք տալու:

ՍԱՂ. Նախատինք տալո՞ւ: Ի՞նչ: Ինչո՞ւ համար, ի՞նչ եմ արել:

ԲԱԳՐ. (Մօտենալով, ձեռք դնում եւ նրա ուսի վրայ եւ կիսաբարեկամաբար, կիսա շուրջ) Արի, պատուելի քեռի, խոստովանիր, որ դու շատ կըցանկանայիր համոզուել, որ (Ձեռք դնելով երկիւնք բարձրացնելով) այնտեղ ոչինչ չըկայ:

ՍԱՂ. Եանի, ի՞նչ ես ուզում ասել, պարզ խօսիր:

ԲԱԳՐ. Ուզում եմ ասել, պատուելի քեռի, որ քեզ նման մարդկանց համար շատ ձեռնտու է ոչ այնտեղ (Ձեռք

բարձրացնում ե դեպի արկիւնք) երկիւղ ունենալ և ոչ այստեղ: (Ձեռք խիտում ե Սաղարեկի արկիւնք):

ՍԱՂ. Իսկ դո՞ւ ինչ ես, դո՞ւ: Դո՞ւ ումից կամ ինչից ես վախենում. անհաւատ:

ԲԱԳՐ. Ե՞ս: Ահա (Ձեռք գարկում ե իւր նախախնի) թէ ինչիցն եմ վախենում: Իմ միակ Աստուածը բանականութիւնն է: Հիմա, քեռի, դառնանք գործնականին: Ասա, տեսնեմ, քսան ու հինգ տարուայ ընթացքում որքա՞ն ես գողացել էլեզարեաններից:

ՍԱՂ. (Յնչուալ ե եւ վիրաւորուած ձեւակում): Ի՞նչ, գողացե՞լ: Հարբած ես, ինչ է:

ԲԱԳՐ. (Ստուն յրջարեալով) Ես երբեք չեմ հարբում: Լսիր, քեռի, հօրս հարստահարել ես, ներել է, այդ իւր հաշիւն է, իսկ ես... ես խոնարհաբար խնդրում եմ, իմ գործերում ձեռներդ մի փոքր մաքուր պահես:

ՍԱՂ. Տէր Աստուած, Տէր Աստուած, այս աղան գժուել է:

ԲԱԳՐ. Մի քիչ առաջ, երբ քննում էի գործարանիս հաշիւները, նկատեցի, որ քո ձեռքով գնուած նւթերը մէկով մէկ աւելի թանգ են նստել: Ծախքերի համար արդարացուցիչ փաստեր չես ներկայացրել: Ինչ-որ էլ ներկայացրել ես, կեղծ է: Մի խօսքով, բաւական վերադիր ես արել: Ես գիտեմ, որ քո արածը սովորական բան է գործակատարների համար, բայց իմ վերաբերմամբ զգոյշ կաց:

ՍԱՂ. (Վրդովուած՝ գունազան խոշոր շարժումներ ե սնում կարծես, պստերիս բողոքելով) Այստեղ մտիկ տրէք, սրան, սրա՞ն, չի ամաչում, իւր հարազատ քեռուն գող է անուանում: Եւ երկինքը չի որոտում, պատերը ձայն չեն հանում: Վա՛յ մեզ, վայ մեր օրին:

ԲԱԳՐ. Էէ, թող այդ բոշայական ձեւերը: Նրանք ինձ խաբել չեն կարող: Ես քեզ կրկրին անգամ խնդրում եմ, ձեռներդ մաքուր պահիր: Ես արթուն մարդ եմ և վրիժառու, մօրս եղբօրն անգամ չեմ խնայել:

ՍԱՂ. Անամօթ, չի էլ կարծում ասածներից:

ՏԵՍԻՒՆ III.

Ն Ո Յ Ն Ք Ե Ի Ա Ն Դ Ր Է Ա Ս :

ԱՆԴՐ. (Գալիսի կ ձախի դուներից: Ներքուս անհանգիստ է, բայց աշխատում է անյորր ձեռնակ): Հիմա ի՞նչ անենք, Սաղաթէլ: Կարծեմ, վատ չի լինիլ գնալ կլուբ և մի պուլլկա պրեֆերանս խաղալ: Վաղուց է չեմ եղել այնտեղ: Հը՛մ, ի՞նչ կ'ասես, պարոն ինձեներ:

ԲԱԳՐ. Շատ ուրախ եմ, որ ուզում ես հասարակութեան մէջ երեւալ: Կլուբ չըգնալք չար լեզուներին հազար ու մի բառբասանքի նիւթ է տալիս: Բայց ես զարմանում եմ, որ այդպէս հանգիստ ես:

ԱՆԴՐ. Ինչո՞ւ չըպիտի հանգիստ լինիմ: Փառք Աստուծու, խօս առնա կրակ չի ընկել կամ վէքսելներս պրօսեստ չեն անում: (Անհանգիստ կայում է դիպի այն դուները, ուսկից դուրս է եկել):

ԲԱԳՐ. Երէկ դու այդպէս չէիր խօսում:

ԱՆԴՐ. Երէկը երէկ էր, այսօրը—այսօր: Սաղաթէլ, այդ տէրոզորմեան աուբ ինձ: (Սաղաթէլը սայիս է): Է՛հ, փառք Քեզ, Աստուած, մեծ է Քո ողորմութիւնը: (Նստում է իւր գրասեղանի մօտ):

ԲԱԳՐ. Հայրիկ, ուրեմն, դու այլևս չե՞ս վախենում Օթարեանից:

ԱՆԴՐ. (Ծիծաղում է Աեարդայիև, արուեստակաւ ծիծաղում): Հի հի հի, լսեցի՛ր Սաղաթէլ: Ասում է: Օթարեանից չե՞ս վախենում: (Ողորմ) Ո՞վ է Օթարեանը: Ե՞րբ եմ ես նրանից վախեցել կամ ումի՞ց եմ վախեցել: Անդրէաս էլիւբքարովը վախեցող պառուզներից չէ: (Իստիպալ կայելով ձախի դուների կողմ): Սաղաթէլ, տես ով կայ այն սենեակում: (Բագրուսիև) Յիմար բաներ ես խօսում:

ՍՍՂ. (Նայել է ձախի դուներով դիպի կերս): Այնտեղ ոչ ոք չըկայ:

ԱՆԴՐ. Աչքիս մէկն երեւաց սպիտակ հագստով, երկայն մազերով: Ծածկիր այն դռները: Օթարեան—չէ, չուն, կատու, մուկ, խլէզ:

ԲԱԳՐ. (Ուշադիր դիտել է հօրը): Զարմանում եմ: Երէկ դու համարեա սարսափում էիր Օթարեան անունից, այսօր ծաղրում ես նրան: Իսկ ես, ընդհակառակը, երէկ նրան արհամարում էի, այսօր չեմ կարող:

ԱՆԴՐ. Այդ քո գործն է: Ինչ ուզում ես, արա: Դէ՛հ, Սաղաթէլ, գնո՞ւմ ենք կլուբ, թէ չէ:

ՍՍՂ. Հասնաձայնութեամ կշան է անում:

ԲԱԳՐ. Երէկ երեկոյ ես Մարգարտի մօտ տեսայ և կարգացի այն թղթերը, որոնց գոյութիւնը քեզ յայտնի է: Եթէ Մարգարտն այդ թղթերը վերադարձրել է Օթարեանին, չըգիտեմ ինչպէս կարելի է հանգիստ լինել:

ԱՆԴՐ. Դու կարող ես այդ մասին չըմտածել: Գործարանդ կիսատ չի մնալ:

ԲԱԳՐ. (Ուրախացած) Ի՞նչպէս, հայրիկ, բացաքի՛ր, չէ՞ որ գործը որքան քեզ, նոյնքան էլ ինձ է վերաբերում:

ԱՆԴՐ. (Վրդովրած) Դադարելո՞ւ ես, թէ՞ չէ: Գլուխ տրաքեցրիր: Ես այսօր տրամադրութիւն չունիմ այդ մասին խօսելու:

ԲԱԳՐ. (Տարակուսակաւ կայում է կախ կրակ, սպա Սաղաթէլին): Ոչինչ չեմ հասկանում: Պէտք է անպատճառ տեսնուել Մարգարտի հետ: Ես կըգնամ և ուժով էլ լինի՛ կը մտնեմ նրա սենեակը: Այստեղ մի բան կայ, որ ինձանից թաղցնում էք: (Գնում է ձախ դուներով):

ՏԵՍԻԼ IV.

ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

ԱՆԴՐ. Ա՛հ. (Նեադայիև քափով skռոդրոմեան ձգում է սեղանի վրայ եւ վեր է կենում): Քիչ էր մնում բերանիցս խօսք թոցնէի: Չի լինում, Սաղաթէլ, չի լինում, ինչքան աշխատում եմ հանգիստ ձեւանալ, չեմ կարողանում:

ՍԱՂ. Մարդասպանն էլ վերջ ի վերջոյ մարտում է իւր յանցանքը: Դժուարն այսօր է, էգուց, յետոյ կըմոռանաս, կըզնայ:

ԱՆԴՐ. այդ աղջկայ կերպարանքը կէս գիշերին, սարսափած դէմքը, ձայնը... Ես մինչեւ գերեզմանն չեմ մոռանալ:

ՍԱՂ. Երեխայ ես, ուրիշ ոչինչ: Դու այն ասա--ուրիշները չիմանան, թէ չէ՛ Մարգարիտն ի՛նչ: Նա աղջիկդ է, կըների քեզ:

ԱՆԴՐ. (Անցուդարձ անելով): Մի՛ ասա, չես իմանում ինչ եմ զգում: (Յնցուելով): Տես, ով կայ գրասենեակում, ձայն լսեցի:

ՍԱՂ. (Նայում է) Ոչ ոք չըկայ: (Դռները ծածկում է, յետոյ skռոդրոմեան վերցնում):

ԱՆԴՐ. Ամէն կողմից ձայն եմ լսում, ամէն տեղ մարդիկ եմ տեսնում: Ի՞նչ կըմտածի հիմա իւր հօր մասին: Նա, երեւի, ամօթից տանջւում է: «Հայրիկ» որ դուռաց, սարսափից ոտներս թուլացան, քիչ էր մնում դռների մօտ ընկնէի: Սաղաթէլ, ինձ թուում է, որ նա իմ հոգեհան հրեշտակն է, հետևում է ինձ շուքի պէս և վերջը պիտի բռնի տակն է, հետևում է ինձ շուքի պէս և վերջը պիտի բռնի օձիքս և ասի. «Հաշիւ տուր, ես քո դատաւորն եմ»: Ի՞նչ պիտի ասեմ: Սաղաթէլ, ես ու դու շատ բաներ ենք արել, բայց այս մէկը չենք մարսիլ, կըմնայ մեր կոկորդում, կըտեսնես...»

ՍԱՂ. Ի հարկէ, եթէ քեզ այդպէս կը պահես, ինքդ քեզ փորձանքի մէջ կըզցես: Պէտք է սառը լինել, այնումն էլ չըզցել: Մտածիր, թէ ինչ ահագին հարստութիւն ես ազատել, այն ժամանակ արածդ քեզ ոչինչ կ'երեւայ: (Լռութիւն) Հա՛. քանի միտդ է, խոստումդ կատարիր: Մի փոքրիկ թուղթ տուր, որ հինգ հարիւր սաժէն հող քաղաքի այս ինչ տեղում բաշխում ես ինձ:

ԱՆԴ. Անաստուա՛ծ, դու հէնց քո մասին ես մտածում: Ազա՛հ:

ՍԱՂ. (Հեզուքաւ) Ազա՛հ, քսանից մէկն է ինձ տալիս, էլի ես եմ ազահը:

ԱՆԴՐ. Լաւ, յետոյ կըտամ:

ՍԱՂ. Ոչ, ոչ, հիմա, յետոյ կ'ուրանաս: Ես քեզ ճանաչում եմ:

ԱՆԴՐ. (Կաստելով) Յետո՛յ, ասում եմ:

ՍԱՂ. (Նայում է նրան սուր եւ խորհրդաւոր հայեացքով) Դո՛ւ գիտես:

ԱՆԴՐ. (Համակնում է նրա միտքը) Աա, Սաղայէլ, դու հօրդ գերեզմանն էլ տակն ու վրայ կ'անես մի ոսկու համար: (Մօտենալով գրասենեակին) Տուր ինձ մի կտոր թուղթ:

ՍԱՂ. Ես արդէն ինքս գրել պատրաստել եմ, մնում է, որ ստորագրես: (Հանում է իւր գրչակից մի գրած քուղը եւ ցոյն է նրան):

ԱՆԴՐ. (Թուղքը կարդալով) Սատանայ, նօտարիւնսի պէս է գրել: Հինգ հարիւր սաժէն: Քաղաքի կենտրոնում, ամենալաւ տափերիցս մէկը: Շատ է, այսքանը չեմ կարող տալ:

ՍԱՂ. (Ստան) Խոստացել ես:

ԱՆԴՐ. Շատ է, ասում եմ: Կէսը նուիրելու եմ քաղաքային ուսումնարանի համար: Վաղուց են խնդրում ինձ այդ մասին:

ՍԱՂ. Լաւ բարեգործութիւն է, ուրիշի հաշուով: Ստորագրի՛ր:

ԱՆԴՐ. Շատ է, ստում եմ:

ՍՈՂ. (Սառնուքեակը ձեռքը մեկնելով, որ բուռը վերցնի): Դո՛ւ գիտես: Ես կարծում էի, որ ազնիւ վաճառականն իւր խօսքի տէրը պիտի լինի:

ԱՆԴՐ. (Ասանկերը կրճեկով) Աա, գազա՛ն: (Ստուագրում է):

ՍԱՂ. (Թուրքը վերցնում է, կախապես ստուագրութիւնը ցանկիցով չորացնելով, եւ ծոցը դնում): Շնորհակալ եմ: Այժմ կարող ես ինձ վրայ յոյս դնել: Դէ լաւ, քիչ մտածիր: Մեղքն այն ժամանակ է մեղք, երբ յայտնի է հասարակութեանը: Իսկապէս ի՞նչ ես արել: Մի քաղցած գայլի ատամները հանել ես—պրծաւ զնաց: Թող այժմ գոռայ, ինչքան ուզում է, թէ էլ լիզարարովը նրա հօրը կողոպտել է: Փաստեր կը պահանջենք:

ԱՆԴՐ. (Ականջ է դրել ուշադիր այնպիսի դեմքով, որից երեւում է, թէ շատ ցանկանում է հասկոյունը): Այո փաստեր կը պահանջենք: Թող այժմ զնայ զատարան: Այժմ ես եմ նրա գատաւորը: «Պարոն, կ'ասեմ նրան զատաւորների առաջ, հաստատիր, բե՛ր ապացոյցներ եւ ժառանգութիւնք ստացիր»: Եւ ապացոյցներ չունի, հա հա հա, չունի, կորել են, անհետացել: Եւ ես կըթքեմ նրա երեսին, վրէժըս կ'առնեմ: Օօօ, Սաղաթէլ, ես շատ եմ տանջուել: (Բաց է անում բանալիով գրասեղանի արկը) Ահա, այստեղ է նրա լեզուն, գոռողութիւնը, նրա հոգին: (Հանում է ծրարը եւ նայում): Երէկ ես էի նրա ձեռքում, այսօր նա է իմ ձեռքերում:

ՍԱՂ. Այրիւր, կորչեն, ինչո՛ւ ես պահում:

ԱՆԴՐ. Օօ, այնպիսի մի խարոյկ սարքեմ, որ քէֆք գայ: Բայց դեռ թող մնայ այստեղ, թող տեսնեմ, կշտանամ: (Թղթերը յետ է դնում): Մտէ՛ք այստեղ, Անդրէաս Ելիզարարովի ձեռքից Գարբէլ Հրեշտակապետն էլ չի կարող ձեզ ազատել: Է՛, այժմ ումիցն եմ վախենում, Իմ աղջկանից:

ՍԱՂ. Եւ երբեք քեզ չի մասնիլ:

ԱՆԴՐ. (Ցնցուելով, բանալի շտապով գրասեղանի վրայ): Ահ, ոտքի ձայն լսեցի: Տես, ով է գալիս: Պէտք է սառնարիւն լինել...
ՍԱՂ. (Մօտեցել է նախասենեակի դուռերին, բաց արել ու նայել): Եւ է: (Դեպի նախասենեակ): Հաւեցէ՛ք... (Յետ է փաշում, գրուխ սարով Օքարեւ ին):

ՏԵՍԻԼ V.

Ն Ո Յ Ն Ք Ե Ի Օ Թ Ա Ր Ե Ա Ն :

ՕԹԱՐ. (Ներս է մտնում սենեակիս դեմքով, գրուխ է սալիս Անդրէասին, անուշադիր բողկելով Սաղաթէլին: Վերադառնալով է): Ներեցէք, որ ձեզ անհանգստացնում եմ, Ասացէք, ի սէր Ասածու, ի՞նչ է պատահել ձեր տանը: Ինձ ստացին, որ մայրիկն ու օրիորդ Մարգարիտը յանկարծակի հիւանդացել են:

ԱՆԴՐ. Շնորհակալ ենք, պարոն, որ այդպէս մտածում ես մեր մասին: Բայց մեր տանը հիւանդ չըկայ: Ուրի՞շ:

ՕԹԱՐ. Պարոն Անդրէաս, ես գիտեմ, որ ամէն բան արդէն յայտնի է ձեզ: Չեմ թագցնիլ, ինձ համար Մարգարտի առողջութիւնը թանգ է: Ահա երրորդ անգամն է այսօր դալիս եմ, ինձ չեն ընդունում. ասելով թէ հիւանդ է: Այդ ինձ վախեցնում է: Անկարելի է, որ Մարգարիտը թեթեւ տկարութեան պատճառով ինձ չընդունի: Անշուշտ նա շատ ծանր հիւանդ է:

ԱՆԴՐ. (Հեղնաբար) Սաղաթէլ, լսո՛ւմ ես: Մարդը տանջւում է: Հանգիստ կաց, պարոն, իմ աղջիկը հիւանդ չէ, միայն երեւի չի ուզում քեզ ընդունել, Սաղաթէլ, կարծեմ, ժամանակ է կուր գնալու:

ՍԱՂ. Ի հարկէ: (Նշան եւ անուն Անդրեասին, որ խոսակաւն պահի):

ԱՆԳՐ. Է՛, մնաս բարով, պարոն սիրահար: Մեզ ներքեր, գործ ունինք: Եթէ ուզում ես, կարող ես նստել, հանգստանալ, Բագրատը տանն է, կարելի է նա քեզ ընդունի: (Անցնում եւ բեւի խորհրդու զնայող հասնում):

ՕԹԱՐ. (Չարնացած, մի քանի վայրկեան շուռ դիտելով եւ կրակ): Չարմանալի է, բոլորովին անհասկանալի...

ԱՆԳՐ. (Մտնելուց յար ժամացոյցին) Ի՞նչն է զարմանալի, պարոն փրկիսփայ:

ՕԹԱՐ. Ձեր խօսակցութեան եղանակը, ձեր դէմքի հեղինական արտայայտութիւնը, ձեր սառնութիւնը:

ԱՆԳՐ. (Տախմախով) Բաս ի՞նչպէս կը հրամայես խօսել, ազաս, հըր: Ուզում ես, որ վիզս ծռեմ, վախենամ, աղաչեմ, պաղատեմ: (Լուրջ եւ խիստ) Հերիք է: Դու չըհասկացար պատիւդ: Ես խոնարհուեցի քրիստոնէաբար, դու զԸԼԽիս նստեցիր: Համբերութիւնն էլ չափ ունի: Այժմ կարող ես գնալ, ուր ուզում ես. իմ տան դռները քեզ համար փակ են:

ՍԱՂ. (Առանձին Անդրեասին) Մի՛ տաքանար, լաւ չէ:

ՕԹԱՐ. (Յուզուած եւ սպառնալով) Յուզուած եւ սպառնալով մի քանի վայրկեան շուռ նստում ե): Ահա թէ ինչ: Ուրեմն, կաշկանդուած լեզուի կապերը քանդուե՞լ են: Ուրեմն, երեկուայ օրն այստեղ մոռացուե՞լ է: Այսօր իմ առջեւ փակում էք այն դռները, որոնց երէկ բաց էիք անում կրօնգնորի՞ վրայ: Ասացէք, պարոն Անդրէաս, դուք ինձ ուզում էք վիրաւորել իսկապէս, թէ՞ կատակ էք անում:

ԱՆԳՐ. Ես գեաղա-գիւղաների հետ կատակ չեմ անում:

ՍԱՂ. Անդրէաս, Անդրէաս... .

ԱՆԳՐ. (Վրդովուած) Թո՛ղ ինձ, բաւական է ինչքան երես տուեցի լակոտի մէկին:

ՕԹԱՐ. (Կասալի) Պարո՛ս...

ԱՆԳՐ. Գոռա՛, որքան ուզում ես: Չայնդ եօթերորդ երկինք կը բարձրանայ, Բայց Աստծուն չի հասնիլ: Շարունակիր էլի, ինչո՞ւ ես լռել: «Դուք ինձ օգնելով, ինձ վի-

րաւորել էք: Ես ինքնասէր մարդ եմ, տանջուել եմ: Դուք իմ փողերով էք ինձ որդեգրել: Ձեր հարստութեան կէսն ինն է: Տուէք»: Անպատկա՛ռ, Ահա վեց ամիս է ես զրկուել եմ իմ հանգստութիւնից, քնից, ախորժակից: Քո տարածած սուտ լուրերը տանջում էին ինձ գիշեր-ցերեկ: Քո պատճառով մարդիկ սկսել էին ինձ համարել գող եւ քիչ էր մնում երեսիս թքէին: Քառասուն տարուայ մէջ աշխատած անունս ու պատիւս ոտնատակ էին լինում: Այժմ... . այժմ բաւական է: Դու սպառնում ես ինձ դատի՞ կանչել: Համեցէ՛ք, ճանապարհը բաց է, կարող ես գնալ: Իսկ իմ տան դռները փակ են քո առջեւ եւ յաւիտեան չեն բացուիլ:

ՍԱՂ. (Մեկրաւի) Այս մարդն ինքն իւր գործը փչացնելու է:

ՕԹԱՐ. (Լսելով մեր զարնացումը, մեր փրդովուելով, մեր խոսակցութիւնը): Եւ այդ համարձակ լեզուով խօսողը Անդրէաս էլիզարեանն է: Նա՛, որ աշխատում էր ինձ մի քանի հազար ուրբով կաշտուել, որպէսզի ես հրաժարուի՞մ իմ արդար պահանջից: Դուք ինձ մինչեւ անգամ ծաղրում էք: Դուք ինձ վանդում էք ձեր տնից, ինչպէս՝ մի փողոցային սրիկայի՞: Ինչո՞ւ: Որովհետեւ ես մինչեւ այսօր ինչպե՞լ եմ ձեզ յանուն ձեր աղջկայ օրո՞յն: Ասացէ՛ք, այդ ինչ կերպարանափոխութիւն է: Ո՞վ կամ ի՞նչը ձեզ ազատեց երէկուայ ողորմելի դրութիւնից: Ո՞վ ներշնչեց ձեզ այդքան քաջութիւն:

ԱՆԳՐ. Ես քո սպառնալիքներից մազի չափ չեմ վախեցիլ:

ՕԹԱՐ. Սուտ էք ասում, պարոն: Դուք ինքներդ այս րոպէիս խօստովանեցիք, որ ես ձեզ զրկել եմ քնից ու հանգրստութիւնից: Կընչանակէ, դուք համոզուած էիք, որ ձեր հանսգտութիւնն ինձանից է կախուած: Չգում էիք, որ բաւական է ես ցանկանամ, եւ դուք կըսողաք իմ ոտները տակ:

ԱՆԳՐ. Լի՛բբ... . (Յարձակուելով փրկել):

ՍԱՂ. (Միջ ընկելով) Անդրէաս, Անդրէաս. (Լուրջ):

ՕԹԱՐ. (Բոռնցկեղ ստրկելով, ուզեցել յարձակուել, բայց զայդ եւ խոսակ): Ոչ ոչ, չըպիտի խելագարուել. Պէտք է իմա-

նալ ինչ է անցել այստեղ: Ես ոչինչ չեմ կարող ասել: Զարկաւոր է տեսնուել Մարգարտի հետ: Նա ինձ կ'ափճը՝ մարտութիւնը: Երկուսից մէկը—կամ ես խարուած եմ այդ աղջկանից կամ այս մարդը մի զարհուրելի չարագործ է: Մարգարիտը կը բացաչրի գաղտնիքը: Նա պարտաւոր է բացաչրել: Ես նրան հաւատացել եմ ինչպէս երկնային դատաւորի: Ես կրտսեմուեմ նրա հետ թէկուզ մահուան անկողնում լինի: (Քայլերն ուղղուած է դեպի նախասնեակ):

ԱՆԴՐ. (Սաղաթիղի) Հրամայի՛ր ծառաներին, որ ներս չըթողնեն նրան:

ՅԹԱՐ. (Կակց առնելով) Զգուշացէ՛ք, պարոն, ապա թէ ոչ՝ ձեզ հետ կը կորչի և ձեր աղջիկը: (Ծտայով ակցնում է նախասնեակ):

ԱՆԴՐ. (Բարձր ձայնով) Վարդա՛ն: Դո՛ւրս արէք նրան, դո՛ւրս: (Դիմում է նախասնեակի կողմ):

ՍԱՂ. (Բռնում է նրա թւից): Համբերի՛ր. մարդ Աստծու, համբերի՛ր: Լաւ մտածիր, ինչ ես անում:

ԱՆԴՐ. (Մի կերպ ուշի գայով) Ծշմարիտ ես ասում, ես չըպիտի տաքանայի: Թող ինքը փրփրէր: Բայց ի՞նչ անեմ: Հոգիս բերանս է բերել: Տես, որտեղ գնաց:

ՍԱՂ. (Նայում է նախասնեակի դուրսով) Դո՞նեք բաց արին: Բազրատը խնդրում է նրան ներս մտնել:

ԱՆԴՐ. Ի՞նչ պիտի անենք, եթէ Մարգարիտը յայտնի նրան:

ՍԱՂ. Վկան ես չե՛մ, մարդ Աստծու, ոչ տեսել եմ, ոչ լսել:

ՏԵՍԻԼ VI.

ԱՆԴՐԷԱՍ, ՄԱՐԳԱՐԻՏ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ:

Յեռոյ առանց Սաղաթիղի:

ՄԱՐԳ. Դուրս է գալիս ձախից եւ կակց է ստնում դուրսի սուղն: Գուհուս է, դեմքի վրայ երեւում եւ ակնուրբեան եւ հոգեկան սուղանկերի հետքեր:

ԱՆԴՐ. Տեսնելով նրան, ուժգին ցնցում է, բայց եւ արագաբեւեռ իշխում է իրան:

Մի քակի վայրկեան պնսկերաւոր լուրջիւն:

ԱՆԴՐ. Կակցնում է թեմի մեջտեղում:

ՄԱՐԳ. Կակցնում է ձախ դուրսի մոտ եւ չի նայում հոր:

ՍԱՂ. Անցել է թեմի այ կողմը եւ տեսնում է ստնուած նայում է սուսաստիկ:

ՄԱՐԳ. (Ուզում է խուսել, բայց ներում է Սաղաթիղի ներկայութիւնից): Քեռի, մայրիկը կարծեմ ուզում էր քեզ տեսնել:

ՍԱՂ. (Մեկրախ) Ցանում է ինձ: (Հանդարտ փայլելով ակցնում է այնքան դեպի ձախ եւ դուրս է գալիս ձախ դուրսով: Ծաւնայարհիկ յաստի վրայ՝ տեսնելով ինչ-որ բան, վերցնում է եւ դնում Բագրուսի սեղանի վրայ):

ՄԱՐԳ. Սաղաթիղի նախապարհի դուրսով, դուրս է ետեւից ծածկում է:

ԱՆԴՐ. Լսեցի, որ հիւանդ ես, ինչո՞ւ ես վերկացել:

ՄԱՐԳ. (Այնքան կրկնում է իւր մտքով, որ գրեթէ չի շում նրան): Հայրիկ, նա եկաւ ինձ տեսնելու, չըկարողացայ նրան ընդունել: Երբորդ անգամս է գալիս է այսօր, ես փախչում եմ նրանից: Հայրիկ, տո՛ւր ինձ միջոց նրան պարզերես հանդիպելու:

ԱՆԴՐ. Չեմ հասկանում, ինչ ես ուզում ինձանից:

ՄԱՐԳ. (Դողդոջուն ձայնով, բայց հաստ) Ազնուութիւն:

ԱՆԴՐ. Ես այն եմ, ինչ-որ կամ, ոչ աւելի, ոչ պակաս: Դու չես կարող ինձ խրատել:

ՄԱՐԳ. Մի՛ տանջիր ինձ, հայրիկ, ես չեմ կարող դեմանալ քո անպատուութեանը:

ԱՆԴՐ. Եթէ անպատու բան էր, ինչո՞ւ ինձ ստիպեցիր անել:

ՄԱՐԳ. Ես ուզում էի անունդ խայտառակութիւնից ազատել:

ԱՆԴՐ. (Դառն հեզնակալն ծիծաղոյ) Ազատե՞լ: Ոչ, ընդհակառակը, դու ուզում էիր ինձ աւելի խայտառակել: Դու ուզում էիր ինձ զոհել քո... սիրականին:

(Վերջին բառը արտասուում է վիրաւորական շէշով):

ՄԱՐԳ. Հայրիկ, մի՛ ասա այդ բանը, մի՛ ասա:

ԱՆԴՐ. Ինչպէս չասեմ: Նրան ճանաչելու օրից հարազատ ծնողիդ մոռացել ես: Նրա մի համբոյրը քեզ համար աւելի թանկ է քան իմ պատիւը:

ՄԱՐԳ. Նրդում եմ մեր դերդաստանի անունով, որ սխալում ես: Չեմ թագցնում, ես սիրում եմ Օթարեանին: Բայց քո պատիւն աւելի եմ սիրել, որովհետեւ իմ ծնողի ազնուութիւնն աւելի բարձր է ինձ համար, քան իմ երջանկութիւնը:

ԱՆԴՐ. Սո՛ւս, անամօթ, մի՛ համարձակուիր մօտս խօսել քո սիրոյ մասին: Ես շատ լաւ գիտեմ, որ դու ուզում էիր ինձանից խլել հարստութիւնս, տալ այդ գեաղային, որ յետոյ միասին աւելի՛ փառաւոր ապրէիք: Դո՛ սօխաբ քեզ քիչ էր թւում:

ՄԱՐԳ. Կարող եմ երգուել, հայրիկ, որ ինքդ էլ չես հաւատում քո ասածին: Դու շատ լաւ գիտես, որ ես երբեք քո հարստութեան վրայ աչք չեմ ունեցել:

ԱՆԴՐ. (Ծաղրով) Ի հարկէ, դու այս աշխարհից չես, քեզ մայր չի ծնել: Բաւական է, դու սիրտ չունիս, դու ատում ես ինձ, դու իմ թշնամին ես:

ՄԱՐԳ. Շատ լաւ, թող այդպէս լինի: Բայց մի օր կը համոզուես, որ ոչ ոք քեզ չի սիրել այնչափ, որչափ ես:

ԱՆԴՐ. Ինչո՞ւ ես եկել գլխիս, ասա կարճ, կտրական:

ՄԱՐԳ. Յե՛տ տուր ինձ այդ թղթերը, յե՛տ տուր:

ԱՆԴՐ. (Կծու ծիծաղ): Հա հա հա, յե՛տ տուր: Անդրէաս էլիզբարով, լսո՞ւմ ես, տուր սուրբ թշնամուդ ձեռը, վիզք ծոխր, որ նա կտրէ: Չէ, որդի, փառք Աստծու, դեռ չեմ գժուել:

ՄԱՐԳ. Հայրիկ, մի՛ ծաղրիր իմ տանջանքը, ես չեմ կարող դիմանալ:

ԱՆԴՐ. (Եղանակը փոխելով) Ի՞նչ թղթեր ես ուզում, աա՞, ի՞նչ թղթեր: Ես ոչ մի թուղթ չեմ տեսել, չեմ ունեցել և չունիմ, դնա՛ բանիդ:

ՄԱՐԳ. (Ձեռները ջարդելով) Սասուած իմ...:

ԱՆԴՐ. Այո, դու երազ ես տեսել, ուրիշ ոչինչ...:

ՄԱՐԳ. Կեանքս կրտայի եթէ երազ լինէր: Երբ ես լսեցի բանալիների ձայնը, արթնացայ և լուսամտի թոյլ լուսով տեսայ քո ահեղ կերպանանքը, չըհաւատացի աչքերիս: Մի քանի րոպէ, սարսափից քարացած, դիտում էի արարքդ: Ախ, այն ի՞նչ վայրկեան էր, երբ դու հեռացար վախկոտ քայլերով և ես հետեւեցի քեզ: Այնտեղ, դահլիճում, քո սարսափած դէմքի վրայ կարդացի իմ դատաւճիտը: Դա ինձ համար կայծակի հարուած էր: (Երեսը դարձնելով աշխատում է արտասուել զայն):

ԱՆԴՐ. Երազ չէ. բաս ինչ է: Երէկ ամբողջ գիշերը ես տանը չեմ եղել: Քեռիդ վկայ է...:

ՄԱՐԳ. Հայրիկ, եթէ ինձ չես խնայում, խնայիր քեզ: Սիրտս վկայում է, որ այդ թղթերը պէտք է քո գլխին մի փորձանք բերեն:

ԱՆԴՐ. Դէ, հերիք է, համբերութիւնս մի՛ կտրիր, ես սկսում եմ կատաղել:

ՄԱՐԳ. Աա, այլ ես քո սպառնալիքներից չեմ վախնում: Իմ ամենամեծ պատիժը երէկուայ քո արածն էր:

ԱՆԴՐ. (Կասաղած) Դէ դո՛ւրս, դո՛ւրս, անպատկառ: Դու կարող ես ինձ որդեսպան դարձնել:

ՄԱՐԳ. Հայրիկ, մի՞թէ չես մտածում, որ ես կարող եմ քո գողութիւնը պատմել բոլորին, առանց քեզ խնայելու:

ԱՆԴՐ. Մինչեւ բերանդ բաց անելը, ես այդ յանդուգն լեզուդ տակահան կ'անեմ և կըչարտեմ շներին: Դէ՛ն, կորի՛ր, քանի որ ստտանան ինձ չի յողթել:

ՄԱՐԳ. (Յուսաւիս) Աստուած իմ, ի՞նչ անեմ: Նա սիրտ չունի: Հայրիկ, սիրելի թանկագին ծնող, տո՛ւր ինձ այդ թղթերը: Այսօր ես պարտաւոր եմ նրանց վերադարձնել իրանց տիրոջը: Ես ազնիւ խօսք եմ տուել: Նա այնտեղ:

հիւրանոցներու սպասում է: Ես փախայ նրանից, ինչպէս
գող: Տո՛ւր, եթէ մաղի չափ յարգում ես քո աղջկայ պատիւը:
ԱՆԴՐ. Անէ՛՛ճ ք քեզ, չար Սաղայէլ: Ասում եմ քեզ,
որ իմ մօտ ոչինչ չըկայ:

ՄԱՐԳ. Հայրիկ, դու ինձ լաւ չես ճանաչել: Ես քիչ եմ
խօսել, բայց շատ եմ մտածել և զգացել: Ես պատրաստ
եմ կեանքս զոհել պատուիդ համար, բայց պատիւս արտա-
ւորել հարստութեանդ համար—չեմ կարող, անզօր եմ: Դու
պէտք է ազատես ինձ խայտառակութիւնից: Այդ քո պարտքն
է, որովհետեւ դու հայր ես: Տո՛ւր ինձ իմ պատիւը, ես
առանց պատուի մի ժամ անգամ ապրել չեմ կարող:

ԱՆԴՐ. (Աստուծոյ կրօնեղբայր) Հեռացի՛ր, աղջիկ, արիւնս
գլխովս է տալիս:

ՄԱՐԳ. Ոչ, չեմ հեռանալ, մինչեւ որ չըստանամ այդ
թղթերը: Զրկիր ինձ մի կտոր հացից, վանդիք փողոց: Ես
պատրաստ եմ քո վերջին գործակատարի ազատիւնը դառ-
նալ, պատրաստ եմ դոնէ դուռն ընկնել, ողորմութիւն մու-
րալ, բայց գող հուշակուել, ոչ, այդ չեմ կարող: Նա ազնիւ
է, նա ինձ էլ ազնիւ է համարում: Նա իմ մասին շատ մեծ
գաղափար ունի: Եւ յանկարծ գող նրա աչքով: Ոչ, ոչ,
հայրիկ, դու բարի ես, խելօք ես, դու այդ թոյլ չես տայ:
Տե՛ս, հայրիկ, ես չօքում եմ քո առջեւ: (Զոբուն է) Խղճա՛
ինձ, խնայի՛ր ինձ: Քեզանից է կախուած իմ կեանքը: Լա՛ւ
լսիր, կեանքս եմ ասում, Մի՛ արա, հայրիկ, այդ բանը.
մի՛ արա, գողութիւնը սոսկալի յանցանք է:

ԱՆԴՐ. (Կռուել է ինքն իւր հետ): Վեր կաց, ամօթ է,
նեքս կրմտնեն, կըտեսնեն:

ՄԱՐԳ. Ոչ ոչ, ես վեր կըկենամ միայն պատիւս յետ
ստացած: Տեսնո՞ւմ ես, խիղճդ արդէն տանջում է քեզ:
Մի՛ դարձնիր երեսը, երդում եմ, երբեք քեզ չեմ դատա-
պարտիլ, երբե՛ք, ոչ մի խօսքով, ոչ մի ակնարկով: Կըպա-
պանձուեմ և կը յարգեմ քեզ առաջուայ պէս: Ես գիտեմ,

որ դու մայրուել ես և այժմ զղջում ես: Հայրի՛կ, աուր
ինձ այդ թղթերը:

ԱՆԴՐ. (Վճռական շարժումով և սևում եւ վեր կենում):
Հողի՞՞ բերանս բերեցիր: (Մօտենում է գրասեղանին, արագ բաց
է սևում արկղը եւ ծարր հսկում):

ՄԱՐԳ. (Ուրսիսացած ոտի կակղկերով) Ահ, ես գիտէի,
որ դու բարի ես, որ քո չարութիւնը կեղծ է: Շնորհակալ
եմ, հայրիկ, դրանով դու ազատում ես ոչ միայն պատիւս,
այլ և կեանքս...

ԱՆԴՐ. Հը՛մ, ձե՛ռք վերցրու: Ես մի հարուածով վերջ
կըտամ ամէն բանի: Ի՛նչ արած, դու յամառ ես: (Թղթերը
պահում եւ ձգում է շտաւի): Ահա նրանց տեղը:

ՄԱՐԳ. Քարասի՛րտ, այդ ի՛նչ ես անում: (Ճշարով յար-
ձակում է, որ խակարի):

ԱՆԴՐ. (Զի քողմում նրան շտաւակին մօտենալ): Կա՛ց,
եթէ ոչ քեզ էլ կըգցեմ այնտեղ: Ահ, վերջապէս, ազատ-
ւում եմ ձեզանից: Վառուեցէ՛ք, մոխի՛ր դարձէք, դուք
չատ էք այրել իմ սիրտը:

Կոխ երկունսի մեջ:

ՄԱՐԳ. Թո՛ղ ինձ, թո՛ղ ինձ: Դու ինձ ես այրում.
ինձ: Բա՛ց թող, բա՛ց թող: (Ուզում է կծոնել իր ձեռները):
Ահ, ես թուլանում եմ, ոչ՛՛ չունիմ: Լսի՛ր, ես կըգոռամ,
կըկանչեմ բոլորին այստեղ, որ տեսնեն քո առաքակութիւնը:
Թո՛ղ: (Ազատելով իր ձեռքից, մօտենում է շտաւակին) Ահ,
այլեւս ուչ է: Այրուեցին, կորաւ ամէն ինչ: (Բարձրաձայն)
Այստե՛ղ եկէք, Ռօզալիա, Բագրատ, ամէնքդ եկէք, տեսէք
ինչ է կատարւում այստեղ: Հայրն այրեց իւր աղջկայ պա-
տիւը: Ահ, կորաւ ամէն ինչ: (Թուրացած ընկնում է արտի
վերայ: Լուսիկ: Բայց թող այդպէս լինի: (Բայտերն ուղղում է
դիպի ձախ դուրսը: Հանդիպում է Օրստակին, որ գալիս է
նոյն դուրսից, ցնցում է եւ սկսած մ ում):

ԲԱԳՐ. Նեսու է սևում նոյն դուրսից Օրստակից քիչ յետոյ:

ՏԵՍԻԼ VII.

ՆՈՅՆՔ, ՕԹԱՐԵԱՆ ԵՒ ԲԱԳՐԱՏ

ԱՆԴՐ. Ձեռները մեղքին դրած, կանգնած է դեպի ձախ:

ՕԹԱՐ. Վերջապէս, տեսայ քեզ: Դու հիւանդ չես և փախչում ես ինձանից: Լսի՛ր, հայրդ ինձ անպատիւ արաւ և դուրս վռնդեց իւր սնից: Ես համարուում եմ ստոր մարդ, որ ուղեցել եմ խաբեբայութեամբ կորզել նրա հարստութիւնը: Յո՛յց տուր նրան իմ թղթերը: Յո՛յց տուր իսկոյն, ես այսպէս եմ կամենում: Ես ստորացած եմ, անպատուած: Յո՛յց տուր այդ ապացոյցները:

ՄԱՐԳ. Լուռ, գունուս, դողդոջուն եւ սելչարժ կանգնած է պահի սակ:

ՕԹԱՐ. Ահա և՛ եղբայրդ: Այժմ նա ուրիշ լեզուով է խօսում: Այստեղ ժարդկանց դերերը փոխուել են: Երէկ հայրդ էր ուզում ինձ կաշառել, այսօր—եղբայրդ: Գոնէ բացադրիր, ինչ է պատահել: (Լուռփուն) Աա, դու լռո՞ւմ ես, ձայն չե՞ս հանում, կանգնած ես դատապարտեալի պէ՞ս: Երբու՞մ եմ հօրս հարստահարուած գերեզմանով, կամ դուք էք խելագարուել կամ ես: (Մարգարիտին) Ասա՛, այդ ի՞նչ դաւադրութիւն է: Չէ՞ որ ես քեզ ընտրեցի դատաւոր: Ո՞ւր են իմ ապացոյցները: Իե՛ր այստեղ:

ՄԱՐԳ. (Երկար սասանուէրով) Չըգիտեմ:

ՕԹԱՐ. Դէհ, լսո՞ւմ ես, Մարգարիտ, գնա, բեր այն թղթերը:

ՄԱՐԳ. (Մտեղային ստուևոքեալք) Ես այրեցի այն թղթերը: Ահա այնտեղ: (Յոյց է արթն փառարանը, երկարատեւ, ասնջանիով յի մի հայեացք է ձգում հօր վրայ եւ քոյլ քայլերով հեռանում է ձախ դռներով):

ՕԹԱՐ. } Միսմանակ մոտեմուտ եւ փառարանին:
ԲԱԳՐ. }
ԲԱԳՐ. Նայում է, փախում է փառարանի դռներէ եւ ուրախօրթն արտայայտում:

ՏԵՍԻԼ VIII.

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ՄԱՐԳԱՐՏԻ:

Յեկոյ Սաղաթիկ եւ Սուրեն:

Պատկերաւոր տեսարան:

ՕԹԱՐ. (Ապշած նայում է մերթ մեկիկ, մերթ միւսիկ): Այրե՛լ է: Ուրեմն, այդ մի որոգա՞յթ էր ինձ համար: Մարգարիտը դաշնակից մի աւազակի՛: Ոչ, այդ անկարելի բան է: Կասկածել նրա ազնուութեան մասին, կը նշանակէ հայհոյել սրբութիւնը: Նա սուտ ասաց: Նա իրան զրպարտեց: Այստեղ մեղաւորն ուրիշ է: (Անորհասիկ) Արդարացրէք ձեր աղջկան, ապա թէ ոչ՝ ես նրան կը վիրաւորեմ:

ՍԱՂ. Ներս է մեկում ձախ դռներից:

ԱՆԴՐ. Սաղաթէլ, գնանք կըուբ: (Քայլերը ուղղում է դեպի նախասենեակ):

Բեւի ետեից ըսում է ասրճանակի պայքիւն:

ԲՈՂՈՐԸ Յնցում եւ:

ՍԱՂ. Այդ ի՞նչ էր: (Վազում է յիս ձախ դռներով):

ԲԱԳՐ. Հեռում է Սաղաթիկին:

ԱՆԴՐ. } Քարացիկ եւ:
ՕԹԱՐ. }

ՍՈՒՐ. (Ներս է փագում ձախ դուրից գունարափում :
Տասանում է : Լոռքիւն) : Մարգարիտն իրան սպանեց :

ԱՆԴՐ. (Մոնջում է, ձեռք զարկելով գլխին) : Ահ, որ-
դեպան :


ՕԹԱՐ. Աա, այդ դո՞ւ ես այրել : Գազան : (Ուզում է
շարձանքեղ Անդրեասի վրայ) :

ՍՈՒՐ. (Մէջ է ընկնում) Կա՛ց, նա արդէն պատժուած է :
(Նայում է հորը կասաղութեամբ եւ զգուսնփով) :

ՕԹԱՐ. Մարգարի՛տ, Մարգարի՛տ : (Հեկեկալով փագում է
դիպի ձախ եւ անզօրացած յենում դուրիին) :

Վարագոյրն իջնում է հանդարտ

1904 թ. Յունիս : Կօջօր :



«Ազգային գրադարան»



NL0356528

48370